Դասընթացի նպատակն է բացահայտել միջնադարյան առևտրատնտեսական բաղկացուցչի և կապիտալի համաշխարհային ընդլայնման գործընթացը: Ներկայացնել Եվրոպայում (Գերմանիա, Շվեյցարիա) հումանիստական և ռեֆորմիստական շարժումների զարգացումը և ընթացքը, դրանց ազդեցությունը հա-

սարակական-քաղաքական պատմության վրա: Նշել վերաճնդի օրինաչափությունները, վերաճնդի իրողությունները և աշխարհի պատկերի ընդլայնման իրողությունը: Ներկայացնել առաջին բուրժուական հեղափոխությունը Եվրոպայում (Նիդեռլանդներ) և նրա նշանակությունը: Ներկայացնել համաեվրոպական առաջին խոշոր հակամարտությունը (Երեսնամյա պատերազմ) և միջազգային հարաբերությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհասկանա վերաճնդի արմատական փոփոխությունների քաղաքա-կրթական բովանդակությունը, քաղաքային կյանքը, աշխարհիկ գիտելիքները, ռեֆորմացիան.
2. կհասկանա նոր աշխարհընկալման ընդլայնումը.
3. կհասկանա նիդեռլանդական բուրժուական հեղափոխության նշանակությունը Եվրոպայում բուրժուա-դեմոկրատական կարգերի ձևավորման առումով.
4. կհասկանա միջազգային իրավիճակի սրումը Եվրոպայում, հակասությունների հետևանքները ուշ միջնադարում.
5. կկարողանա ցույց տալ միջնադարյան քաղաքակրթության աստիճանական քայքայումը և անցումը դեպի նոր արդյունաբերական հասարակության:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Կապիտալիստական հարաբերությունների առաջացումը Արևմտյան Եվրոպայի երկրներում: ***Թեմա 2՝*** Աշխարհագրական մեծ հայտնագործությունները 15-րդ դարի վերջին և 17-րդ դարի սկզբին: ***Թեմա 3՝*** Գերմանիան 16-17-րդ դդ.: ***Թեմա 4՝*** Ռեֆորմացիան Շվեյցարիայում: Հակառեֆորմացիան Եվրոպայում: ***Թեմա 5՝*** Իսպանիան 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին: ***Թեմա 6՝*** Նիդեռլանդական հեղափոխությունը: ***Թեմա 7՝*** Իտալիան 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին: ***Թեմա 8՝*** Անգլիան 16-րդ դարում: ***Թեմա 9՝*** Ֆրանսիան 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին: ***Թեմա 10՝*** Սկանդինավիան 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին: ***Թեմա 11՝*** Միջազգային հարաբերությունները 17-րդ դարի առաջին կեսին: Երեսնամյա պատերազմը (1618-1648թթ.):

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

0303/B04. «ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (9 ժամ դասախոսություն, 3 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, առանց եզրափակիչ գնահատման
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել մարդու հոգեկան երևույթների առանցքային օրինաչափություններին ու մեխանիզմներին, ինչպես նաև նպաստել իրենց ապագա մասնագիտական իրացման մեջ հոգեբանական գիտելիքների կիրառմանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հոգեբանության ընդհանուր դրույթները, հոգեկան գործընթացների և վիճակների առանձնահատկությունները և ձևավորման հիմնական օրինաչափությունները,
2. կկարողանա կիրառել հոգեբանական իմացությունը մասնագիտական մանկավարժական գործունեության մեջ, ինչպես նաև հասարակական կյանքում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հոգեբանության առարկան, խնդիրները, ոլորտները, հետազոտման մեթոդները: Հասկացություն հոգեկանի մասին: Հոգեկանի կառուցվածքը և ֆունկցիաները: Գիտակցություն, գործառույթները: **Թեմա 2՝** Գործունեություն, կառուցվածքը, հմտություններ, տեսակները: **Թեմա 3՝** Անձ, կառուցվածքը, զարգացման փուլերը: Անձի ակտիվության աղբյուրները: Միջանձնային փոխհարաբերություններ: Խումբ, տեսակները: Լիդեր, կառավարման ոճերը : **Թեմա 4՝** Ճանաչողական գործընթացներ: Զգայություն, տեսակները, հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները: Ըմբռնումներ, առանձնահատկությունները, տեսակները: Ուշադրություն, տեսակները, առանձնահատկությունները: Հիշողություն, տեսակները, գործընթացները: Խոսք, տեսակները, գործառույթները: Մտածողություն, տեսակները, ձևերը, գործընթացները: Երևակայություն, տեսակները, մեխանիզմները: **Թեմա 5՝** Հուզականային ոլորտ: Հույզեր և զգացմունքներ, տեսակները, հուզական վիճակներ Կամք, կամային հատկանիշներ, կամային գործընթաց: **Թեմա 6՝** Անհատական տիպոլոգիական առանձնահատկություններ: Խառնվածք, տեսակները, կենսաբանական հիմքերը: Բնավորություն, կառուցվածքը, բնավորության գծեր, տեսություններ: Ընդունակություններ, տեսակները, կառուցվածքը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում(թեսթ): Միավորների քայլը 0.5 է:

0301/B24. «ՈՌԻՍՄՍՍՍՆԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ»-1 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (15 ժամ դասախոսություն, 9 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է գիտա-ճանաչողական գործընթացի միջոցով ուսանողներին քաջատեղյակ դարձնել Ռուսաստանի պատմության պատմական անցյալին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. լիարժեք տեսական գիտելիքներ կունենա նշված ժամանակաշրջանի Ռուսաստանի պատմության մասին.
2. կհասկանա Ռուսաստանի խաղաղացած դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, ճիշտ պատկերացում կունենա ներկա զարգացումների մասին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Սլավոնական ցեղերից Արևելյան սլավոնների աշխարհագրական առանձնացումը: Ռյուրիկովյան դինաստիան և հին ռուսական Ռյուրիկյան պետության՝ Կիևյան Ռուսիայի կազմավորումը: ***Թեմա 2՝*** Ռուս-բյուզանդական առաջին պայմանագիրը: Դրեվլյանների ապստամբությունը և Օլգայի բարեփոխումները: Սվյատոսլավ մարտիկ-իշխանը և բալկանյան քաղաքականությունը: Կիևյան Ռուսիայի պետական կառուցվածքը: ***Թեմա 3՝*** Վլադիմիրը որպես մեծ իշխան. քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն: ***Թեմա 4՝*** Յարոսլավ Իմաստունի ժամանակաշրջանը (1019-1054թթ.): ***Թեմա 5՝*** Վլադիմիր Մոնոմախ (1113-1125թթ.): ***Թեմա 6՝*** Կիևյան Ռուսիայի քաղաքական մասնատումը: ***Թեմա 7՝*** Կիևյան Ռուսիայի կուլտուրան X – XIII դդ.: ***Թեմա 8՝*** Ռուսիան թաթար-մոնղոլական լծի տակ և դրա հետևանքները: ***Թեմա 9՝*** Հյուսիս-Արևելյան Ռուսիայի վերածնունդը և Մոսկովյան իշխանության ուժեղացումը (Իվան Կալիտա. 1325-1344թթ., Դմիտրի Դոնսկոյ. 1359-1389թթ., Վասիլի I. 1389-1425թթ., Վասիլի II. 1425-1462թթ.): ***Թեմա 10՝*** Իվան III. 1462-1505թթ.: Թաթար-մոնղոլական լծի թոթափումը և ռուսական կենտրոնացված պետության կազմավորումը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

0302/B15. «ԳՐԱԲԱՐ»-2 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (24 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հին հայերենի՝ գրաբարի ձևաբանական և շարահյուսական իրողությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գրաբարի ձևաբանական և շարահյուսական հատկանիշները.
2. կհասկանա գրաբար տեքստերը.
3. կկարողանա կատարել գրաբարյան բնագրերի ձևաբանական և շարահյուսական վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գրաբարի անվանական հոլովումը: **Թեմա 2՝** Գրաբարի դերանվանական հոլովումը: **Թեմա 3՝** Անձնական դերանունները և նրանց հոլովումը: **Թեմա 4՝** Ցուցական դերանունները և նրանց հոլովումը: **Թեմա 5՝** Ստացական և փոխադարձ դերանուններ: Հարցահարաբերական և անորոշ դերանուններ: Որոշյալ դերանուններ: **Թեմա 6՝** Ածական անուն. ածականների համեմատության աստիճանների կազմությունը: Թվականը գրաբարում: **Թեմա 7՝** Գրաբարի նախդիրները և նախադրությունները: Գրաբարի հոդերը: Գրաբարի շաղկապները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

0301/B13. «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-5 (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 7.5 ժամ (21 ժամ դասախոսություն, 9 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել համակողմանի և ամբողջական գիտելիքներ Հայաստանի Առաջին Հանրապետության քաղաքական, տնտեսական և մշակութային հիմնախնդիրների վերաբերյալ, ինչպես նաև պարզաբանել պատմագիտության մեջ գոյություն ունեցող իրարամերժ խնդիրները, ներկայացնել նորահայտ նյութերը և այլն:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ամբողջական և համակողմանի գիտելիքներ ձեռք կրերի Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնախնդիրների վերաբերյալ.
2. կկարողանա կատարել ճիշտ վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածական դասախոսություն. Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ.: **Թեմա 2՝** Անկախ պետականության ստեղծումը: **Թեմա 3՝** Հայաստանի Հանրապետության ներքին դրությունը: **Թեմա 4՝** Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը: **Թեմա 5՝** Հայկական հարցը 1919-1920թթ.: **Թեմա 6՝** Հայաստանի Հանրապետության անկումը: **Թեմա 7՝** Հայկական մշակույթը 1918-1920թթ. :

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

0301/B21. «ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» -1 (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 7.5 ժամ (21 ժամ դասախոսություն, 9 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է եվրոպական առաջատար երկրների պատմության մեկնությամբ ներկայացնել 17-ից 19-րդ դարերում արևմտյան աշխարհում լուսավորական գաղափարների ազդեցությամբ ընթացող սոցիալական, քաղաքական, մշակութային, տնտեսական նորացման գործընթացներին: Կքննարկվեն Վեսթֆալյան համակարգի ձևավորումը, առանձնահատկությունները և դերակատարները, քաղաքական-պետական միավորների տարատեսակները, ազգ-պետությունների ձևավորումն ու արդիականացման միտումները, բնութագրիչները, պետության գործառույթները և իշխանության իրականացման ոլորտները, ռազմական համակարգերի տարատեսակներն ու կազմակերպման փոփոխությունները, քաղաքական համակարգերի փոփոխման ձևերը, նոր ձևավորվող միջազգային հարաբերությունների համակարգում ուժերի հարաբերակցությունը, կոնֆլիկտների տարատեսակները, համագործակցության շրջանակներն ու մեխանիզմները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կըմբռնի արդիական պետության ձևավորման համատեքստը, ֆեոդալական հաստատություններից դեպի ներկայացուցչական հաստատություններ անցումը, հասարակության քաղաքական պասիվությունից անցումը դեպի ակտիվ մասնակցային նոր ձևերի և նորացման գործընթացի ծավալումը
2. կկարողանա ավելի խորը և համապարփակ ընկալել ու վերլուծել պատմական գործընթացները

3. կկարողանա արևմտյան պատմության հենքի վրա ըմբռնել արդի համաշխարհային քաղաքականության համատեքստում տեղի ունեցող քաղաքական և հասարակական փոփոխությունների տրամաբանությունը:

Բովանդակություն

Թեմա 1՝ Վեսթֆալյան համակարգի ձևավորումը: **Թեմա 2՝** Անգլիայում միապետական հաստատության առանձնահատկությունները: **Թեմա 3՝** Սոցիալական շերտերը, քաղաքական մշակույթի առանձնահատկությունները, պետական կառավարման վերափոխումները: **Թեմա 4՝** Ֆրանսիական հասարակության սոցիալական կառուցվածքը և պետական կարգը: Հեղափոխություն տերմինի ձևակերպումը, պետական-հասարակական ճգնաճամբի խորացումը, հեղափոխական կառավարման համակարգը: **Թեմա 5՝** Բոնապարտի վարչակարգը, արտաքին քաղաքականությունը և պատերազմները, հետպատերազմյան կարգավորումները Եվրոպայում: **Թեմա 6՝** Բուրբոնների վերականգնումը, Հուլիայան միապետությունը, Երկրորդ կայսրությունը: **Թեմա 7՝** ԱՄՆ-ի տարածքում գաղութների ձևավորումը և դրանց անկախացումը, ԱՄՆ-ում քաղաքական համակարգի ձևավորումը, դաշնային և նահանգային լիազորությունների սահմանազատման հիմնահարցերը: **Թեմա 8՝** Ավստրիական Հաբսբուրգների արտաքին քաղաքական առաջնությունները, Մարիա-Թերեզայի և Հովսեփ II-ի արդիականացման գործընթացը, կայսրության տնտեսական համապատկերը: **Թեմա 9՝** Ավստրո-հունգարական դուալիզմի ձևավորումը: **Թեմա 10՝** Պրուսիան և Գերմանիայի միավորումը: **Թեմա 11՝** Իտալիայի պետական-քաղաքական միավորները և միավորման գործընթացները, միավորված Իտալիայի պետական-քաղաքական կառուցվածքը: **Թեմա 12՝** Իսպանական կայսրության թուլացման ներքին պատճառներն ու աշխարհաքաղաքական իրողությունները: **Թեմա 13՝** Քաղաքական, սոցիալական, տնտեսական իրողություններն Իսպանիայում մինչ XIX դարի ութսունական թվականները: **Թեմա 14՝** Լեհաստանի պետական-քաղաքական կառուցվածքը, սոցիալ-տնտեսական իրողությունները, պետության թուլացման ներքին պատճառներն ու արտաքին քաղաքական միջավայրի փոփոխությունները, Լեհաստանի մասնատումները, լեհերի ազգային-քաղաքական կառույցներն ու ազատագրական պայքարը XIX դարում: **Թեմա 15՝** Արդյունաբերական հեղափոխության առաջնային ոլորտները, ֆինանսավորման աղբյուրները, քաղաքական վերնախավերի և սոցիալական շերտերի շահերը, մասնակցությունն ու շարժառիթները, ժողովրդագրական հիմնախնդիրները, գրագիտությունը, հանրային առողջապահությունը, գյուղատնտեսությունը, քաղաքային միջավայրի փոփոխությունները, հարկադրանքի և կապիտալի համահարաբերակցության մոդելները Եվրոպայում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

0301/B28. «ԱՄԻԱՅԻ ԵՎ ԱՖՐԻԿԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (27 ժամ դասախոսություն, 9 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել Ասիայի և Աֆրիկայի երկրների պատմությունը: Ներկայացնել Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների հասարակական-քաղաքական և մշակութային զարգացման առանձնահատկությունները միջին և նոր դարերում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կպատկերացնի ասիական և աֆրիկյան երկրների զարգացման առանձնահատկությունները.
2. կկարողանա ճշգրտորեն գնահատել ասիական և աֆրիկյան ժողովուրդների ունեցած ավանդը համաշխարհային պատմության մեջ:

Բովանդակություն

Թեմա 1՝ Ասիայի և Աֆրիկայի երկրների միջին դարերի պատմություն հասկացությունը և նրա տարածաժամանակային սահմանները: **Թեմա 2՝** Միջնադարյան քաղաքակրթության ակունքները: Ասիայի և Աֆրիկայի երկրների զարգացման առանձնահատկությունները և պատմական գործընթացներից հետմնալու պատճառները: **Թեմա 3՝** Ավատատիրական հասարակարգի ձևավորման և զարգացման շրջանը Ասիայի և Աֆրիկայի երկրներում Չինաստանը 1-14-րդ դ.դ.: **Թեմա 4՝** Ճապոնիան 5-17-րդ դ.դ.: **Թեմա 5՝** Հնդկաստանը 2-14-րդ դ.դ.: **Թեմա 6՝** Արաբական խալիֆայությունը. Ասիայի և Աֆրիկայի արաբական երկրները: **Թեմա 7՝** Իսլամի ներթափանցումը Ասիայի և Աֆրիկայի երկրներ: **Թեմա 8՝** Մոնղոլական պետության կազմավորումը և նվաճողական արշավանքները: Մոնղոլիան ֆեոդալական մասնատվածության ժամանակաշրջանում: **Թեմա 9՝** Չինաստանը 15-17-րդ դ.դ.: **Թեմա 10՝** Ճապոնիան 15-17-րդ դ.դ.: **Թեմա 11՝** Հնդկաստանը 15-17-րդ դ.դ.: **Թեմա 12՝** Արաբական երկրները Օսմանյան կայսրության տիրապետության ներքո: **Թեմա 13՝** Արևելյան Ասիայի և Աֆրիկայի զարգացման առանձնահատկությունները: **Թեմա 14՝** Ասիայի և Աֆրիկայի երկրները նոր պատմության սկզբին: Մեծ Մոնղոլի կայսրության ճգնաժամը և քայքայումը: **Թեմա 15՝** Հնդկաստանի գաղութացումը Անգլիայի կողմից: **Թեմա 16՝** Օսմանյան կայսրությունը նոր դարաշրջանում: **Թեմա 17՝** Չինաստանը Յին դինաստիայի իշխանության ներքո: **Թեմա 18՝** Ճապոնիան Տոկուգավայի սյոգունատի ժամանակաշրջանում: **Թեմա 19՝** Հնդկաստանի գաղութային նվաճման ավարտը և գաղութային շահագործումը 19-րդ դ. առաջին կեսին. **Թեմա 20՝** Չինաստանի գաղութացման սկիզբը. Տայվանիների գյուղացիական պատերազմը Չինաստանում: **Թեմա 21՝** Անգլիայի և Ֆրանսիայի գաղութային զավթողական պատերազմները Չինաստանի դեմ: **Թեմա 22՝** Օսմանյան կայսրությունը 19-րդ դարի ա-

առաջին կեսին: Ասիայի և Աֆրիկայի արաբական երկրները նոր շրջանում: **Թեմա 23**՝ Եվրոպական տերությունների Հասարակածային և Հարավային Աֆրիկայի գաղութային տիրույթները և պետական կազմավորումները 18-19-րդ դ.դ.: **Թեմա 24**՝ Անավարտ բուրժուական հեղափոխությունը Ճապոնիայում 1868 թ.: Ասիայի և Աֆրիկայի երկրները 1870-1918 թ.թ.: **Թեմա 25**՝ Ճապոնիայի վերածումը գաղութային տերության: Ճապոնիայի զարգացումը 19-րդ դ. վերջին երեսնամյակում: Ճապոնիան 1890-1914 թվականներին: Ասիան և Աֆրիկան 19-րդ դարի վերջին երեսնամյակում և 20-րդ դարի սկզբին: **Թեմա 26**՝ Հնդկաստանը 19-րդ դ. վերջին երեսնամյակում Հնդկաչինի թերակղզու պետությունները 19-րդ դարի վերջին երեսնամյակին և 20-րդ դարասկզբին /Վիետնամ, Կամբոջա, Լաոս, Սիամ, Բիրմա/: **Թեմա 27**՝ Կորեան 19-րդ դ. երկրորդ կեսին և 20-րդ դ. սկզբին: **Թեմա 28**՝ Արաբական երկրները 19-րդ դ. վերջին-20-րդ դ. սկզբին: Աֆրիկայի բաժանման ավարտը /19-րդ դ. վերջին երեսնամյակ – 20-րդ դ. սկիզբ/ Հարավային Աֆրիկայի գաղութային բաժանման ավարտը: **Թեմա 29**՝ Արևմտյան Աֆրիկայի և Կոնգո գետի ավազանի իմպերիալիստական բաժանումը: Տերությունների գաղութային քաղաքականությունը Արևելյան Աֆրիկայում: **Թեմա 30**՝ Չինաստանը 19-րդ դարի վերջին երեսնամյակում: Օսմանյան կայսրությունը 19-րդ դարի վերջին երեսնամյակում ասիական երկրները 1900-1914 թ.թ.: **Թեմա 31**՝ Ասիայի զարթոնքը: Օսմանյան կայսրությունը 1900 – 1914 թթ. Չինաստանը 1900 – 1914 թ.թ.: Հնդկաստանը 20-րդ դարի սկզբին: **Թեմա 32**՝ Ասիայի և Աֆրիկայի երկրները 20-րդ դարակզբին: Ճապոնիայի վերածումը գաղութային տերության: Ճապոնիան 20-րդ դարի առաջին կեսին. Ճապոնիայի գաղութային և տնտեսական հավակնությունները և դրա կրախը: **Թեմա 33**՝ 1905-1911 թթ. Իրանական հեղափոխությունը, Իրանի զարգացման առանձնահատկությունները: **Թեմա 34**՝ Հնդկաստանը Բրիտանական կայսրության մաս. Ազգային ազատագրական պայքարի վերելքը. Մ. Գանդի, Ջ. Ներու: Ասիայի և Աֆրիկայի երկրների զարգացման հիմնական միտումները 20-րդ դարում: **Թեմա 35**՝ Հասարակածային և հարավաֆրիկյան երկրները 20-րդ դարի առաջին կեսին: Արաբական երկրների զարգացման հիմնական միտումները 20-րդ դարի առաջին կեսին: **Թեմա 36**՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքները ասիական և աֆրիկյան երկրների վրա: **Թեմա 37**՝ Ազգային ազատագրական շարժումների վերելքը Ասիայի և Աֆրիկայի երկրներում: Աֆրիկայի տարին: **Թեմա 38**՝ Հեռավոր Արևելքի երկրները 20-րդ դարի երկրորդ կեսին: Գաղութատիրական համակարգի ազդեցությունը երրորդ աշխարհի երկրների հասարակական քաղաքական զարգացումների վրա: **Թեմա 39**՝ Սոցիալիստական և լիբերալ արժեհամակարգերի առանձնահատկությունները երրորդ աշխարհի երկրներում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

0301/B25. «ՌՈՒՄՍՍՍՆԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ»-2 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (15 ժամ դասախոսություն, 9 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է գիտա-ճանաչողական գործընթացի միջոցով ուսանողներին քաջատեղյակ դարձնել Ռուսաստանի պատմության պատմական անցյալին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. լիարժեք տեսական գիտելիքներ կունենա նշված ժամանակաշրջանի Ռուսաստանի պատմության մասին.
2. կհասկանա Ռուսաստանի խաղացած դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում.
3. հստակ պատկերացում կկունենա ներկա զարգացումների մասին, կկարողանա կատարել ճիշտ հետևություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Իվան IV-ի (Ահեղի) գահակալությունը և բարեփոխումները: Արտաքին քաղաքականությունը: **Թեմա 2՝** Ռյուրիկովյան դինաստիայի ընդհատումը և Բորիս Գոդունովի ներքին և արտաքին քաղաքականությունը: Խռովության և խառնակության շրջանը: Գյուղացիության ճորտացումը: Ռոմանովյան դինաստիայի գահակալումը: Ռիկրաինայի միացումը Ռուսաստանին: **Թեմա 3՝** Պյոտր Մեծի ժամանակաշրջանը. 1689-1725թթ.: **Թեմա 4՝** Ռուսաստանը Եկատերինա Մեծի գահակալության շրջանում. 1762-1796թթ.: **Թեմա 5՝** Ալեքսանդր I. 1801-1825թթ.: 1812թ. հայրենական պատերազմը: **Թեմա 6՝** Դեկաբրիստների ապստամբությունը: **Թեմա 7՝** Ղրիմի պատերազմը և ճորտատիրական իրավունքի վերացումը: **Թեմա 8՝** Հետոեֆոբյան շրջանի բուրժուական բարեփոխումները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում (թեսթ): Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր կարճ հարցում (թեսթ): Միավորների քայլը 0.5 է:

0301/B50. «ՀՄՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (15 ժամ դասախոսություն, 9 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, առանց եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողին համաշխարհային պատմության ուսումնասիրության աղբյուրագիտական հենքի հետ, ցույց տալ աղբյուրների բովանդակությունը և կառուցվածքի առանձնահատկությունները պատմական տարբեր դարաշրջաններում, բացահայտել փաստերից օգտվելու և պատմականորեն շարադրելու ճիշտ մեթոդները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Սկզբնաղբյուրների բովանդակային և կառուցվածքային առանձնահատկությունների, ինչպես նաև փաստերից օգտվելու և կիրարկելու մասին:
2. կողմնորոշվել համաշխարհային պատմության աղբյուրների տիպաբանության մեջ (արձանագրություններ, տարեգրություններ, հուշագրություններ, պատմագիտական աշխատություններ, կինոֆիլմեր),
3. բացահայտել նրանց արժանահավատության մակարդակը և օգտագործել իր պատմական ուսումնասիրություններում և հետազոտություններում,
4. վերլուծել սկզբնաղբյուրների գիտական աշխատանքների տվյալներն ու օգտագործել դրանք իր իսկ կատարած աշխատանքներում:

Բովանդակություն

Թեմա 1՝ Պատմական մտքի և պատմական գիտության զարգացումը Անգլիայում 17-րդ դարի երկրորդ կեսին և 18-րդ դարում: ***Թեմա 2՝*** Պատմական գիտության զարգացումը Ֆրանսիայում 18-րդ դարում. ֆրանսիական լուսավորության պատմական միտքը: ***Թեմա 3՝*** Պատմական մտքի զարգացումն Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում 19-րդ դարում: ***Թեմա 4՝*** Պատմական մտքի զարգացումը ԱՄՆ-ում 18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարում: ***Թեմա 5՝*** Մարքսիստական պատմագրության առաջացումը. Կ.Մարքսի և Ֆ.Էնգելսի պատմական հայացքները: ***Թեմա 6՝*** Պատմական մտքի զարգացումը 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին: ***Թեմա 7՝*** Պատմական մտքի զարգացումը Եվրոպայի և Ամերիկայի երկրներում նորագույն ժամանակաշրջանում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում(թեսթ): Միավորների քայլը 0.5 է:

0301/B14. «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-6 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (15 ժամ դասախոսություն, 9 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել համակողմանի և ամբողջական գիտելիքներ հայոց նորագույն պատմության քաղաքական, տնտե-

սական և մշակութային հիմնախնդիրների վեաբերյալ, ինչպես նաև պարզաբանել պատմագիտության մեջ գոյություն ունեցող իրարամերժ խնդիրները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ամբողջական և համակողմանի գիտելիքներ ձեռք կրերի Խորհրդային Հայաստանի և Հայաստանի Երրորդ Հանրապետության հիմնախնդիրների վերաբերյալ,
2. կկարողանա կատարել ճիշտ վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածական դասախոսություն: ***Թեմա 2՝*** Խորհրդային Հայաստանը 1920–1922 թթ.: Խորհրդային Հայաստանի ներքին և միջազգային դրությունը: ***Թեմա 3՝*** Անդրֆեդերացիայի և ԽՍՀՄ կազմավորումը: ***Թեմա 4՝*** Խորհրդային Հայաստանը 1922–1941 թթ.: ***Թեմա 5՝*** Խորհրդային Հայաստանի մշակույթը: ***Թեմա 6՝*** Հայկական Սփյուռքը 1920–1941թթ.: ***Թեմա 7՝*** Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմի տարիներին: ***Թեմա 8՝*** Խորհրդային Հայաստանը 1946–1991թթ.: ***Թեմա 9՝*** Սփյուռքը 1941–1991թթ.: ***Թեմա 10՝*** Հայաստանի Երրորդ Հանրապետության հռչակումը և պետականության կայացման գործընթացը: ***Թեմա 11՝*** Հայաստանի Հանրապետության ներքին դրությունը: ***Թեմա 12՝*** Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը: ***Թեմա 13՝*** Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքը: ***Թեմա 14՝*** Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

0301/B22. «ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-2 (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 7.5 ժամ (21 ժամ դասախոսություն, 9 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել Եվրոպայի և Ամերիկայի երկրների պատմության նոր ժամանակաշրջանի երկրորդ հատվածը 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև 20-րդ դարի սկիզբ: Քննարկել այնպիսի համաշխարհային կարևորության երևույթներ ինչպիսիք են բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունները Եվրոպայում, Գերմանական կայսրության ձևավորումը և քաղաքացիական պատերազմը ԱՄՆ-ում: Համաշխարհային գերտերությունների արտաքին քաղա-

քականության ձևավորումը: Միջազգային իրադրության լարվածությունը, ուժերի նոր դասավորվածությունը և ռազմաքաղաքական դաշինքների ձևավորումը Առաջին Համաշխարհայինից առաջ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Գիտելիքներ կունենա Եվրոպայում 19-րդ դարի երկրորդ կեսին տեղի ունեցող ազգային-ազատագրական պայքարի և նոր պետությունների առաջացման պատմական նշանակության վերաբերյալ: Եվրոպայում սկիզբ առած հեղափոխությունների նոր «շքերթի» պատմաքաղաքական նշանակության ու հետևանքների վերաբերյալ:
2. Գիտելիքներ կձևավորի միջազգային հակասությունների նոր փուլի վերաբերյալ, Եվրոպայում և աշխարհում նոր ռազմաքաղաքական դաշինքների ու բաժանարար գծերի առաջացման պատճառների ու հետևանքների մասին, համաշխարհային տնտեսական, քաղաքական և սոցիալական զարգացումների վերաբերյալ և Առաջին աշխարհամարտի պատճառների ու հետևանքների, և որպես արդյունք, միջազգային հարաբերությունների նոր համակարգի հաստատման վերաբերյալ:
3. կկարողանա իր ընկալումների հենքի վրա ըմբռնել արդի համաշխարհային քաղաքականության համատեքստում տեղի ունեցող քաղաքական և հասարակական փոփոխությունների տրամաբանությունը:

Բովանդակություն

Թեմա 1՝ Ֆրանսիան 19-րդ դարի 2-րդ կեսին- 20-րդ դարի սկզբին: ***Թեմա 2՝*** 1830թ. հուլիսյան հեղափոխությունը: ***Թեմա 3՝*** 1848թ. հեղափոխությունը: Ֆրանս-պրուսական պատերազմի պատճառներն ու սկիզբը: ***Թեմա 4՝*** 1870 թ. սեպտեմբերի 4-ի հեղափոխությունը: Փարիզի կոմունան: ***Թեմա 5՝*** Երրորդ հանրապետության պետական կարգը և քաղաքական կյանքը: ***Թեմա 6՝*** 1875թ. Սահմանադրությունը: Արտաքին քաղաքականությունը 1870-1890-ական թթ.: Բովանդեական ճգնաժամը: ***Թեմա 7՝*** Ֆրանս-ռուսական դաշինքը: Գաղութային քաղաքականությունը: <<Պանամայի խաբեությունը>>: Դրեյֆուսի գործը: Վալդեբ Ռուսոյի կառավարությունը: <<Միլերանի կազուսը>>: Ռադիկալների ներքին և արտաքին քաղաքականությունը: ***Թեմա 8՝*** Ժ. Կլեմանսոյի կառավարությունը: Ֆրանսիայի քաղաքական դերն առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին: ***Թեմա 9՝*** Ա. Բիրանի կառավարությունը: ***Թեմա 10՝*** Ռ. Պուանկարեի իշխանությունը: ***Թեմա 11՝*** Կլեմանսոյի դիկտատորական կառավարության հաստատումը: ***Թեմա 12՝*** Անգլիան 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին: ***Թեմա 13՝*** 1832թ. պառլամենտական բարեփոխումը: Զարտիստական շարժումը: Անգլիայի տնտեսական զարգացումը: Գլադստոնի, Դիզրայելիի, Սոլսբերիի կաբինետները: ***Թեմա 14՝*** Անգլիայի գաղութային քաղաքականությունը: Լիբերալների հաղթանակը 1906թ.: ***Թեմա 15՝*** Լեյբորիստական կուսակցության առաջացումը: Լլոյդ-ջորջիզմ: ***Թեմա 16՝*** Անգլիայի արտաքին քաղաքականությունը 1912-1914թթ., իռլանդական հարցը: ***Թեմա 17՝*** Ամերիկյան գաղութների անկախացումը: ***Թեմա 18՝*** Գերմանական կայսրության կազմավորումը, Գերմանիայի միավորման պատմական անհրաժեշտությունը: ***Թեմա 19՝*** Գերմանիայի միավորման խնդիրը

1850-1860-ական թթ.: Օտտո ֆոն Բիսմարկը և ֆրանս-պրուսական պատերազմը 1870-1871թթ.: **Թեմա 20**՝ Կայսրության հռչակումը: Գերմանական կայսրությունը 1871-1918թթ.: Կայսրության պետական կարգը և քաղաքական կյանքը: **Թեմա 21**՝ Քաղաքական կուսակցությունները: Կայսերական կառավարության ներքին ու ֆորմները: <<Կուլտուրկամֆ>>: **Թեմա 22**՝ Կապրիվիի կանցլերությունը: Պան-գերմանական միությունը: Գերմանիայի պայքարը աշխարհի վերաբաժանման համար: Բյուրովի կանցլերությունը: **Թեմա 23**՝ Իտալիան 19-րդ դարում և 20-րդ դ. 1848-1849թթ. ազգային հեղափոխությունը: Իտալիայի միավորման սկիզբը: Զ. Գարիբալդի: **Թեմա 24**՝ Իտալիայի պետական կարգը և քաղաքական կյանքը: Պապական պետությունը: <<Սջի>> կառավարում: <<Չախի>> կառավարում: Իտալիայի արտաքին քաղաքականությունը: **Թեմա 25**՝ Ֆ. Կրիսպիի անցումը իշխանության գլուխ: Ներքաղաքական դրության սրումը: **Թեմա 26**՝ Զ. Ջոլիտիի լիբերալ քաղաքականությունը 20-րդ դարի սկզբին: **Թեմա 27**՝ Իտալո-թուրքական պատերազմը: **Թեմա 28**՝ ԱՄՆ-ն 19-րդ դարում: ԱՄՆ-ի տնտեսական զարգացումը և տարածքային աճը: **Թեմա 29**՝ Աբոլիցիոնիզմ: Քաղաքացիական պատերազմը 1861-1865թթ.: Արտաքին քաղաքականությունը: **Թեմա 30**՝ Ամերիկյան էքսպանսիոնիզմի գաղափարախոսությունը: **Թեմա 31**՝ <<Բաց դոների>> դոկտրինան: **Թեմա 32**՝ Միջազգային հարաբերությունները 1871-1914թթ. Երեք կայսրերի համաձայնությունը: 1875-1878թթ. Արևելյան ճգնաժամը: **Թեմա 33**՝ Ավստրո-գերմանական դաշինքը /1879թ./: Եռյակ դաշինքը /1882թ./: **Թեմա 34**՝ Պայ-քարը Աֆրիկայի և Ասիայի համար: <<Ինքնապահովության>> պայմանագիրը: **Թեմա 35**՝ <<Փայլուն մեկուսացման>> անգլիական քաղաքականությունը: **Թեմա 36**՝ Ֆրանս-ռուսական դաշինքը /1891-1893թթ./: Մեծ տերությունները և հակասությունների սրումը Հեռավոր Արևելքում: **Թեմա 37**՝ Աշխարհի բաժանման ավարտը: Միջազգային հարաբերությունների սրումը Առաջին աշխարհամարտի նախօրյակին: **Թեմա 38**՝ <<Բաց դոների>> դոկտրինան: Անգլո-գերմանական հակասությունները: Հեռավորարևելյան հարցը: **Թեմա 39**՝ Անտանտի կազմավորումը: Առաջին մարտկկյան ճգնաժամը /1905-1906թթ./: **Թեմա 40**՝ Ռուս-գերմանական հակասությունները: Անգլո-պրուսական համաձայնությունը: **Թեմա 41**՝ 1908-1909թթ. Բոսնիական ճգնաժամը: Երկրորդ մարտկկյան ճգնաժամը 1911թ.: **Թեմա 42**՝ Իտալո-թուրքական, Բալկանյան առաջին և երկրորդ պատերազմները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

0301/B36. «ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՂԲԵՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4.5 ժամ (12 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, եզրափակիչ գնահատմամբ
նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ճանաչողական, գիտատեսական և քաղաքական դիտանկյունով ներկայացնել Վրաստանի և Ադրբեջանի պատմությունը, լուսաբանել տարաբնույթ վիճահարույց և միմյանց հակադիր տեսակետները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կճանաչի հարևան երկու երկրների պատմությունը,
2. կհասկանա և կվերլուծի այդ ժողովուրդների պատմական զարգացման առանձնահատկությունները, նրանց քաղաքակրթությունների էությունը,
3. կկարողանա կատարել տեսական ընդհանրացումներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Վրաստանը հնագույն ժամանակներում: **Թեմա 2՝** Վրաստանը 4-8-րդ դդ.: **Թեմա 3՝** Վրաստանը 9-11-րդ դդ.: **Թեմա 4՝** Վրաստանը 13-րդ դ. սկզբներից մինչև 19-րդ դ. սկիզբը: **Թեմա 5՝** Վրաստանը 19-20-րդ դ. սկզբին: **Թեմա 6՝** Վրաստանը խորհրդային ժամանակաշրջանում: **Թեմա 7՝** Վրաստանը ետխորհրդային տարիներին: **Թեմա 8՝** Արևելյան Անդրկովկասը 8-16-րդ դդ.: **Թեմա 9՝** Արևելյան Անդրկովկասը 16-րդ դ.-19-րդ դ. սկզբին: **Թեմա 10՝** Արևելյան Անդրկովկասը ռուսական կայսրության կազմում: **Թեմա 11՝** Արևելյան Անդրկովկասը 20-րդ դ. սկզբին: **Թեմա 12՝** Ադրբեջանի անկախ հանրապետությունը 1918-1920 թթ.: **Թեմա 13՝** Ադրբեջանի խորհրդայնացումը և հարաբերությունները հարևան երկրների հետ: **Թեմա 14՝** Ադրբեջանը խորհրդային տարիներին: **Թեմա 15՝** Ադրբեջանի հանրապետությունը ետխորհրդային տարիներին:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

0301/B23. «ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (8 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (24 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, եզրափակիչ գնահատմամբ
նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին ներկայացնել 20-րդ դարի Եվրոպայի և Ամերիկայի երկրների պատմությունը: Տալ քաղաքակրթության զարգացման տիպաբանությունը 20-րդ դարի ընթացքում ինչպես Եվրոպական աշխարհամա-

սում, այնպես էլ ամերիկյան մայրացամաքում: Ներկայացնել հասարակության զարգացման վերաբերյալ երկու հակադիր գաղափարախոսությունների բախումներն ու տրանսֆորմացիան:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա 20-րդ դարի Եվրոպայի և Ամերիկայի երկրների զարգացման առանձնահատկությունները.
2. կհասկանա 20-րդ դարում գերիշխող գաղափարախոսությունների էությունը.
3. կկարողանա գիտելիքները կիրառել համաշխարհային նորագույն քաղաքական զարգացումները հասկանալու համար:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Քաղաքակրթությունների ընդհանուր բնութագիրը: ***Թեմա 2՝*** Միջազգային հարաբերությունները: Իրադարձությունները և կարևորագույն խնդիրները 1918-1939 թթ.: ***Թեմա 3՝*** Միջազգային հարաբերությունները 1945–1990-ական թթ.: ***Թեմա 4՝*** Սոցիալիստական համակարգը երկբևեռ աշխարհակարգի պայմաններում: ***Թեմա 5՝*** ԱՄՆ-ը և Արևմտյան Եվրոպայի երկրները 1918–1990-ական թթ.: ***Թեմա 6՝*** ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը արդի էտապում: ***Թեմա 7՝*** Էմիգրացիայի խնդիրը ժամանակակից աշխարհում: ***Թեմա 8՝*** Աշխարհը արդի էտապում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

0301/B26. «ՌՈՒՄՍՍՍԱՆԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ»-3 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (15 ժամ դասախոսություն, 9 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7–րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել Ռուսաստանի պատմության 19-րդ դ. ավարտի և 20-րդ դ. սկզբի, մինչև 1917թ. փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխության ժամանակաշրջանն ընդգրկող պատմական կարևոր իրադարձությունների մասին համապատասխան գիտելիքներ, տալ պատշաճ մասնագիտական պատկերացում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա 19-րդ դ. ավարտի և 20-րդ դ. սկզբի Ռուսաստանի պատմության տեսական խնդրացանկը.
2. կհասկանա Ռուսաստանի պատմության տվյալ ժամանակաշրջանի վերլուծական մեթոդի տրամաբանությունը.
3. կկարողանա յուրաքանչյուր թեմայի վերլուծության հիման վրա անել տեսական ընդհանրացումներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հեղափոխական նարոդնիկությունը: Ալեքսանդր III-ը (1881-1894թթ.) և ռեակցիայի մոլեգնումը: **Թեմա 2՝** Ռուսաստանի տնտեսական և քաղաքական դեմքը 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին. Սերգեյ Վիտտե: 1897-ի մարդահամարը: **Թեմա 3՝** Մարքսիզմի տարածումը Ռուսաստանում: Քաղաքա-կան կուսակցությունների կազմավորումը: Ռուս-ճապոնական պատերազմը: **Թեմա 4՝** Ռուսական առաջին հեղափոխությունը: 1-ին, 2-րդ և 3-րդ Պետական Դումաները: **Թեմա 5՝** Ստոլիպինի ագրարային ռեֆորմը: **Թեմա 6՝** Ռուսաստանի արտաքին և ներքին քաղաքականությունը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին: Ռասպուտին: **Թեմա 7՝** Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը Ռուսաստանում: Նիկոլայ II-ի հրաժարականը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

0301/Յ34. «ԹԱՆԳԱՐԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԽԻՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

(3 կրեդիտ)

Շաբաթական՝ 4.5 ժամ (12 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին հաղորդել տեսական գիտելիքներ թանգարանագիտության վերաբերյալ, ներկայացնել թանգարանագիտությունը որպես գիտություն, դրա ուսումնասիրության առարկան և օբյեկտը, թանգարանագիտական հիմնական հասակացությունները, թանգարանագիտության կապը և տեղը մյուս գիտությունների համակարգում: Ուսանողին ամբողջական գիտելիքներ է տրվում արխիվների, արխիվային գործի, արխիվային գործառնությունների և արխիվային վավերագրերը մշակելու և օգտագործելու վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա թանգարանների ստեղծման պատմությունը և կծանոթանա թանգարանների կառուցվածքին,
2. կճանաչի ու նորովի կգնահատի մշակութային արժեքներն ու թանգարանների դերը դրանց պահպանման և սերունդներին փոխանցելու գործում,
3. ամբողջական գիտելիքներ կստանա արխիվային գործի սկզբնավորման, զարգացման և առաջիկա հեռանկարների վերաբերյալ,
4. կկարողանա մշակել վավերագրերը և օգտագործել իր գիտական հետազոտություններում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Թանգարանների ծագման պատմությունից: **Թեմա 2՝** Հայաստանի թանգարանների պատմությունից: **Թեմա 3՝** Թանգարանագիտությունը որպես գիտություն, ուսումնասիրության առարկան, օբյեկտը: **Թեմա 4՝** Թանգարանագիտական հիմնական հասկացությունները: **Թեմա 5՝** Թանգարանագիտության մեթոդը, կառուցվածքը, տեղը մյուս գիտությունների համակարգում: **Թեմա 6՝** Թանգարանների հիմնական սոցիալական խնդիրները: **Թեմա 7՝** Թանգարանային ֆոնդեր: **Թեմա 8՝** Թանգարանների կառավարում և մարքեթինգ: **Թեմա 9՝** Թանգարանների դասակարգումը ըստ տիպերի: **Թեմա 10՝** Ցուցադրություն, ցուցահանդես: **Թեմա 11՝** Ցուցադրության տեքստեր: **Թեմա 12՝** Թանգարանի հանրահոշակում, ինֆորմացիա և գովազդ: **Թեմա 13՝** ԻԿՈՄ-ի պատմությունը, թանգարանների բարեկամների ասոցիացիա: **Թեմա 14՝** Նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառումը թանգարաններում: **Թեմա 15՝** Ներածական դասախոսություն: **Թեմա 16՝** Հին Հայաստանի պատմության սկզբնաղբյուրները: **Թեմա 17՝** Վաղ միջնադարյան Հայաստանի սկզբնաղբյուրները: **Թեմա 18՝** Հայաստանի զարգացած միջնադարի սկզբնաղբյուրները: **Թեմա 19՝** Հայաստանի ուշ միջնադարի պատմության սկզբնաղբյուրները: **Թեմա 20՝** Հայոց նոր պատմության սկզբնաղբյուրները: **Թեմա 21՝** Հայոց նորագույն պատմության սկզբնաղբյուրները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք (ռեֆերատ): Միավորների քայլը 1 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0301/B27. «ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» - 4 (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (15 ժամ դասախոսություն, 9 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է գիտա-ճանաչողական գործընթացի միջոցով ուսանողներին քաջատեղյակ դարձնել Ռուսաստանի պատմության պատմական անցյալին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. լիարժեք տեսական գիտելիքներ կունենա նշված ժամանակաշրջանի Ռուսաստանի պատմության մասին.
2. կհասկանա Ռուսաստանի խաղաղացած դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում.
3. հստակ պատկերացում կկազմի ներկա զարգացումների մասին, կկարողանա կատարել ճիշտ հետևություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ 1917-ի հոկտեմբերը և բոլշևիկների ռազմական հեղաշրջումը: Ժամանակավոր կառավարության ձերբակալումը: Խորհուրդների համառուսաստանյան II համագումարը և ընդունած հիմնարար որոշումը: Կենտգործկոմի և միակուսակցական բոլշևիկյան կառավարության կազմավորումը: **Թեմա 2՝** Հոկտեմբերյան հեղափոխության քաղաքական հետևանքները: **Թեմա 3՝** Խորհրդային իշխանության առաջին դեկրետները: Կառավարման նոր պետական ապարատի կազմավորումը: **Թեմա 4՝** Խորհրդային իշխանության հակադեմոկրատական բնույթը: Ա. Խորհուրդների համառուսաստանյան II համագումարի կողմից իշխանությունը խորհուրդներին հանձնելու որոշման դեմ բողոքը: Բ. Սահմանադիր ժողովի հրավիրումը և ցրումը: **Թեմա 5՝** Խորհրդային իշխանության արտաքին քաղաքականությունը և Բրեստ-Լիտվսկի խաղաղության պայմանագիրը: **Թեմա 6՝** Ռազմական կոմունիզմ-կոմկուսի 8-րդ համագումարի որոշումները: Ռազմական կոմունիզմը գյուղում և քաղաքում: **Թեմա 7՝** Սպիտակ շարժում. կամավորական բանակի կազմավորումը: **Թեմա 8՝** Քաղաքացիական պատերազմը: **Թեմա 9՝** Ռազմական կոմունիզմից-նոր տնտեսական քաղաքականությունը՝ ՆԷՊ: Կրոնշտադի ապստամբությունը: Կոմկուսի 10-րդ համագումարը և որոշումները: ՆԷՊ-ը գյուղում և քաղաքում: **Թեմա 10՝** Խորհրդային Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը և միջազգային մեկուսացման հաղթահարումը: Ադրֆեդերացիայի ստեղծումը և ԽՍՀՄ-ի կազմավորումը: **Թեմա 11՝** Ներկուսակցական նոմենկլատուրա: Տրոցկին և <<46-ի պլատֆորմը>>: Նոր կուրս: Լենին-գրադյան ընդդիմությունը և նրա ջարդը: **Թեմա 12՝** Ինդուստրացում և կոլեկտիվացում: **Թեմա 13՝** <<Դասակարգային պատերազմի>> տեսությունը և բռնությունների ալիքը: **Թեմա 14՝** Խորհրդա-գերմանական պայմանագրերը: Խորհրդա-ֆիննական պատերազմը: **Թեմա 15՝** Խորհրդային Միության հայրենական մեծ պատերազմը: ԽՍՀՄ-ի մասնակցությունը Ճապոնիայի դեմ պատերազմին: **Թեմա 16՝** <<Մեծ եռյակի>> հանդիպումները: **Թեմա 17՝** Երկու հակադիր սիստեմները և <<Սառը պատերազմը>>: **Թեմա 18՝** Կյանքը պատերազմից հետո, սպասումներ և իրականություն: **Թեմա 19՝** Ստալինի մահը: Իրադրությունը առանց Ստալինի: Կոմկուսի 20-րդ համագումարը և <<քաղաքական հալոցք>>: **Թեմա 20՝** Միխայիլ Գորբաչովի քաղաքականություն և անկախության հաղթարշավը: Ռուսաստանյան ֆեդերացիայի անկախացումը: **Թեմա 21՝** Նոր Օգարյովի համաձայնագիրը: Արտակարգ դրության պետական կոմիտեն և Անկախ պետությունների համագործակցությունը: **Թեմա 22՝** Անկախ Ռուսաստանի 1993թ. Սահմանադրությունը: Ռուսաստանի վարչական կառուցվածքը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

0303/B21. «ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (15 ժամ դասախոսություն, 9 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել մանկավարժություն գիտության ժամանակակից հիմնախնդիրները, նրա զարգացումը գիտական հարացույցների հիմքի վրա և ցույց տալ մանկավարժություն գիտության տեղն ու դերը մարդուն ուսումնասիրող գիտությունների շարքում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մանկավարժության ժամանակակից տեսությունները, մանկավարժություն գիտության ճյուղերը, ՀՀ կրթության համակարգի կառուցվածքը և արդի բարեփոխումները, ուսուցման նոր տեսակները, ուսուցման կազմակերպման նոր ձևերն ու մեթոդները.
2. կհասկանա մանկավարժության գիտության տեղն ու դերը մարդու անձի ձևավորման ու զարգացման, նրա կրթության ու դաստիարակության գործում՝ սոցիալականացման համատեքստում.
3. կկարողանա տեսական գիտելիքները կիրառել գործնականում՝ նախ մանկավարժական պրակտիկայում, ապա աշխատանքային գործունեության ժամանակ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մանկավարժություն գիտության հիմնական հասկացությունները, օրինաչափությունները, առարկան, խնդիրները: **Թեմա 2՝** Մանկավարժական գիտությունների համակարգը, ՀՀ կրթության համակարգը և բարեփոխումները: Մանկավարժական մտքի պատմական զարգացումը: **Թեմա 3՝** Դիդակտիկայի հիմունքները: **Թեմա 4՝** Ուսուցման նպատակները, գործընթացի մեթոդաբանական հիմքերը: Ուսուցման սկզբունքները, մեթոդները, կազմակերպման ձևերը, միջոցները: **Թեմա 5՝** Կրթության բովանդակությունը, նպատակը, խնդիրները: **Թեմա 6՝** Անձի համակողմանի և ներդաշնակ զարգացում: **Թեմա 7՝** Դաստիարակության հիմունքները, էությունը, սկզբունքները և համակարգը, մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, սեռական, իրավական, տնտեսագիտական, գոյապահպանական դաստիարակության մեթոդները, միջոցները, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներ. դպրոցի կառավարում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում(թեսթ): Միավորների քայլը 0.5 է:
0301/B29. «ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական` 6 ժամ (15 ժամ դասախոսություն, 9 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը` 8-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Ազգագրությունը որպես գիտություն Հայաստանում կայացավ 19-րդ դ. 80-90-ական թթ., սակայն Հայաստանին և հայերին վերաբերող ազգագրական վկայությունները գալիս են խոր հնադարից և սփռված են հսկայական տարածության և ժամանակի մեջ: Կուրսի նպատակն է ուսանողին ծանոթացնել հայ ազգագրություն ձևավորման փուլերին, հայ և օտար սկզբնաղբյուրներում եղած վկայություններին, որոնք վերաբերում են հայերի տնտեսական, հասարակական-ընտանեկան կենցաղին, նյութական և հոգևոր մշակույթին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կծանոթանա հայ ազգագրության ձևավորման ու գիտության վերածնվելու պատմությանը.
2. Կծանոթանա հայերի և Հայաստանում ապրող մյուս ժողովուրդների էթնոկենցաղամշակութային համալիրին
3. Կծանոթանա էթնոգենեզին և էթնիկ պատմությանը

Բովանդակություն

Թեմա 1`** Պատմական Հայաստանի պատմաազգագրական մարզերն ու շրջանները: Հայ ազգագրության ձևավորման ու զարգացման փուլերի խնդիրը: **Թեմա 2` Ժայռապատկերները որպես ազգագրական հետազոտությունների սկզբնաղբյուրներ: **Թեմա 3`** Հունա-հռոմեական պատմիչների վկայությունները Հայաստանի և հայերի մասին /Հերոդոտոս, Քսենոփոն, Ստրաբոն, Տակիտոս, Պրոկոպիոս Կեսարացի/: **Թեմա 4`** Հայ պատմագրության մեջ եղած ազգագրական նյութերի ակնարկ: **Թեմա 5`** Արաբ մասնագետների վկայությունները Հայաստանի և հայերի մասին /9-14-րդ դդ./: **Թեմա 6`** Եվրոպայի ճանապարհորդների վկայությունները Հայաստանի և հայերի մասին /13-18-րդ դդ./: **Թեմա 7`** Հայ ազգագրությունը 19-րդ դ. առաջին կեսին /Ղ. Ինձինձյան, Մ. Բժշկյան, Մ. Թադիադյան, Խ. Աբովյան/: **Թեմա 8`** Հայ ազգագրությունը 19-րդ դ. 2-րդ կես -1920-ական թթ./ Գ. Սրվանձտյանց, Գր. Խալաթյանց, Ե. Լալայան/: **Թեմա 9`** Սո. Լիսիցյանի և Խ. Սամվելյանի ազգագրական գործունեությունը: **Թեմա 10`** ՀՀ-ում ազգագրական գիտական հաստատությունների և ազգագրական թան-գարանների համառոտ ակնարկ: **Թեմա 11`** Հայերը աշխարհի էթնիկ հանրությունների

համակարգում, հայերի էթնոլեզվական, մարդաբանական, խառնվածքային, դավանաբանական, ժողովրդագրական բնութագիրը: **Թեմա 12՝** ՀՀ ազգային փոքրամասնությունների ժողովրդագրական և էթնոմշակութային բնութագիրը: **Թեմա 13՝** Հայերի ավանդական և ժամանակակից արտադրական մշակույթը. երկրագործական մշակույթ, Հայկական լեռնաշխարհը երկրագործական մշակույթի կենտրոն: Բրիչային և արորագութանային երկրագործության արտադրատեխնիկան, աշխատանքի կազմակերպման հնավանդ ձևերը: Անասնապահական մշակույթ, ձևերը, համագործակցության և փոխօգնության ավանդական սկզբունքները: Տնայնագործական և արհեստագործական մշակույթ: Համքարական կազմակերպությունները քաղաքներում, դրոշները և սովորույթները: Օժանդակ և յուրացնող տնտեսաձևերը: Ժողովրդական ավանդական փոխադրամիջոցները և կապի միջոցները: **Թեմա 14՝** Հայոց կենսապահովման մշակույթը. Գյուղական և քաղաքային ավանդական ժամանակակից բնակավայրերի տիպերը, կառուցվածքը, բնորոշ գծերը: Հայ ժողովրդական բնակարանը և ներսույթը՝ ջեռուցման, լուսավորության ավանդական և ժամանակից միջոցները, կահույքը, դրանց գործառնության բնութագրությունը: Հայոց ավանդական և ժամանակակից տարագային համալիրները, տարածքային առանձնահատկությունները: Հայկական ուտեստն ու ըմպելիքները, հացկերույթները: **Թեմա 15՝** Սոցիոներմատիվ մշակույթ, հայերի ավանդական և ժամանակից ընտանքը և վավերելակարգը: Հայերի ընտանեկան ծիսակարգը, ամուսնության և հարսանեկան ծիսաշարը, տղա-բերքի և մանկատածության, հուղարկավորման և հիշատակման հետ կապված ավանդական և ժամանակակից սովորույթները և ծեսերը: Հայոց ազգակցական համակարգը, տնտեսական, տարածքային և գաղափարական կապերը: Հայերի գյուղական համայնքը 19-20-րդ դդ.: **Թեմա 16՝** Հայ...ոց ավանդական և ժամանակակից հումանիտար մշակույթը. Հնագույն հավատալիքների, պաշտամունքի, բանավոր ստեղծագործությունների, տոների վերաբերյալ պատկերացումների հայոց մեջ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

0202/B32. «ՀԱՅ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)
Շաբաթական՝ 4.5 ժամ(12 ժամ դասախոսություն,6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 9-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողին հայ և համաշխարհային արվեստի պատմությանը, նրա զարգացման հիմնական փուլերին, կարևոր ստեղծագործություններին: Հաղորդակից դարձնել ուսանողին նախնադարյան,

հին քաղաքակրթությունների, դասական՝ հունա-հռոմեական, միջնադարյան մշակույթներին, ինչպես նաև հեղինակավոր արվեստագետների ստեղծագործությունների ուսումնասիրմանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհասկանա մշակույթի պատմության օրինաչափությունները, զարգացման առանձնահատկությունները,
2. կճանաչի հայ և համաշխարհային մշակույթի կարևոր հուշարձանները, կը դառնա որոշ ստեղծագործությունների անմիջական հաղորդակիցը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն: Նախնադարյան արվեստ: ***Թեմա 2՝*** Հին քաղաքակրթությունների արվեստների ընդհանուր բնութագիրը և հիմնական հուշարձանները: ***Թեմա 3՝*** Հին Հունաստանի և Հռոմի արվեստի հիմնական շրջաններն ու հուշարձանները: ***Թեմա 4՝*** Միջնադարյան Արևելաքրիստոնեական և Արևմտաքրիստոնեական արվեստ: ***Թեմա 5՝*** Վերածնունդի արվեստը: ***Թեմա 6՝*** 17-րդ դարի արվեստի ընդհանուր բնութագիրը, իտալական, ֆլամանդական, հոլանդական, իսպանական դպրոցները: ***Թեմա 7՝*** 18-19-րդ դարերի արվեստի ընդհանուր բնութագիրը: ***Թեմա 8՝*** Իմպրեսիոնիզմ և պոստիմպրեսիոնիզմ: ***Թեմա 9՝*** Մոդեռնիզմի ուղղությունները: ***Թեմա 10՝*** Հին հայկական և ուրարտական արվեստ: ***Թեմա 11՝*** Միջնադարյան հայ արվեստ: ***Թեմա 12՝*** Հայ կերպարվեստագետները 19-րդ դ. և 20-րդ. 1-ին կեսին: ***Թեմա 13՝*** Խորհրդային շրջանի հայ արվեստը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 1 է:

0301/B35. « ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈՂԻԿԱ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4,5 ժամ (12 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 9-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել պատմության դասավանդման խնդիրների, կազմակերպման հիմնաձևերի ու մեթոդների, պատմական մտածողության զարգացմանը նպաստող տարբեր հնարների մասին պատշաճ մասնագիտական պատկերացում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհասկանա պատմամշակութային գործընթացի, հասարակական առաջադիմության հիմնախնդրի լուսաբանման գործում պատմության դասավանդման դերն ու նշանակությունը,
2. կտիրապետի դասավանդման և հատկապես պատմության դասավանդման հիմնաձևերին ու կարևորագույն մեթոդներին,
3. կկարողանա կատարել պատմության մասին բազմաբնույթ գիտելիքի համակարգում և տեսական վերլուծություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Դասավանդողի դերը դասավանդման գործընթացում և կրթության համակարգում, ներկայացվող ժամանակակից պահանջները: **Թեմա 2՝** Դասավանդման ավանդական և ժամանակակից մոդելների հարաբերակցումը: **Թեմա 3՝** «Դաս», «դասարան» հասկացությունները, դասաժամերի քանակը պատմության ուսուցման գործընթացում: **Թեմա 4՝** Դասավանդման գործընթացում դասընթացի կարևորագույն հասկացությունների բովանդակության մեկնաբանության և վերլուծության անհրաժեշտությունը: **Թեմա 5՝** Համաշխարհային պատմության գիտական պարբերացման հիմնահարցը: **Թեմա 6՝** Ազգային պատմության դասավանդումը համաշխարհային պատմության համատեքստում: **Թեմա 7՝** Պատմության դասավանդման կազմակերպման հիմնաձևերն ու մեթոդները: **Թեմա 8՝** Ուսումնական ծրագրերի և ուսումնական ձեռնարկների վճռորոշ նշանակությունը դասավանդման գործընթացում: **Թեմա 9՝** ԽԻԿ համակարգը պատմական մտածողությունը խթանող միջոց:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում(թեսթ): Միավորների քայլը 0.5 է:

0301/B32. «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (15 ժամ դասախոսություն, 9 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 9-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հայ բազմադարյան մատենագրության ընթացքին՝ աղբյուրագիտական գիտելիքների ձևավորման, կուտակման և համակարգ դառնալու գործընթացին, ներկայացնել ինչպես աղբյուրագիտական նյութերի նախագրային շրջանի, այնպես էլ հետգրային շրջանի աղբյուրների վերլուծությունն ու դասակարգումը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ծանոթ կլինի ազգային և օտար բոլոր այն հեղինակների երկասիրություններին, որոնցում խոսվում է հայերի և Հայաստանի մասին,
2. կհասկանա հայ իրականության մեջ աղբյուրագիտական գիտելիքների առաջացման, աստիճանական զարգացման և համակարգման սկզբունքները,
3. ձեռք կբերի սկզբնաղբյուրների հետ աշխատելու հմտություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայկական լեռնաշխարհի համայնական հասարակության պատմության սկզբնաղբյուրները: **Թեմա 2՝** Հին Հայաստանի պատմության սկզբնաղբյուրները: **Թեմա 3՝** Վաղ միջնադարյան Հայաստանի պատմության սկզբնաղբյուրները: **Թեմա 4՝** Զարգացած միջնադարյան Հայաստանի պատմության սկզբնաղբյուրները: **Թեմա 5՝** Ուշ միջնադարյան Հայաստանի պատմության սկզբնաղբյուրները: **Թեմա 6՝** Հայ ժողովրդի նոր պատմության սկզբնաղբյուրները: **Թեմա 7՝** Հայ ժողովրդի նորագույն պատմության սկզբնաղբյուրները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

0301/B33. «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4.5 ժամ (12 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 9-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հիմնարար գիտելիքներ հաղորդել մեր ազգային պատմական գիտության անցած ողջ ուղու մասին՝ սկսած նախազրական շրջանի պատկերացումներից մինչև մեր օրերի պատմագիտական դպրոցները, ուղղությունները, տեսությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կպատկերացնի հայ պատմագրության առանձնահատկությունները, զարգացման իր ուրույն ընթացքի փուլերը,
2. կհասկանա հայ իրականության մեջ պատմական գիտելիքների առաջացման աստիճանական զարգացման և համակարգման ընթացքը,
3. կընկալի հայոց պատմության պատմագրության խնդիրները, գիտելիքներ ձեռք կբերի պատմագիտական հետազոտությունների տիպերի մասին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Պատմական գիտելիքների առաջացումը Հայաստանում: Նախա-մերոսյան շրջանի հայ պատմագրությունը: **Թեմա 2՝** Հայ միջնադարյան պատ-մագրության պարբերացումը: Հայ միջնադարյան պատմագրության բնութագրա-կան գծերը և առանձնահատկությունները: Պատմական երկերի հիմնական տե-սակները հայ միջնադարյան պատմագրության մեջ: **Թեմա 3՝** Պատմության պարբերացումը հայ միջնադարյան պատմագրության մեջ: Պատմական ժամա-նակը հայ միջնադարյան պատմագրության մեջ: **Թեմա 4՝** Ստեղծագործական հիմնական եղանակները հայ միջնադարյան պատմագրության մեջ: **Թեմա 5՝** Հայ միջնադարյան պատմագրության ականավոր դեմքերը: **Թեմա 6՝** Հայ պատմա-գրության զարգացման պայմանները, ընթացքը, ականավոր ներկայացուցիչները 18-րդ դարի վերջերին-19-րդ դարում: **Թեմա 7՝** Հայ պատմագրության առաջըն-թացը, զարգացման հիմնական միտումները, նշանավոր դեմքերը 20-րդ դարում: **Թեմա 8՝** Հայ պատմագրության ներկա վիճակը և հեռանկարները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատաս-խանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

0301/B45. «ՓԻԼԻՍՈՓՍՓՈԻԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (12 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունք-ներ)

Կիսամյակը՝ 10-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել փիլիսոփայական մտքի զարգացման ընթացքին, փիլիսոփայական ուղղություններին ու հոսանք-ներին, պատմափիլիսոփայական ուսմունքներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա փիլիսոփայական մտքի զարգացման օրինաչափությունները, դա-րաշրջանների առանձնահատկությունները, փիլիսոփայական ուղղություն-ների կողմից քննարկված հիմնահարցերը, պատմափիլիսոփայական ուս-մունքների բովանդակությունը, հումանիտար ու բնագիտական ուսմունքնե-րի և փիլիսոփայական տեսությունների միջև առկա փոխհարաբերություն-ները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Փիլիսոփայության պատմության առարկան: **Թեմա 2՝** Հին Արևել-քի փիլիսոփայությունը: **Թեմա 3՝** Անտիկ հունական փիլիսոփայություն: **Թեմա 4՝**

Դասական շրջանի հունական փիլսոփայությունը: **Թեմա 5**՝ Հելլենիստական դարաշրջանի փիլիսոփայություն: **Թեմա 6**՝ Միջնադարյան փիլիսոփայություն: **Թեմա 7**՝ Սխոլաստիկական փիլսոփայություն: **Թեմա 8**՝ Վերածննդի դարաշրջանի փիլսոփայություն: **Թեմա 9**՝ Նոր ժամանակի փիլիսոփայությունը: **Թեմա 10**՝ Գերմանական դասական փիլիսոփայություն: **Թեմա 11**՝ Փիլիսոփայական միտքը 19-րդ դարում: **Թեմա 12**՝ 20-րդ դարի փիլիսոփայական ուղղությունները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 1 է:

4.1.1. Կասընտրական դասընթացներ

0301/B37. «ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ»

(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (24 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 7-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ինչպես հայ ավանդական ազգային կուսակցությունների, այնպես էլ հայ մյուս քաղաքական կուսակցությունների ու ժամանակակից հայ քաղաքական կուսակցությունների ձևավորման, ծրագրերի և գործունեության ամբողջական պատմությունը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հայ քաղաքական կուսակցությունների ծրագրային հիմնադրույթների և գործունեության ամբողջական պատմությունը.
2. կկարողանա կատարել հայ ավանդական և ժամանակակից քաղաքական կուսակցությունների ծրագրերի, գործունեության մարտավարական առանձնահատկությունների համեմատական վերլուծություն, քննարկում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Արմենական կուսակցության առաջացումը և Արևմտյան Հայաստանի ազատագրման նրա ծրագիրը: **Թեմա 2**՝ Արմենական կուսակցության գործունեությունը 1890-ական թթ.: 1896թ. Վանի ինքնապաշտպանությունը և Արմենական կուսակցության անկման գործընթացը: **Թեմա 3**՝ Հնչակյան կուսակցության ձևավորումը և Արևմտյան Հայաստանի ազատագրման նրա ծրագիրը: **Թեմա 4**՝ Հնչակյան կուսակցության գործունեությունը 1990 - ական թթ. և պառակտումը: **Թեմա 5**՝ ՀՍԴԿ առաջացումը և նրա ծրագրային դրույթները: **Թեմա 6**՝ Հ. Յ. Դաշնակցության առաջացումը և Արևմտյան Հայաստանի ազատագրման

նրա ծրագիրը: **Թեմա 7՝** ՀՅԴ գործունեությունը 19-րդ դարի 90 - ական թթ. և դրա գնահատականը: **Թեմա 8՝** Հայ քաղաքական կուսակցությունների գործունեությունը 1900 - 08թթ. -ին: Վերաբերմունքը Երիտթուրքական Սահմանադրության նկատմամբ: **Թեմա 9՝** 1905 - 6թթ. հայ - թաթարական կռիվները Կովկասում և հայ քաղաքական կուսակցությունների դիրքորոշումը: **Թեմա 10՝** Հայ քաղաքական կուսակցությունները Հայկական Հարցի վերաբացման շրջանում(1912 - 1914թթ.): **Թեմա 11՝** Հայ քաղաքական կուսակցությունների գործունեությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: **Թեմա 12՝** Հայ քաղաքական կուսակցությունները Հայաստանի առաջին Հանրապետության գոյության տարիներին: **Թեմա 13՝** ՀԿԿ կուսակցության ձևավորումը և գործունեությունը: **Թեմա 14՝** Հայաստանի խորհրդայնացումը և հայ քաղաքական կուսակցությունների լիկվիդացիայի գործընթացը: **Թեմա 15՝** Հայ քաղաքական կուսակցությունների գործունեությունը Միյուռքում 1920 - 80 - ական թթ.: **Թեմա 16՝** Խորհրդային Միության փլուզումը և հայկական նոր քաղաքական կազմակերպությունների առաջացումը: ՀՀԾ - ի քաղաքական դիրքորոշումները: **Թեմա 17՝** Հայ ավանդական և նորաստեղծ կուսակցությունների գործունեությունը 1991 - 1998թթ.: **Թեմա 18՝** Հայաստանի Հանրապետական կուսակցության առաջացումը և գործունեությունը 1998 - 2008թթ. - ին: **Թեմա 19՝** ՀՀԿ գործունեությունը 2008 - 12թթ. -ին: **Թեմա 20՝** ԱԺՄ, Օրինաց Երկիր, Բարգավաճ Հայաստան, Ժառանգություն և այլ զանգվածային կուսակցությունների ձևավորումը և գործունեությունը Հայաստանի 3- րդ Հանրապետության շրջանում: **Թեմա 21՝** Հայ քաղաքական կուսակցությունների խորհրդարանական գործունեությունը Հայաստանի 3-րդ Հանրապետության շրջանում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0301/B38. «ՊԱՌԼԱՍԵՆՏԱՐԻԶՄԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (24 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 7-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել դասային ներկայացուցչական միապետության ձևավորման ժամանակաշրջանը, Եվրոպական երկրների դասային համակարգերը, պետական կարգը և դրանց առաձևահատկությունները, ինչպես նաև ամերիկյան հասարակության մեջ ժողովրդավարական համակարգի ձևավորման հիմքերն ու զարգացման բնութագրիչները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա դասային համակարգի ձևավորման առանձնահատկությունները.

2. ճշգրիտ պատկերացում կունենա այդ երկրների զարգացման քաղաքացիական հասարակությունների ձևավորման մասին.
3. կկարողանա ճշգրտորեն գնահատել ժողովրդավարական գործընթացների շարժընթացը ամերիկյան և եվրոպական հասարակություններում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն: **Թեմա 2՝** <<Դեմոկրատիա>> հասկացությունը: **Թեմա 3՝** Ժողովրդավարությունն արևմտյան ժողովրդաիշխանության համակարգում: **Թեմա 4՝** Ժողովրդաիշխանությունն արևմտյան ժողովրդավարության համակարգում: **Թեմա 5՝** Արևմտյան ժողովրդավարությունների տիպաբանությունը: **Թեմա 6՝** Մեծ Բրիտանիա: **Թեմա 7՝** Ամերիկայի Միացյալ Նահանգներ: **Թեմա 8՝** Ֆրանսիա: **Թեմա 9՝** Իտալիա: **Թեմա 10՝** Հունաստան: **Թեմա 11՝** Գերմանիա: **Թեմա 12՝** Շվեյցարիա: **Թեմա 13՝** Իսպանիա: **Թեմա 14՝** Եվրոպական միության քաղաքական համակարգը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0301/B39. «ԱՐԴԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (24 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել համապատասխան գիտելիքներ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Ռուսաստանում ձևավորվող քաղաքական կուսակցությունների և նրանց դերակատարության մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա Ռուսաստանի քաղաքական կուսակցությունների ձևավորման գործընթացը,
2. կհասկանա քաղաքական կուսակցությունների ձևավորման պատմական անհրաժեշտությունը և նրանց դերը երկրի քաղաքական կյանքում,
3. կկարողանա տեսական գիտելիքների հիման վրա վերլուծել երկրի քաղաքական կյանքը և անել տեսական ընդհանրացումներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հեղափոխական նարոդնիկական շարժումը որպես քաղաքական կուսակցությունների ձևավորման նախորդ շրջան: **Թեմա 2՝** Մարքսիզմի տարա-

ծումը Ռուսաստանում և Գ. Վ. Պլեխանովի «Աշխատանքի ազատագրություն» խումբը: **Թեմա 3**՝ ՌՄԴԲԿ ստեղծումը, նրա ծրագիրը և գործունեությունը: **Թեմա 4**՝ Սոցիալիստ հեղափոխականների կուսակցությունը, նրա ծրագիրը և գործունեությունը: **Թեմա 5**՝ Ռուսական լիբերալ կուսակցությունները: Սահմանադրական-դեմոկրատական կուսակցությունը: **Թեմա 6**՝ «Հոկտեմբերի 17-ի միություն» (Օկտյաբրիստներ) կուսակցությունը: **Թեմա 7**՝ Կառավարական պահպանողական (կոնսերվատիվ) կուսակցությունները: **Թեմա 8**՝ Տրուդովիկների («Աշխատանքային խումբ») մանրբուրժուական քաղաքական կուսակցությունը: **Թեմա 9**՝ Բազմակուսակցական համակարգի վերացումը և միակուսակցական համակարգի ձևավորումը Ռուսաստանում: **Թեմա 10**՝ Այլախոհական շարժումները ԽՍՀՄ-ում 1960–80-ական թթ.: **Թեմա 11**՝ Գորբաչովյան վերակառուցման քաղաքականությունը և անցումը բազմակուսակցական համակարգի: **Թեմա 12**՝ «Ռուսաստանի համայնքների կոնգրես» հասարակական-քաղաքական շարժումը: **Թեմա 13**՝ «Միասնական Ռուսաստան» կուսակցությունը: **Թեմա 14**՝ «Արդարացի Ռուսաստան» կուսակցությունը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0301/B40. «ԱՌԱՋԱՎՈՐ ԱՄԻՍՅՈՒ ԵՎ ԿՈՎԿԱՍԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4.5 ժամ (12 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների ծանոթացնել Առաջավոր Ասիայի, Կովկասի քաղաքակրթությունների պատմությանը, հոգևոր և նյութական մշակութային էթնիկ գործընթացներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա արդի քաղաքակրթությունների ծագման տեսական հիմնադրույթները.
2. կհասկանա ուսումնասիրվող հանրությունների քաղաքակրթական տիպաբանական կազմը.
3. կկարողանա կատարել վերլուծական դատողություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հին քաղաքակրթությունները և դրանց բնորոշումը, բաղադրիչ տարրերը: Մշակութային պրոցեսների ուսումնասիրումը և վերակազմությունը:

Թեմա 2՝ Վաղ երկրագործական պատմա-մշակութային համալիրները: **Թեմա 3՝** Միջագետքի հնագույն մշակույթները: Նեոլիթյան հեղափոխությունը և նրա հետևանքները: **Թեմա 4՝** Արևելամիջերկրական և փոքրասիական վաղ երկրագործական և հնագիտական մշակութային օջախները: **Թեմա 5՝** Իրանի հին մշակույթը: Փոխառնչությունները Հայկական լեռնաշխարհի վաղ երկրագործական օջախների հետ: **Թեմա 6՝** Կովկասի հնագիտական համագարկերը նեոլիթից երկաթի դարյան ժամանակաշրջանում: **Թեմա 7՝** Վանի թագավորության ֆենոմենը: Ուրարտական մշակույթի դրսևորումները Հայկական լեռնաշխարհում: Տեղումնական մշակույթ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0301/Բ41. «ԿՈՎԿԱՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4.5 ժամ (12 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել կովկասյան տարածաշրջանի քաղաքական և էթնիկ պատմության հիմնական փուլերին ու հիմնախնդիրներին, տարածաշրջանի զարգացումները դիտարկել հայոց պատմության և հայերի հետ փոխահարաբերությունների համատեքստում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա տարածաշրջանի էթնիկ և քաղաքական պատմության հիմնական փուլերը,
2. ծանոթ կլիմի ինչպես ողջ տարածաշրջանի, այնպես էլ վերջինիս առանձին կառուցվածքային միավորների էթնոքաղաքական պատմության հիմնական փուլերին,
3. ծանոթ կլիմի տարածաշրջանի հիմնական էթնիկ հակամարտություններին ու կկարողանա տալ վերջիններիս համեմատական վերլուծությունը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Կովկասյան տարածաշրջանի էթնոքաղաքական հիմնական բնութագիրը, հիմնական էթնիկ հանրությունները: **Թեմա 2՝** Կովկասյան տարածաշրջանի էթնոքաղաքական պատմության հիմնական փուլերը. ըստ խոշոր տարածաշրջանների և էթնիկ հանրությունների: **Թեմա 3՝** Կովկասյան տարածաշրջանի հիմնական էթնիկ հակամարտությունները. ձևավորման ընթացքը, զար-

գացումները, արդի վիճակը: **Թեմա 4՝** Տարածաշրջանի արդի էթնոքաղաքական վիճակն ու զարգացման հեռանկարները: **Թեմա 5՝** Հայաստանի Հանրապետությունը տարածաշրջանային զարգացումների համատեքստում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0301/В15. «ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՎ ՀԱՅՈՅ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4.5 ժամ (12 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության առավելապես բանավիճային և քիչ ուսումնասիրված հիմնախնդիրներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ծանոթ կլինի Հայկական հարցի առաջացման, նրա էության, զարգացման փուլերի շուրջ պատմագիտության մեջ գոյություն ունեցող իրարամերժ կարծիքներին,
2. կկազմի առավել խոր պատկերացում Հայկական հարցի նկատմամբ մեծ տերությունների և միջազգային դիվանագիտության դիրքորոշման, Հայկական հարցի ուղղությամբ հայ քաղաքական կուսակցությունների ռազմավարության և մարտավարության փոփոխությունների մասին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայկական հարցի ծագման և նրա էության շուրջ պատմագրության մեջ գոյություն ունեցող կարծիքները և նշեց քննական վերլուծությունը: **Թեմա 2՝** Հայկական հարցի զարգացման փուլերը: **Թեմա 3՝** Հայկական հարցը հայ քաղաքական կուսակցությունների ծրագրերում: **Թեմա 4՝** Հայկական հարցի միջազգայնացումը: **Թեմա 5՝** Հայկական հարցը արդի փուլում, նրա բովանդակությունը և լուծման եղանակները: **Թեմա 6՝** Հայոց ցեղասպանության պատճառները: **Թեմա 7՝** Ցեղասպանության իրագործման փուլերը: **Թեմա 8՝** Հայոց ցեղասպանության դասերն ու հետևանքները: **Թեմա 9՝** Միջազգային իրավունքը և ցեղասպանությունը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 1 է:

0301/B51 «ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» -1 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4.5 ժամ (12 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել ժողովրդավարության որպես հասարակության կառավարման ձևի ծնունդը, զարգացումը և անկումը անտիկ քաղաքակրթության, մասնավորապես պոլիսային համակեցության համատեքստում: Դասընթացի ընթացքում քննության է ենթարկվում անտիկ ժողովրդավարության ինստիտուցիոնալ կառույցը (քաղաքացիության ինստիտուտ, աշխարհաժողով, պետական խորհուրդ, պաշտոնեություն, դատարաններ ևն), գաղափարախոսական հենքը: Դիտարկվում է «ժողովրդավարություն» հասկացության մշակումը, նրա հարաբերակցումը քաղաքական կառավարման մյուս ձևերի հետ անտիկ հասարակական-քաղաքական, իմաստասիրական մտքի ծիրում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ժողովրդավարության իբրև հասարակության կառավարման ձևի առաջացման պատճառների, Հին Հունաստանում և Հռոմում զարգացման փուլերի մասին: Ինչպես նաև <<ժողովրդավարություն>> հասկացության տեսական բովանդակությանն անտիկ հասարակական-քաղաքական, իմաստասիրական մտքի մշակումների և առանձնահատկությունների մասին:
2. գնահատել անտիկ ժողովրդավարության իմաստը, բովանդակությունը, առանձնահատկությունները: Կատարելագործել ժողովրդավարական հաստատությունների գործառնությունները, իրավասությունները, դրանց գործառնական ընթացակարգը:
3. վերհանել անտիկ ժողովրդավարության զարգացման ընդհանուր միտումներն ու առանձնահատկությունները, առավել հիմնավոր կերպով շարունակել <<ժողովրդավարության պատմություն>> դասընթացի ուսումնառությունը՝ հետևելով <<ժողովրդավարություն>> տերմինի, նրա բովանդակության, անտիկ քաղաքակրթության ծիրում մշակված ժողովրդավարական վարչակարգի կառուցակազմի և բաղադրատարրերի, ժողովրդավարության տեսության կերպափոխմանը հետագա պատմական դարաշրջաններում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ <<ժողովրդավարություն>> հասկացությունը, նրա իմաստային և ծագումնաբանական վերլուծությունը: **Թեմա 2՝** Քաղաքացիական համայնքն (պոլիս, կիվիտաս) իբրև անտիկ քաղաքակրթության հիմնարար կառույց և դրա

կարևորագույն չափորոշիչները: **Թեմա 3՝** Պոլիսային համակեցության ձևավորումը Հին Հունաստանում: Ժողովրդավարական կարգի կայացման պատճառները Աթենքում: **Թեմա 4՝** Աթենական ժողովրդավարության կայացման փուլերը. Ա.Սոլոնի բարենորոգումները. Բ. Կլիսթենեսի և Պերիկլեսի բարենորոգումները, գ. Պերիկլեսյան դարաշրջանը: **Թեմա 5՝** Ժողովրդավարական հաստատությունները, դրանց համալրման սկզբունքները, գործառույթները, իրավասությունները, գործառումը Հին Հունաստանում. Ա. Քաղաքացիության ինստիտուտ, բ. Աշխարհաժողով (Էկլեսիա), գ. Պետական խորհուրդ (500-ի խորհուրդ, բուլե), դ. Արեոպագոս, ե. Դատական իշխանություն (հելիայա), զ.ործադիր իշխանություն (ստրատեգոսների խորհուրդ ևն): **Թեմա 6՝** Աթենական ժողովրդավարության ընկերային քաղաքականությունը: <<Պերիկլեսի ճառը>> և աթենական ժողովրդավարության գաղափարախոսությունը **Թեմա 7՝** Թատրոնը որպես աթենական քաղաքացիների կրթման <<դպրոց>>: **Թեմա 8՝** Պլատոնի հասարակագիտությունը (<<Պետություն>>, <<Օրենքների մասին>> տրամախոսությունները): **Թեմա 9՝** Արիստոտելի ուսմունքը մարդու, հասարակական համակեցության և պետության վերաբերյալ (<<Պոլիտեյա>>, <<Աթենական պոլիտեյա>>, <<Բարոյագիտություն>>): **Թեմա 10՝** Ժողովրդավարության անկման պատճառները Հին Հունաստանում: Նրա պատմական նշանակությունը: Ժողովրդավարության զարգացման առանձնահատկությունները Հին Հռոմում: **Թեմա 11՝** Դասային պայքարը: Հանրապետական կարգի և հռոմեական քաղաքացիական համայնքի ձևավորումը Հին Հռոմում: **Թեմա 12՝** Հին Հռոմի պետական-քաղաքական կարգը Ք.ա. V-III դդ.ա. հռոմեական քաղաքացիության ինստիտուտը և նրա էվոլյուցիան, բ. աշխարհաժողով (կոմիտիաներ), գ. պետական խորհուրդ (սենատ), դ. գործադիր իշխանություն (մագիստրատուրաներ): **Թեմա 13՝** Ստոիկյան իմաստասիրությունը և հռոմեական <<հասարակական ինքնաձանաչողությունը>>: **Թեմա 14՝** Պոլիբիոսի <<Համաշխարհային պատմությունը>>, խառը պետական կառույցի մասին նրա տեսությունը: Հանրապետական կարգի ճգնաժամի և անկման պատճառները: **Թեմա 15՝** Կ. Սալյուստիոսը որպես Հռոմեական Հանրապետության ճգնաժամի տեսաբան (<<Կատիլինայի դավադրությունը>>, <<Յուգուրթական պատերազմ>>): **Թեմա 16՝** Մ. Կ. Կիկերոնը և <<հանրապետական միապետության>> (պրինցիպատ) իմաստասիրական հարացույցի համակողմանի մշակումը (<<Հանրապետության մասին>>, <<Օրենքների մասին>>, <<Պարտականությունների մասին>>, <<Բարեկամության մասին>>): **Թեմա 17՝** Հռոմեական ժողովրդավարության պատմական նշանակությունը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 1 է:

0301/Բ52 «ՀՈՈՄԵԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՐՈՒՅ-ԹԸ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4.5 ժամ (12 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, առանց եզրափակիչ գնահատման
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել հռոմեական քաղաքակրթության հիմնական բաղադրատարրերը (լատիներեն լեզու, պետական կառույց, իրավունք, մշակույթ, արտադրական և մտահոգևոր տեխնոլոգիաներ) և նրա ազդեցությունը եվրոպական միջնադարյան, նոր և նորագույն քաղաքակրթության նկարագրի վրա:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. եվրոպական քաղաքակրթության սկզբնավորման և զարգացման շրջափուլերի մասին՝ սկսած հռոմեական դարաշրջանից մինչև մեր օրերը՝ ըստ հիմնարար պետական, հասարակական կառույցների, տեխնոլոգիաների, մշակութային և կրոնական հարացույցների:
2. եվրոպական քաղաքակրթության տիպաբանության և հիմնական հատկանիշների մասին
3. եվրոպական ինքնության և պատմական տարբեր շրջափուլերում եվրոպական համընդհանրության տարբեր հարացույցների մասին
4. Եվրոպան դիտարկել իբրև միասնական քաղաքակրթական գործընթաց (անցյալ, ներկա, ապագա)
5. ի մի բերել համաշխարհային պատմության դասընթացներում (Անտիկ պատմություն, Միջին դարերի պատմություն, Նոր պատմություն, Նորագույն պատմություն) ձեռք բերած գիտելիքները եվրոպական պատմության վերաբերյալ

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հռոմեական քաղաքակրթության ընդհանուր բնութագիրը՝ պետական, հասարակական կառույց, գաղափարախոսություն, իրավունք, արտադրական տեխնոլոգիաներ, մշակույթ, լեզու, կենցաղավարություն ևն: **Թեմա 2՝** Հռոմեական տերության ձևավորումը (Ք. ա. II - Ք. հ. III դդ.): **Թեմա 3՝** Հռոմեական խաղաղության հարացույցը: **Թեմա 4՝** Հռոմեական կայսրությունը իբրև միջազգային տարասեռ հարաբերությունների միջավայր: **Թեմա 5՝** Ռոմանականացման գործընթացը Արևմուտքում՝ քաղաքներ, վարչական ապարատ, տեխնոլոգիաներ, լատիներեն լեզու, մշակույթ, հռոմեական ապրելաձև ևն: **Թեմա 6՝** Ուշ անտիկ դարաշրջան (Ք. ա. 3-7-րդ դդ.): **Թեմա 7՝** Բարբարոսական արշավանքները և հռոմեական քաղաքակրթության կերպափոխությունը: **Թեմա 8՝** Արևմտաեվրոպական քաղաքակրթությունը իբրև հռոմեական և բարբարոսական աշխարհների համաձուլման միջավայր: **Թեմա 9՝** Միջնադարյան քաղաքակրթական կենտրոնները Արևմտյան Եվրոպայում: **Թեմա 10՝** Վաղ պետական կազմավորումները և ժողովուրդների ձևավորման գործընթացը: **Թեմա 11՝** Եվրոպայի քաղաքական միասնության (կայսրության) գաղափարը (Կարլոս Մեծ, Օտտոն Ա): **Թեմա 12՝** Պապականությունը և քրիստոնեական համընդհանրությունը: **Թեմա 13՝** Քաղաքական բազմազանությունը և հոգևոր-մշակութային ընդհան-

րությունը Արևմտյան Եվրոպայում: **Թեմա 14՝** Վերածնունդը և եվրոպական համընդհանրության նոր հարացույցը: **Թեմա 15՝** Ռեֆորմացիան և եվրոպական համընդհանրության նոր հարացույցը: **Թեմա 16՝** Արդյունաբերական քաղաքակրթությունը (17-րդ դ. - 20-րդ դ. սկիզբ) և հռոմեական ժառանգությունը: **Թեմա 17՝** Հասարակության նորացումը՝ տեխնոլոգիաներ, պետական կառավարման ձևեր (հեղափոխություններ, լուսավորյալ միապետություն, պառլամենտարիզմ), հասարակական միտք ևն: **Թեմա 18՝** Հետարդյունաբերական քաղաքակրթությունը և հռոմեական ժառանգությունը (20-րդ դ. կեսից մինչև մեր օրերը): **Թեմա 19՝** Եվրամիությունը և եվրոպական հանընդհանրության արդի հարացույցը՝ միություն բազմազանության մեջ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 1 է

0202/B33. «ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՎԵՍՏԸ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4,5 ժամ (12 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 9-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսումնասիրել Հին Հայաստանի արվեստի ժամանակագրական ընդգրկումը: Գիտելիքներ հաղորդել արվեստի, նրա ծագման հիմնական վարկածների և տեսությունների, արվեստի զարգացման հիմնական ուղղությունների և միտումների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա արվեստի ծագման մասին հիմնական վարկածները.
2. ծանոթ կլինի արվեստի զարգացման հիմնական ուղղությունների և միտումների հետ.
3. կկարողանա թվագրել և արվեստագիտական տեսակետից բնորոշել փաստական նյութը:

Բովանդակություն.

Թեմա 1՝ Քարեդարյան արվեստը: **Թեմա 2՝** Էնեոլիթի արվեստը: **Թեմա 3՝** Վաղ բրոնզեդարյան արվեստը: **Թեմա 4՝** Միջին բրոնզեդարյան արվեստը: **Թեմա 5՝** Ուշ բրոնզեդարյան արվեստը: **Թեմա 6՝** Երկաթեդարյան արվեստը: **Թեմա 7՝** Վանի թագավորության արվեստը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0301/B50. «ԴՄՍՍԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԻՍՍԳՐՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4.5 ժամ (12 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 9-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին ամբողջական և համակողմանի գիտելիքներ տալ դրամների հանդես գալու, նրանց շրջանառության և դրամագիտության, որպես գիտության վերաբերյալ: Դասընթացը ուսանողին ծանոթացնում է հայերեն և օտար լեզուներով վիմագիր արձանագրություններին, դրանց՝ ըստ ժամանակների օրինաչափությունների ուսումնասիրությանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա դրամների հանդես գալու, նրանց շրջանառության սկզբունքները, դրամագիտության գիտական խնդիրները.
2. կտիրապետի վիմագիր արձանագրություններ կարդալու սկզբունքներին.
3. կտիրապետի արձանագրությունների տոմարական հաշվարկներին.
4. արձանագրությունների գիտական հրատարակման սկզբունքներին.
5. կտիրապետի արձանագրությունները որպես վավերագրեր օգտագործելու հիմունքներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Դրամագիտության առարկան: **Թեմա 2՝** Դրամագիտության հիմնական հասկացությունները: **Թեմա 3՝** Դրամի ծագումը: **Թեմա 4՝** Հելլենիստական դրամների շրջանառությունը Հայաստանում և հելլենիստական Հայաստանի դրամները: **Թեմա 5՝** Հռոմեական, բյուզանդական և սասանյան դրամները: **Թեմա 6՝** Արաբական, սելջուկյան և Կիլիկիայի հայկական թագավորության դրամները: **Թեմա 7՝** Պարսկաստանի և Օսմանյան կայսրության դրամները: **Թեմա 8՝** Ռուսական կայսրության դրամները և Հայաստանը: Հայաստանի առաջին հանրապետության դրամները: Խորհրդային Հայաստանը ԽՍՀՄ-ի դրամական հարաբերությունների համակարգում: **Թեմա 9՝** Հայաստանի Երրորդ Հանրապետության դրամները: **Թեմա 10՝** Վիմագրություն առարկան, նշանակությունը: **Թեմա 11՝** Հայ գրերի գյուտը: Վիմագրության ծագումը, նպատակը: **Թեմա 12՝** Վիմագրերի իմաստային նշանակությունը, տրաֆարետային որոշ ձևակերպումների առկայությունը վիմագրերի մեջ: **Թեմա 13՝** Փակագրություն, ծածկագրերի և կետադրական նշանների ու պայմանականության ընդունված հիմնական սկզբունքները: **Թեմա 14՝** Գրիչները, նրանց առանձնահատկությունները կապված տեղական զբոսայգու օջախի հետ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0301/B53 «ԴԵՍՈԿՐԱՏԻՎԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-2 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4.5 ժամ (12 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 9-րդ, առանց եզրափակիչ գնահատման
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել ժողովրդավարության որպես հասարակության կառավարման ձև, ավելի քան 2.5 հազ. տարի աշխարհը ծանոթ է այդպիսի երևույթի, ինչպիսին է ժողովրդավարությունը: Այն բավականին տեղական ժամանակաշրջանում մարդիկ հնարավորություն ունենին համեմատելու և համադրելու տարբեր կառավարման ձևն ու պետական կառուցվածքները, մարդու և իշխանության փոխհարաբերությունների առանձնահատկությունները: Արդյունքում արևմտյան քաղաքագիտական միտքն հանգեց այն դատողությանը, որ պետական կառավարման և մարդկային համակեցության արդյունավետ գործունեության համար մարդու կառավարման ձևերից ժողովրդավարությունն ամենա արդյունավետն է և ընդունելի:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կիմանա ժողովրդավարությունը զարգացման ինչ փուլերով է անցել ծուրջ 3 հազ. տարվա ընթացքում,
2. կհասկանա անտիկ ռեսպուբլիկայի և դեմոկրատիայի իմաստային տարբերությունը,
3. կկարողանա կիրառել անտիկ և միջնադարյան ռեսպուբլիկանիզմի և դեմոկրատիայի փորձը արդի քաղաքագիտական տեսությունները ուսումնասիրելիս և վերլուծելիս:

Բովանդակություն

Թեմա 1՝ Իտալական քաղաք-պետությունները Բարձր միջնադարում:

Թեմա 2՝ Ռեսպուբլիկանիզմի նոր փորձառություն: ***Թեմա 3՝*** Միջնադարյան դուքրովնիկ քաղաք-պետության առանձնահատկությունները: ***Թեմա 4՝*** Պարոն Մեծ Նովգորոդի և Սկովի հանրապետությունները 9-16-րդ դդ.: ***Թեմա 5՝*** Անտիկ և միջնադարյան հանրապետությունների համեմատությունն ու համադրությունը: ***Թեմա 6՝*** Արդիականացման գործընթացները Անգլիայում 1688թ. <<Փառահեղ հեղափոխությունից>> հետո: ***Թեմա 7՝*** Սահմանադրական միապետություն: ***Թեմա 8՝*** Ժամանակակից ժողովրդավարության մեխանիզմների ամրագրումը 18-րդ դարի վերջին Միացյալ Նահանգներում: ***Թեմա 9՝*** Ֆրանսիական բուրժուական

հեղափոխությունն և դրա ազդեցությունը 19-րդ դարի Եվրոպայի քաղաքականացման և ժողովրդավարացման հիման վրա: **Թեմա 10՝** Արդի ժողովրդավարության տարբերակների կոնսոլիդացումը Ամերիկյան և Ֆրանսիական ժողովրդավարության ձեռքբերումների հիման վրա: **Թեմա 11՝** Ժողովրդավարական ինստիտուտները և քաղաքացիական հասարակությունը արդի դարաշրջանում: **Թեմա 12՝** Հայաստանը արդի ժողովրդավարության համատեքստում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0301/B42. «ՀՈՒՆՍՍՏԱՆԻ ՊՍՏՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4.5 ժամ (12 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 9-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել Հունաստանի պատմությունը օսմանյան տիրապետության ժամանակաշրջանում, նրա անկախության վերականգնման և տնտեսական, մշակութային զարգացման հիմնախնդիրները մինչև մեր օրերը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կատարելագործի Հունաստանի պատմության՝ վերսկսած օսմանյան տիրապետությունից մինչև 1930թ. անկախության ժամանակաշրջանը,
2. կիմանա Հունաստանի տնտեսական, կրոնական զարգացումները մինչև մեր օրերը,
3. կընկալի հույն ժողովրդի ստեղծած մշակութային արժեքները,
4. ճիշտ կմեկնաբանի նրա տեղն ու դերը արդի աշխարհում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բալկանյան թերակղզու և Հունաստանի նվաճումը Հռոմի կողմից: Հունաստանը Հռոմեական տիրապետության ժամանակաշրջանում: **Թեմա 2՝** Լոնդոնի կոնֆերանսը և Հունաստանի անկախության ճանաչումը: **Թեմա 3՝** Հունաստանի ներքաղաքական դրությունը 60-ական թթ.: **Թեմա 4՝** Հունաստանը անգլիական դիվանագիտության ծրագրերում: **Թեմա 5՝** Հունաստանի մասնակցությունը Փարիզի հաշտության կոնֆերանսին: **Թեմա 6՝** Լոզանի կոնֆերանսի որոշումները Հունաստանի վերաբերյալ: **Թեմա 7՝** Հունաստանը երկրորդ աշխարհամարտի և քաղաքացիական պատերազմների հետնախորքում: **Թեմա 8՝** Հունաստանի ներքաղաքական կյանքի դեմոկրատացման համար մղված պայքարը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0301/B43. «ԹՈՒՐԳԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4.5 ժամ (12 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 9-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել Թուրքիայի (13-րդ դարից սկսած) պատմությունը, բացահայտել տարբեր ժամանակաշրջաններում այդ երկրի զարգացման օրինաչափությունները, արտաքին և ներքին քաղաքականությունների միտումները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա Թուրքիայի պատմության հիմնական խնդիրները.
2. կհասկանա Թուրքիայի պատմական զարգացման օրինաչափությունները՝ տիրապետելով պատմության վերլուծական մեթոդին.

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Թուրքիա. 1-ին Թուրքական պետական կազմավորումները Փոքր Ասիայում: Օսմանյան պետության կազմավորումը: **Թեմա 2՝** Օսմանյան կայսրությունը 16–18-րդ դդ.: **Թեմա 3՝** Օսմանյան կայսրությունը 19-րդ դդ.: **Թեմա 4՝** Օսմանյան կայսրությունը 1900–1918 թթ.: Պանթուրքիզմի քաղաքականությունը և կայսրության կործանումը: **Թեմա 5՝** Թուրքիայի Հանրապետությունը (մինչև 1945 թ.): **Թեմա 6՝** Թուրքիան 1945–2005 թթ.:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0301/B53. «ԻՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4.5 ժամ (12 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 9-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել Իրանի (3-րդ դ-ից սկսած) բացահայտել տարբեր ժամանակաշրջաններում այդ երկրների զարգացման օրինաչափությունները, արտաքին և ներքին քաղաքականությունների միտումները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կլիմանա Իրանի պատմության հիմնական խնդիրները,
 - ❖ կհասկանա Իրանի պատմական զարգացման օրինաչափությունները՝ տիրապետելով պատմության վերլուծական մեթոդին,
 - ❖ ձեռք կբերի ընդհանուր պատկերացումներ Իրանի պատմության վերաբերյալ
 - ❖ կկարողանա կատարել անհրաժեշտ համեմատական եզրահանգումներ
2. ի վիճակի կլինի մասնակցելու գիտաժողովների և կոնֆերանսների

Բովանդակությունը

Թեմա 1՝ Իրան. Սասանյան Իրանը 3-7-րդ դդ.: **Թեմա 2՝** Արաբական տիրապետությունը Իրանում: **Թեմա 3՝** Իրանը 11-15-րդ դդ.: **Թեմա 4՝** Սեֆյան Իրանը (Պարսկաստանը) 16-18-րդ դդ.: **Թեմա 5՝** Իրանը 19-րդ դ.: **Թեմա 6՝** Իրանը 20-րդ դ. 1-ին կեսին: **Թեմա 6՝** Իրանը 20-րդ դ. 2-րդ կեսին:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0301/B46. «ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4.5 ժամ (12 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 9-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել աշխարհաքաղաքականության բազմաթիվ հիմնախնդիրների նկատմամբ մասնագիտական պատկերացումներ, պատշաճ գիտելիքներ աշխարհաքաղաքական բարդ գործընթացների վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կլիմանա արդի աշխարհաքաղաքականության հիմունքների տեսական հիմնախնդիրները.

2. կիսականա աշխարհաքաղաքականության՝ որպես գիտության վերլուծության մեթոդաբանական հիմունքները և պատմական հեռանկարները.
3. կկարողանա տեսական գիտելիքների հիման վրա կատարել անհրաժեշտ վերլուծություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Աշխարհաքաղաքականությունը որպես գիտություն և նրա ձևավորման ու զարգացման հիմնական փուլերը: **Թեմա 2՝** Աշխարհա-քաղաքականության հիմնական դպրոցներն ու ուղղությունները: **Թեմա 3՝** Աշխարհի համընդհանրացումը՝ գլոբալիզացիա: **Թեմա 4՝** Աշխարհաքաղաքականությունը գաղափարախոսության և աշխարհայացքային տեսանկյունից: **Թեմա 5՝** Արդի դարաշրջանի աշխարհաքաղաքական պատկերը: **Թեմա 6՝** Մեծ տերությունների աշխարհաքաղաքական շահերը Հարավային Կովկասում: **Թեմա 7՝** Ռուսաստանի Դաշնության աշխարհաքաղաքական շահերը Հարավային Կովկասում և հայ-ռուսական հարաբերությունները հետխորհրդային շրջանում: **Թեմա 8՝** ՀՀ ռազմավարության հիմնահարցերը և ուղղությունները: **Թեմա 9՝** Միջազգային հակամարտությունները և դրանց լուծման ուղիները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

կկարողանա կատարել ձևաբանական վերլուծություններ, ճիշտ կկիրառի քե-րականական գուգաձևությունները:

a. «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտություն

0304/B10. «LUSFLԵԼԵՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 1 ժամ (12 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 1-ին, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել համաշխարհային պատմության և ներկայիս մշակույթի համար կարևոր նշանակություն ունեցող դասական լատիներենը, ցույց տալ նրա գործնական ու տեսական արժեքը նրանց հիմնական մասնագիտության յուրացման հարցում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա միջազգային հաղորդակցման համար անհրաժեշտ դեր ունեցող լատինական այբուբենը, բոլոր գիտակարգերում կիրառվող տերմինները, քերականական տերմինների ակունքները.
2. կհասկանա մշակութային կյանքի շատ նրբություններ շնորհիվ լատինական բառերի ներքին բովանդակության բացահայտման.
3. կկարողանա խուսափել ժամանակակից լեզուներում, գովազդներում և այլուր շատ հասկացությունների գործածությունից:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Լատիներեն բառը բառարանում ներկայացվելու առանձնահատկությունները: **Թեմա 2՝** Հոլովման համակարգը: **Թեմա 3՝** Խոնարհման համակարգը: **Թեմա 4՝** Ածականների համեմատության աստիճանները և հոլովումը: **Թեմա 5՝** Շարահյուսական առանձնահատկությունները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

0304/B43. «ԱՆՊԼԵՐԵՆ ԼԵՁՈՒ»-1 (8 կրեդիտ)

Շաբաթական՝ 5 ժամ (60 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 1-ին, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողի արտասանական հմտությունները, նպաստել հնչյունների ճիշտ արտաբերմանը՝ տալով նրանց ոչ միայն գործնական, այլև համառոտ տեսական գիտելիքներ հնչյունաբանությունից: Զուգահեռ կատարվում է նաև գործնական քերականական ամրապնդում ժամանակային ձևերի միջոցով, ինչպես նաև միջնակարգ դպրոցում յուրացված ընդհանուր գործածության բառապաշարի ընդլայնում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի անգլերենի արտասանության օրենքներին,
2. ձևաք կրերի համառոտ և հիմնական գիտելիքներ,
3. կկարողանա գործնականում ճիշտ արտաբերել անգլերենի հնչյունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Անգլերենի հնչյունական համակարգի առանձնահատկությունները: Հնչյունների դասակարգումը: **Թեմա 2՝** Բաղաձայններ (դասակարգումն ըստ արտաբերման տեղի և ձևի): **Թեմա 3՝** Ձայնավորներ (դասակարգումն ըստ լեզվի բարձրության և դիրքի): **Թեմա 4՝** Բնագիր ստեղծագործությունների արտալսարանային ընթերցում և վերլուծում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0304/B68. «ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 1 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 1-ին, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ պատշաճ գիտելիքներ ձևավորել գրականագիտական հիմնական հասկացությունների, տերմինների, գրական երկի կառուցվածքային առանձնահատկությունների, նրա տարրերի վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. յուրացրած կլինի արդի գրականագիտության կարևորագույն հասկացությունները.
2. որոշակի պատկերացում կունենա գրական գործընթացի, դրա բաղադրատարրերի մասին.
3. կկարողանա կատարել ցանկացած գրական տեքստի գրականագիտական վերլուծություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գրականագիտության հիմնական բաժինները, նրանց կապը: Արվեստի տեսակները, նրանց դասակարգումը: Գրականության տեղը արվեստի տեսակների շարքում: **Թեմա 2՝** Գրական պատկերման գլխավոր առարկան:

Գրական-գեղարվեստական պատկերի տեսակները: **Թեմա 3՝** Գրական երկի թեման և թեմատիկան: Գրական երկի կոմպոզիցիան, նրա ձևերն ու միջոցները: Գրական երկի սյուժեն, նրա տարրերը: **Թեմա 4՝** Գեղարվեստական լեզվի առանձնահատկությունները: Լեզվի պատկերավորման շարահյուսական և բանասիրական միջոցները: **Թեմա 5՝** Տաղաչափական համակարգեր: Բանաստեղծության կայուն ձևեր: **Թեմա 6՝** Գրական սեռեր և ժանրեր: Էպիկական, քնարական և դրամատիկական սեռերի առանձնահատկությունները: Կերպարի կառուցման եղանակները տարբեր սեռերում: Գրական ժանրերի տարբերակման հիմնական սկզբունքները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

0302/B61. «ՀԱՅ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 1 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 1-ին, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայ գրականությունը, գրական երկերի ժանրային առանձնահատկությունները, զարգացման ուղղությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հայ գրականության ժանրերը, զարգացման հիմնական ուղղությունները, պատմական դեպքերի արտացոլումը գրականության մեջ,
2. կհասկանա գրական ստեղծագործությունների գաղափարական առանձնահատկությունները, գրական երկերի պատմական-հասարակական դերը,
3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայ մշակույթը մինչև 5-րդ դար: Մեսրոպ Մաշտոցը և գրերի ստեղծումը. գրականության զարգացման հիմնական ուղղությունները: **Թեմա 2՝** Պատմագրություն: **Թեմա 3՝** Հայ միջնադարյան գրականությունը: **Թեմա 4՝** Հայ

նոր գրականությունը: **Թեմա 5՝** Հայ նորագույն գրականությունը: **Թեմա 6՝** Արդի հայ գրականությունը և նրա զարգացման միտումները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

0302/B55. «ԳՐԱԲԱՐ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 1 ժամ (12 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հին հայերենի՝ գրաբարի հնչյունական, բառային, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գրաբարի հնչյունական, ուղղագրական, հնչյունափոխական, բառային, ձևաբանական և շարահյուսական հատկանիշները.
2. կհասկանա գրաբար տեքստերը.
3. կկարողանա կատարել գրաբարյան բնագրերի վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գրաբարը՝ որպես հայերենի զարգացման շրջան. գրաբարի ընդհանուր առանձնահատկությունները: **Թեմա 2՝** Գրաբարի հնչյունական համակարգը. երկբարբառներ և եռաբարբառներ: **Թեմա 3՝** Բայ. դերբայներ, խոնարհում, անկանոն բայեր: **Թեմա 4՝** Գոյական. հոլովներ և հոլովումներ: **Թեմա 5՝** Դերանուն. դերանվանական հոլովում. մյուս խոսքի մասերը: **Թեմա 6՝** Գրաբարի շարահյուսական հիմնական առանձնահատկությունները: Գրաբարյան բնագրերի թարգմանություններ և վերլուծություններ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

0304/B93. «ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» -1 (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 1 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 3-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել անտիկ գրականության ժառանգությունը՝ հիմնվելով աղբյուրների և տեսական նյութի վրա:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա անտիկ գրականության առանցքային գրական նյութը,
2. կծանոթանա դրա ներքին զարգացումներին և հասկացություններին,
3. կիմանա անտիկ գրականության ավանդական տեսական մոտեցումները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Անտիկ գրականության հասկացությունը, պարբերացումը, «հունական հրաշքի» քննադատությունը: **Թեմա 2՝** Հոմերոսի «Իլիականը» և «Ոդիսականը». աստվածներ և մարդիկ, դիցաբանական և բանաստեղծականը: Հեսիոդոսի «Աշխատանք և օրեր» բարոյախրատական պոեմը: **Թեմա 3՝** Հունական քնարերգության ծագումն ու զարգացումը, թեմատիկան, բանաստեղծները: **Թեմա 4՝** Հունական թատրոն և դրամա, կատակերգություն և ողբերգություն. (Էսքիլես, Սոփոկլես, Եվրիպիդես, Արիստոփանես): **Թեմա 5՝** Հելլենիստական գրականության հասկացությունը, հռոմեական գրականության ծագումը, շրջանները: **Թեմա 6՝** Հռոմեական կատակերգակներ, հռոմեական «ոսկեդար», Վերգիլիոսի «Էնեականը» և դրա կապը հունական էպոսի հետ: Անտիկ աշխարհի կործանման պատճառները և քրիստոնեական գրականության սկզբնավորումը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 3, 3, 2, 2 միավոր:

Միավորների քայլը 0,5 է:

0304/B44. «ԱՆԳԼԵՐԵՆ ԼԷՁՈՒ»-2 (8 կրեդիտ)

Շաբաթական՝ 5 ժամ (60 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է խորացնել ուսանողի լեզվական և քերականական գիտելիքները, հարստացնել բառապաշարը և կատարելագործել նրանց հաղորդակցվելու հմտությունները, զարգացնել գրավոր խոսքը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի ոչ միայն բանավոր, այլև գրավոր խոսքին.
2. կկարողանա թարգմանել անգլերեն բնագիր տեքստեր, հաղորդակցվել գրավոր և բանավոր խոսքով.
3. ձեռք կբերի գրավոր խոսքը զարգացնելու հմտություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ձևաբանություն (խոսքի մասեր՝ գոյական, ածական, մակբայ, նախդիրներ, թվական, շաղկապ): **Թեմա 2՝** Տնային ընթերցանություն (գեղարվեստական ստեղծագործությունների արտալսարանային ընթերցում և վերլուծում): **Թեմա 3՝** Գրավոր պրակտիկա (ուղղագրական կանոններ, թելադրություն, փոխադրություն): **Թեմա 4՝** Բառապաշար (բազմիմաստություն, նույնանուն և հականիշ միավորներ):

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0302/B62. «ՀԱՅ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 1 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 2-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել նորագույն շրջանի հայ գրականությունը, գրական երկերի ժանրային առանձնահատկությունները, զարգացման ուղղությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- a. կիմանա նորագույն շրջանի հայ գրականության գլխավոր երկերը, պատմական դեպքերի արտացոլումը գրականության մեջ,
- b. կհասկանա գրական ստեղծագործությունների գաղափարական առանձնահատկությունները,
- c. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ 20-րդ դարասկզբի պատմական իրադարձությունների արտացոլումը հայ գրականության մեջ: Գրական-գեղարվեստական ուղղություններ, հոսանքներ: **Թեմա 2՝** Հայ գրականությունը 20-30-ական թթ.: Հասարակական-քաղաքական իրադարձությունները, դրանց արտացոլումը գրականության մեջ: **Թեմա 3՝** Ե. Չալենց: **Թեմա 4՝** Դ. Դեմիրճյան, Ս. Զորյան: **Թեմա 5՝** Ա. Բակունց: **Թեմա 6՝** Շահան Շահնուր, Կոստան Զարյան: **Թեմա 7՝** Հետպատերազմյան շրջանի հայ գրականությունը: **Թեմա 8՝** Պ. Սևակ, Հ. Մաթևոսյան:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

0304/B94. «ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» -2 (2կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 4-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ընդհանուր գիտելիքներ հաղորդել համաշխարհային գրականության պատմության, գրական կարևոր դարաշրջանների և ուղղությունների, գրական խոշորագույն երևույթների և գրական զարգացման ընդհանուր ընթացքի վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կլիմանա համաշխարհային գրականության պարբերացման, գրական կարևոր ուղղությունների և ոճերի, գրականության ընթացքի և ներքին զարգացումների օրինաչափությունների մասին.
2. ծանոթ կլինի ծրագրով տրված գրական խոշոր երևույթներին, համաշխարհային գրականության կարևորագույն երկերի բովանդակությանն ու գեղարվեստական արժանիքներին.
3. կկարողանա կողմնորոշվել համաշխարհային գրականության վիթխարի ժառանգության ընդհանուր համապատկերի մեջ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Վերածնության առաջացումը, նրա առանձնահատկությունները: Վերածննդի գրականությունը Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում, Իսպանիայում: Դանտե Ալիգիերիի «Աստվածային կատակերգություն» պոեմը, Պետրարկայի պոեզիան, Ռաբլեի «Գարգանտյուա և Պանտագրյուել» և Սեր-վանտեսի «Դոն Կիխոտ» վեպերը: **Թեմա 2՝** Կլասիցիզմի գեղագիտությունը և գրականությունը: Կոռնել, Ռասին, Մոլիեր: **Թեմա 3՝** Լուսավորչական գրականության առաջացումը 18-րդ դարում: **Թեմա 4՝** 18-րդ դարի ֆրանսիական փիլիսոփայական վեպը: Վոլտերի «Կանդիդը»: **Թեմա 5՝** Գյոթեի «Երիտասարդ Վերթերի տառապանքները» վեպը, Շիլլերի «Դոն Կարլոս» դրաման: **Թեմա 6՝** Ռոմանտիզմը և նրա գեղարվեստական առանձնահատկությունները: Ռոմանտիզմը Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում, Իսպանիայում և ԱՄՆ-ում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2, 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0304/B51. «ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ» -1/ ֆրանսերեն

(5 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (48 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, առանց եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացը նպատակ ունի ուսանողների մոտ ձևավորել հաղորդակցության համար անհրաժեշտ բանավոր և գրավոր խոսքի ունակություններ, ուղղախոսական-ուղղագրական հմտություններ, տեքստի հետ ինքնուրույն աշխատելու և ազատ հաղորդակցվելու կարողություններ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ճիշտ արտաբերել ֆրանսերենի հնչյունները, ընդհանուր պատկերացում կունենա ֆրանսերենի ուղղախոսական նորմերի մասին.

2. կկարողանա ազատորեն հաղորդակցվել ֆրանսերենով, ընթերցել ադապտացված տեքստեր.
3. կկարողանա ինքնուրույն կերպով կատարել տեքստի ձևաբանական վերլուծություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ֆրանսերենի հնչյունական համակարգը: Ուղղախոսական-ուղղագրական առանձնահատկությունները: **Թեմա 2՝** Ֆրանսերենի քերականության ընդհանուր բնութագիրը և հիմնական առանձնահատկությունները: **Թեմա 3՝** Հոդ և հոդառություն: Հոդի տեսակները և դրանց գործածության առանձնահատկությունները: **Թեմա 4՝** Գոյականի քերականական կարգերի ընդհանուր բնութագիրը: Սեռ, թիվ, հոդ: **Թեմա 5՝** Ածականի տեսակները: Համեմատության աստիճանների կազմության առանձնահատկությունները: **Թեմա 6՝** Բայական համակարգի ընդհանուր բնութագիրը: **Թեմա 7՝** Հաստատական և ժխտական նախադասություններ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

0304/B45. «ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ» -3 (7կրեդիտ)

Շաբաթական՝ 5 ժամ (60 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ընդլայնել ուսանողի ընդհանուր գործածական բառապաշարը, ծանոթացնել անգլիական և ամերիկյան գրականության լավագույն նմուշներին, կազմակերպել քննարկումներ, զարգացնել գրավոր խոսքը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կյուրացնի քերականության ձևաբանություն բաժնի մի մասը,
2. կիմանա ուսումնասիրվող լեզուն կրող ժողովրդի մշակութային առանձնահատկությունները,
3. կընդլայնի ընդհանուր և թեմատիկ բառապաշարը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ձևաբանություն (բայի անդեմ ձևերը. մոդալ բայեր): **Թեմա 2՝** Գրավոր պրակտիկա (թելադրություն, թեստ, պարբերություն): **Թեմա 3՝** Շարահյուսություն. նախադասության տիպերն ըստ կառուցվածքի և հաղորդակցման ուղղվածության, բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասություն: **Թեմա 4՝** Բառապաշարի ոճական տարբերակում (նշութավորված, չնշութավորված միավորներ):

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0304/B46. «ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵՁՈՒ» - 4 (6կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (48 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողի բանավոր և գրավոր հաղորդակցվելու ունակությունները: Ուսումնասիրվող տեքստերի բառապաշարի ակտիվ յուրացում: Քերականության շարահյուսության բաժնի հետ աշխատանքի շարունակություն:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կյուրացնի քերականության շարահյուսություն բաժինը,
2. կտիրապետի լեզվի հիմնական կառույցներին,
3. ձեռք կրերի անգլերենով ազատ հաղորդակցվելու հմտություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բառապաշար (դարձվածային կապակցություններ, բառի ձևաբանական կառուցվածքը, բառակազմության հիմնական միջոցները): **Թեմա 2՝** Քերականություն (երկրորդական /օժանդակ/ խոսքի մասեր, հոդեր, նախդիրներ, շաղկապներ, եղանակավորող բառեր, բառ-մասնիկներ): **Թեմա 3՝** Շարահյու-

սություն (երկրորդական նախադասության տիպերը): **Թեմա 4**՝ Գրավոր պրակտիկա (շարադրություն, պարբերություն):

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0304/B13. «ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 1 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 4-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել լեզվի էության, գործառության ու զարգացման հիմնական օրինաչափությունները. աշխարհի լեզուների հնչյունական, բառային, ձևաբանական և շարահյուսական համակարգերի ընդհանուր առանձնահատկությունները, լեզուների դասակարգման հիմնական սկզբունքները, աշխարհի լեզուներն ու նրանց բաշխումը ըստ լեզվաընտանիքների և ըստ կառուցվածքային տիպերի:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա լեզվական ընդհանուր կարգերը,
2. կհասկանա ցեղակից և ոչ ցեղակից լեզուների նմանություններն ու տարբերությունները,
3. կկարողանա տարբերել տարբեր լեզվաընտանիքների պատկանող լեզուները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Լեզվի բնութագիրը. լեզվի բնորոշումը. լեզվի գոյության ձևերը: **Թեմա 2**՝ Լեզուների հնչյունական համակարգերի նմանություններն ու տարբերությունները. գրային համակարգեր: **Թեմա 3**՝ Լեզուների բառային համակարգերը: **Թեմա 4**՝ Լեզուների ձևաբանական համակարգերը: **Թեմա 5**՝ Լեզուների շարահյուսական համակարգերը: **Թեմա 6**՝ Լեզվի ծագումը: **Թեմա 7**՝ Աշխարհի լեզուների դասակարգումը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2, 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0304/B95. «ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» -3 (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 1 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին գիտելիք հաղորդել 19-20-րդ դարերի արտասահմանյան գրականության պատմության, զարգացման յուրահատկությունների, ոճական, գրական բազմազանության և հարստության վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա 19-20-րդ դարերի արտասահմանյան գրականության պարբերացման, գրական կարևոր ուղղությունների և ոճերի, գրականության զարգացման ընդհանուր ընթացքի մասին.
2. կիմանա ծրագրով տրված հեղինակների կյանքն ու ստեղծագործությունը, կարևոր գրական երկերի ստեղծագործական պատմությունը,
3. կկարողանա վերլուծել ծրագրով տրված ստեղծագործությունները և ցույց տալ դրանց գեղարվեստական արժանիքները

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ռեալիստական գրականության ձևավորումը: Միմվոլիզմ: ***Թեմա 2՝*** 20-րդ դարի սկզբի արտասահմանյան գրականության ընդհանուր բնութագիրը: Դարասկզբի գրական ուղղությունները: Մյուրեռալիզմ: ***Թեմա 3՝*** Ֆրանսիական գրականությունը 20-րդ դարի կեսերին: Էկզիստենցիալիզմ: ***Թեմա 4՝*** Գերմանական գրականության ընդհանուր բնութագիրը: ***Թեմա 5՝*** 20-րդ դարի իսպանական պոեզիան և լատինամերիկյան արձակը: ***Թեմա 6՝*** 20-րդ դարի իտալական գրականության զարգացման ուղիները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

0304/B66. «ԵՐԿՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ/հիմնական օտար լեզու-անգլերեն/»

(3 կրեդիտ)

Շաբաթական՝ 1 ժամ *(12 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ 4-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացը նպատակ ունի ընդհանրացնելու, համակարգելու և ճշգրտելու ուսանողների ձեռք բերած գիտելիքները և հաղորդելու նոր երկրագիտական տեղեկություններ: Երկրագիտության դասընթացը անգլերեն լեզվի՝ որպես մասնագիտության դասավանդման ընդհանուր ծրագրի կարևոր բաժիններից է, որը նպատակ ունի ուսանողին ներկայացնել հասկացական և մշակութաբանական բնույթի տեղեկություններ Միացյալ Թագավորության և Ամերիկայի Միացյալ Նահանգների մասին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ձեռք կբերի երկու հիմնական լեզվակիր երկրների նյութական և հոգևոր մշակույթի պետաիրավական, կրոնաժխական բազմազանության վերաբերյալ գիտելիք,
2. կկարողանա ոչ միայն ընդհանրացնել և համակարգել ձեռք բերած երկրագիտական գիտելիքները, այլև համադրել և մեկնաբանել դրանք անգլերեն լեզվի մշակույթի համատեքստում,
3. կիմանա եվրոպական գլոբալիզացիայի գործընթացներում անգլերենի դերը և նշանակությունը, հատկապես լեզվական գործունեության տարբեր ոլորտներում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Դասընթացի երկու հիմնական մասերի (ՄԹ/ԱՄՆ) հետ առնչվող առարկաների լուսաբանման ներածություն. Երկրագիտությունը և հարակից գիտությունները: **Թեմա 2՝** ՄԹ/ԱՄՆ պատմության, աշխարհագրության, պետական կարգի և խորհրդանիշների, վարչատարածքային բաժանումների, ներգաղթի և ժողովրդագրական նկարագրի ուրվագիծ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0303/B03. «ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 1 ժամ (12 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել մարդու հոգեկան երևույթների առանցքային օրինաչափություններին և մեխանիզմներին, ինչպես նաև նպաստել նրանց ապագա մասնագիտական իրացման մեջ հոգեբանական գիտելիքի կիրառմանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- a. կլիմանա հոգեբանության ընդհանուր դրույթները, հոգեկան գործընթացների և վիճակների առանձնահատկությունները և ձևավորման հիմնական օրինաչափությունները,
- b. կկարողանա կիրառել հոգեբանական իմացությունը մասնագիտական և մանկավարժական գործունեության մեջ, ինչպես նաև հասարակական կյանքում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հոգեբանության առարկան, խնդիրները, ոլորտները: Հասկացություն հոգեկանի մասին: Հոգեկանի կառուցվածքը և ֆունկցիաները: **Թեմա 2՝** Պերցեպտիվ պրոցեսների հոգեբանություն: **Թեմա 3՝** Կոգնիտիվ պրոցեսների հոգեբանություն: **Թեմա 4՝** Անձ, անհատ, անհատականություն հասկացությունները հոգեբանության մեջ: Խառնվածք, բնավորություն, ընդունակություններ: **Թեմա 5՝** Սոցիալական խմբեր: Առաջնորդություն: Շփում, հաղորդակցում: **Թեմա 6՝** Մանկավարժական և տարիքային հոգեբանության առարկան և խրնդիրները: Տարիքային պարբերացում և ճգնաժամեր: Կրթության և դաստիարակության հոգեբանական առանձնահատկությունները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

0304/B52. «ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ» -2 / ֆրանսերեն
(7կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (48 ժամ զործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացը նպատակ ունի խորացնել նախորդ կիսամյակում ստացած գիտելիքները, հարստացնել ուսանողի բառապաշարը և զարգացնել նրա ուղղախոսական ունակությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ամբողջական պատկերացում կունենա ֆրանսերենի հնչյունաբանության, ուղղախոսական–ուղղագրական նորմերի, հիմնական քերականական կառուցվածքի մասին,
2. կկարողանա ազատորեն հաղորդակցվել ֆրանսերենով, ընթերցել միջին բարդության տեքստեր,
3. կկարողանա ինքնուրույն կերպով կատարել տեքստի շարահյուսական վերլուծություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ածականի տեսակները և քերականական կարգերը: **Թեմա 2՝** Դերանունների հիմնական տեսակները և դրանց քերականական կարգերի ընդհանուր բնութագիրը: **Թեմա 3՝** Թվականներ: Թվականների քերականական կարգերը: **Թեմա 4՝** Բայ: Ընդհանուր բնութագիրը և բայերի դասակարգման սկզբունքները: **Թեմա 5՝** Մակբայների տեսակները և քերականական կարգերը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:
Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0304/B61. «ՏԵՄԱԿԱՆ ՀՆՁՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 1 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Ուսանողներին ծանոթացնել անգլերենի տեսական հնչյունաբանության հիմնական ուղղություններին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կյուրացնի տեսական հնչյունաբանության հիմնական բաժինները, նրանց ուսումնասիրման առարկան և դրանց առնչվող տեսական խնդիրները,
2. կտիրապետի առարկայի հիմնական տեսական առանձնահատկություններին, որոշակի լսողական հմտությունների,
3. կծանոթանա տեսական հնչյունաբանության բնագավառի վերջին նորություններին և կկարողանա ինքնուրույն կատարել գիտահետազոտական աշխատանք:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հատույթային հնչյունաբանություն: Հնչույթ: Հնչյունների հիմնական և երկրորդական հատկանիշները: Ֆոնոտակտիկա: **Թեմա 2՝** Հնչառճաբանություն: **Թեմա 3՝** Վերհատույթային հնչյունաբանություն: Հիմնական առոգական միջոցները: Շարահյուսական առոգաբանություն: **Թեմա 4՝** Վերշարահյուսական հնչյունաբանություն: Հնչյունների մետասեմիոտիկ գործառույթը: Բառագիտական հնչյունաբանություն և բանասիրական հնչյունաբանություն: **Թեմա 5՝** Ռիթմ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները Թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:
Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0303/B21. «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 1 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել մանկավարժություն գիտության ժամանակակից հիմնախնդիրները, նրա զարգացումը՝ գիտական հարացույցների հիմքի վրա և ցույց տալ մանկավարժություն գիտության տեղն ու դերը մարդուն ուսումնասիրող գիտությունների շարքում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մանկավարժության ժամանակակից տեսությունները, ճյուղերը, հիմնական հասկացությունները, ուսուցման և դաստիարակության դերը մարդու անձի ձևավորման և զարգացման գործընթացում, ՀՀ կրթության համակարգի արդի բարեփոխումները, ուսուցման նոր տեսակները (աշակերտակենտրոն և ուսանողակենտրոն), ուսուցման կազմակերպման նոր ձևերն ու մեթոդները, կրթության կառավարման հիմնահարցերը.
2. կհասկանա մանկավարժություն գիտության տեղն ու դերը մարդու անձի սոցիալականացման համատեքստում.
3. կկարողանա տեսական գիտելիքները կիրառել գործնականում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մանկավարժության ընդհանուր հիմունքներ: Մանկավարժական գիտությունների համակարգը, կապն այլ գիտությունների հետ, ուսումնասիրության օբյեկտը, առարկան, հետազոտության մեթոդները: **Թեմա 2՝** Մանկավարժական մտքի պատմական զարգացումը, կրթական գործը սփյուռքում: **Թեմա 3՝** Դաստիարակության հիմունքներ. անձի ձևավորումը, գործոնները, զարգացումն ու դաստիարակությունը: Դաստիարակության սկզբունքները, մեթոդները, բաղադրիչները: **Թեմա 4՝** Դիդակտիկայի հիմունքներ: Կրթության բովանդակությունը, ուսուցման գործընթացի էությունը, սկզբունքները, մեթոդները, կազմակերպման ձևերը: Գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումն ու գնահատումը: **Թեմա 5՝** Կրթության կառավարում: ՀՀ կրթության համակարգը, կառավարումը և բարեփոխումները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Թեստային աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

0304/B97. «ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» - 4 (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 1 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին ներկայացնել անգլիական Վերածընդնդի յուրահատկությունները, նախաշեքսպիրյան անգլիական դրամատուր-

գիան, Վ. Շեքսպիրի ստեղծագործությունները և նրանց ազդեցությունը անգլիական և համաշխարհային գրականության վրա:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա անգլիական Վերածննդի ձևավորումը և զարգացումը,
2. կհասկանա նախաշեքսպիրյան դրամատուրգիայի առանձնահատկությունները,
3. կկարողանա վերլուծել Վ.Շեքսպիրի և Ջ.Միլտոնի ստեղծագործությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Միջնադարյան անգլիական էպիկական պոեմները: ***Թեմա 2՝*** Անգլիական թատրոնը 16-րդ դարում: ***Թեմա 3՝*** Նախաշեքսպիրյան անգլիական դրամատուրգիան, ***Թեմա 3՝*** Վ. Շեքսպիրի վաղ շրջանի ստեղծագործությունները (սոնետներ, քրոնիկներ, կատակերգություններ): ***Թեմա 4՝*** Վ. Շեքսպիրի ողբերգությունները («Համլետ», «Օթելլո», «Լիր Արքա», «Մակբեթ» և այլն/): ***Թեմա 5՝*** Շեքսպիրը և անտիկ դրամայի ավանդույթները: ***Թեմա 6՝*** Շեքսպիրի պիեսների փիլիսոփայական-հումանիստական բովանդակությունը: ***Թեմա 7՝*** Կլասիցիզմը անգլիական գրականության մեջ. Ջոն Միլթոնի «Կորուսյալ դրախտի» թեմատիկ և գեղարվեստական առանձնահատկությունները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

0304/B53. «ԵՐԿՐՈՐԴ ՄԱՄԼԱԳԻՏԱԿԱՆ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ» -3 / ֆրանսերեն

(7 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (48 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացը նպատակ ունի խորացնել և զարգացնել նախորդ կիսամյակներում ձեռք բերված գիտելիքները, ուսանողի մոտ ձևավորել ազատ հաղորդակցվելու և գրականությունից օգտվելու կարողություններ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ամբողջական պատկերացում կունենա ֆրանսերենի ձևաբանության և շարահյուսության մասին,
2. կկարողանա կատարել տեքստի շարահյուսական վերլուծություն,
3. կկարողանա բառարանի օգնությամբ ընթերցել գեղարվեստական գրականություն և մասնագիտական տեքստեր:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ֆրանսերենի բառակազմությունը: Առավել գործածական նախածանցներն ու վերջածանցները: **Թեմա 2՝** Ֆրանսերենի նախդիրների ընդհանուր բնութագիրը: Առավել գործածական նախդիրները: **Թեմա 3՝** Շաղկապների կարգերն ու տեսակները: **Թեմա 4՝** Հաստատական և ժխտական մասնիկները և դրանց գործածության առանձնահատկությունները: **Թեմա 5՝** Շարահյուսություն: Նախադասության դասակարգման սկզբունքներն ու չափանիշները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

0304/B62. «OSUL L'ESQ-ŮŮ ŮUSUNŮŮŮŮŮŮ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 1 ժամ 12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել անգլերենի լեզվական համակարգի ակունքներին, լուսաբանել անգլերենի համակարգին բնորոշ հնչյունական, բառակազմական, քերականական օրինաչափությունների պատմական զարգացումը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հին, միջին, ժամանակակից անգլերենի հնչյունական, քերականական համակարգին բնորոշ գծերը,
2. ձեռք կբերի անգլերենի զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ տեսական գիտելիքներ,
3. կկարողանա կատարել թարգմանություն՝ հին և միջին անգլերենից ժամանակակից անգլերեն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Անգլերենի զարգացման երեք փուլերը. Դրանց լեզվական առանձնահատկությունների և պատմական ժամանակաշրջանի բնութագիրը: **Թեմա 2՝** Հին, միջին, ժամանակակից անգլերենի հնչյունական համակարգի առանձնահատկությունները: **Թեմա 3՝** Հին, միջին, ժամանակակից անգլերենի քերականական համակարգի բնորոշ գծերը: **Թեմա 4՝** Միջլեզվական հարաբերությունների ուսումնասիրությունը լեզվի պատմության շրջանակներում: **Թեմա 5՝** Թարգմանություններ հին և միջին անգլերենից ժամանակակից անգլերեն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 1, 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0304/B47. «ԱՆԳԼԵՆԵՆ ԼԵԶՈՒ» -5 (8կրեդիտ)

Շաբաթական՝ 5 ժամ (60 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել գործնական հաղորդակցման հմտություններ տարբեր բնագավառներում, օտար երկրում կողմնորոշում, նորությունների հաղորդում, հայտնի մարդկանց մասին տեղեկությունների փոխանակում, ինչպես նաև գրավոր խոսքի զարգացում և ուղղագրական կանոնների ամրապնդում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի որոշակի թեմատիկ բառապաշարի և քերականական կառույցների, որոնք անհրաժեշտ են այս կամ այն արտալեզվական իրավիճակում,
2. կձեռքագատվի որոշակի բարդություններից, որոնք հատուկ են օտար լեզու սովորողներին հաղորդակցման ոլորտում,
3. կկարողանա վերլուծաբար վերաբերվել բոլոր լեզվական և արտալեզվական իրավիճակներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ճանապարհորդական իրավիճակներում հանդիպող որոշակի բառապաշար, հոդերի և նախդիրների օգտագործումը այդ բառապաշարի շրջանակներում: **Թեմա 2՝** Դարձվածաբանական միավորներ, հոմանիշների ու հականիշների յուրահատկությունները: **Թեմա 3՝** Նախածանցների ու վերջածանցների կառուցվածքային յուրահատկությունները թեմատիկ բառապաշարում: **Թեմա 4՝** Ակնարկի ոճի հմտությունների զարգացում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0304/B82. «ՌՈՒՄ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 1 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 6-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ պատկերացում ձևավորել ռուս գրականության պատմական զարգացման, հիմնական գրական ուղղությունների, ինչպես նաև առանձին ռուս դասական գրողների ստեղծագործության մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա պատկերացում ռուս գրականության զարգացման հիմնական փուլերի մասին.
2. կիմանա 18–20-րդ դարերի ռուս գրականության հիմնական ուղղությունների մասին.
3. ծանոթ կլինի ռուս դասականների կարևորագույն ստեղծագործություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ռուս գրականության դերը համաշխարհային մշակույթում: Հին ռուս գրականության հիմնական ժանրերն ու նշանավոր հուշարձանները: **Թեմա 2՝** 18-րդ դարի գրականության հիմնական ուղղությունները: Ռուսական կլասիցիզմ: Ռուսական սենտիմենտալիզմ: Դ. Ֆոնվիզինի, Ն. Կարամզինի ստեղծագործությունը: **Թեմա 3՝** Ռուսական ռոմանտիզմ: Ա. Պուշկինը և պուշկինյան դարաշրջանի ռուս գրականությունը: Մ. Լերմոնտովի և Ն. Գոգոլի ստեղծագործությունը: **Թեմա 4՝** Ռեալիզմի հետագա զարգացումը ռուս գրականության մեջ: Ի. Գոնչարովի, Ա. Օստրովսկու, Ի. Տուրգենևի ստեղծագործությունը: **Թեմա 5՝** Ֆ. Դոստոևսկու, Լ. Տոլստոյի և Ա. Չեխովի ստեղծագործությունը: **Թեմա 6՝** Մոդեռ-

նիստական ուղղությունները ռուս գրականության մեջ /սիմվոլիզմ, ակմեիզմ, ֆուտուրիզմ/: **Թեմա 7՝** 20-րդ դարի ռուսական ռեալիզմը: Մ. Գորկու, Ի. Բունինի, Մ. Շոլոխովի, Մ. Բուլգակովի ստեղծագործությունը: **Թեմա 8՝** 20-րդ դարի 2-րդ կեսի պատմության ուրվագիծ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

0304/B63. «ԲԱՌԱՊԻՏՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 1 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է դիտարկել բառերի իմաստային կառուցվածքը և կապակցելիությունը, նրանց ձևիմաստային փոխհարաբերությունները, բառակազմական միջոցները և կաղապարները հայերենում և անգլերենում, ինչպես նաև դարձվածքների տեսակները և նրանց թարգմանությանն առնչվող խնդիրների լուծման եղանակները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կյուրացնի անգլերենի և հայերենի բառապաշարային առանձնահատկությունները,
2. կտիրապետի անգլերեն և հայերեն բառերի ձևիմաստային, բառակազմական և այլ տեսակների վերլուծության հմտություններին,
3. կկարողանա գտնել լուծումներ տվյալ լեզուների դարձվածային համակարգի և դարձվածքների թարգմանության հետ կապված խնդիրները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Լեզուների զուգադրական/հանդիպադրական/ ուսումնասիրություն. նրա առնչությունները տիպաբանական ուսումնասիրության հետ: Լեզուների զուգադրական քննության արժեքը, համեմատվող լեզուների տարբերությունների հաղթահարումը թարգմանության ընթացքում: **Թեմա 2՝** Բառակազմություն: Բառակազմական կաղապարներ /Բարդ և ածանցավոր բառեր, դրանց տե-

սակները: Գործուն և ոչ գործուն կադապարներ: Հայերենի և անգլերենի բառակազմական կադապարների գործունության և իմաստային արժեքների համեմատությունը/: **Թեմա 3՝** Բառիմաստություն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0304/B99. «ԱՐՏՍՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» -5 (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 1 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել 18-րդ դարի անգլիական գրականությունը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա գրական ստեղծագործությունները մասնագիտորեն վերլուծելու կարողություն,
2. կըմբռնի 18-րդ դարի անգլիական վեպի ձևավորման և զարգացման օրի-նաչափությունները,
3. ծանոթ կլինի ոչ միայն 18-րդ դարի անգլիացի խոշոր գրողների ստեղծագործություններին, այլև դրանց հիմք հանդիսացող պատմական իրադարձություններին և սկզբնաղբյուրներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Լուսավորությունը 18-րդ դարի Անգլիայում: **Թեմա 2՝** Դ.Դեֆոն որպես եվրոպական նոր ռեալիստական վեպի սկզբնավորող. «Բնական մարդու» պրոբլեմը Դ.Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզո» վեպում: **Թեմա 3՝** Ջ. Սվիֆթի քաղաքական և կրոնական երգիծանքը, անգլիական պետության ծաղրը Ջ.Սվիֆթի «Գուլիվերի ճանապարհորդությունները» վեպում: **Թեմա 4՝** Սենտիմենտալիզմի առաջացումը անգլիական գրականության մեջ: **Թեմա 5՝** Հ. Ֆիլդինգը նեոկլասիցիզմի ներկայացուցիչ: Թեմա 6՝ 18-րդ դարի կեսերի Անգլիայի սոցիալական իրական-

նության արտացոլումը Թ. Բ. Սմոլետի «Ռոդերիկ Ռենդոմի արկածները» վեպում: **Թեմա 6՝** Ջ. Մաքֆերսոնի «Օսիանի երգերը» որպես լիրիկական էպոսի ստեղծման փորձ: **Թեմա 7՝** Լ. Սթերնի «Տրիսթրամ Շենդլի կյանքն ու կարծիքները» վեպի նորարարական նշանակությունը: Զգացմունքների աշխարհի պատկերումը և մարդու սուբյեկտիվ ընկալման թեման Լ. Սթերնի «Մենտիմենտալ ճանապարհորդություն» վեպում: **Թեմա 8՝** Բարձրաշխարհիկ հասարակության բարքերի պատկերումը Ռ. Շերիդանի «Չարախոսության դպրոցը» պիեսում: **Թեմա 9՝** Ռ. Բըրնսի լիրիկան: Ժողովրդական կյանքի և բնության թեմաները նրա պոեզիայում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2, 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0304/B54. «ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՕՏԱՐ ԼԵԶՈՐ» - 4 / Ֆրանսերեն

(5 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (48 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացը նպատակ ունի խորացնել և զարգացնել նախորդ կիսամյակներում ձեռք բերված գիտելիքները, ուսանողի մոտ ձևավորել ֆրանսերեն լեզվով ինքնուրույն աշխատանք գրելու կարողություններ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. բավարար չափով կտիրապետի ֆրանսերենի ուղղախոսության և ուղղագրության նորմերին, խոսքի մասերի կառուցվածքային և գործառական առանձնահատկություններին,
2. կկարողանա օգտվել մասնագիտական գրականությունից,
3. կկարողանա ինքնուրույն կերպով գրել միջին բարդության մասնագիտական աշխատանք՝ կուրսային աշխատանք, զեկուցում, թեզիս:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բայի անդամ ձևերը: Դերբայների դասակարգման սկզբունքներն ու չափանիշները: **Թեմա 2՝** Հարակատար դերբայի գործածության առանձնահատկությունները: **Թեմա 3՝** Դարձված և դարձվածաբանություն: **Թեմա 4՝** Շեշտ և հնչերանգ: **Թեմա 5՝** Հարցական նախադասությունների կազմության առանձնահատկությունները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0304/B48. «ԱՆՊԼԵՐԵՆ ԼԵՁՈՒ» -6 (7 կրեդիտ)

Շաբաթական՝ 5 ժամ (60 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է զարգացնել հասարակական, քաղաքական և երկրագիտական բնույթի տեքստերի հետ աշխատելու հմտություններ, հարըստացնել ուսանողների բառապաշարը վերոհիշյալ ոլորտներում, ուսանողներին սովորեցնել վերլուծել անգլիական և ամերիկյան գեղարվեստական գրականությունների լավագույն նմուշները, նրանցում տեղ գտած լեզվաոճական հնարները, գլխավոր և երկրորդական կերպարները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կյուրացնի դասընթացի սահմաններում նախատեսված բառապաշարը,
2. կկարողանա գրույց վարել հասարակական-քաղաքական թեմաներով,
3. կտիրապետի գեղարվեստական գրականության մեջ լեզվաոճական հնարներին, ձեռք կբերի տարբեր ոլորտներում վերլուծական հմտություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մամուլի տեսություն (լրագրային նյութերի ընկալում և վերաբաշխում): **Թեմա 2՝** Գրավոր պրակտիկա (կուրսային աշխատանքների լեզուն և ոճը): **Թեմա 3՝** Վերապատումի և կարճ շարադրանքի ոճերի շարադրանքների ա-

ռանձնահատկությունները: **Թեմա 4՝** Ոչ կադապարային կառուցվածքի ներմուծում և կիրառում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0304/B64. «ՏԵՍԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 1 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 8-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է քննել անգլերենի քերականական միավորների գործառնական առավել կարևոր հարցեր, պաշտպանել դրանց փոխադարձ կապն ու հարաբերակցությունը լեզվի համակարգում, ուսանողներին ծանոթացնել անգլերենի համակարգի ուսումնասիրման տարաբնույթ մեթոդներին, լեզվաբանական տարբեր ուղղություններին ու տեսակետներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի անգլերենի ձևաբանության և շարահյուսության հիմնախընդիրներին,
2. ձեռք կբերի դրանք ինքնուրույն ընկալելու կարողություն,
3. կգարգացնի ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու հմտությունը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Անգլերենի տեսական քերականության հիմնական հարցեր: Քերականական համակարգի ստեղծման հիմնական պատմական փուլերը: Լեզվի համակարգային բնույթը: Համադրական և հակադրական ձևեր: **Թեմա 2՝** Ձևաբանության հիմնահարցեր: Խոսքի մասեր և նրանց կարգերը: Հիմնական և երկրորդական խոսքի մասեր: **Թեմա 3՝** Շարահյուսության հիմնահարցեր: Բառակապակցություններ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0304/B65. «ՈՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 1 ,5 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 9-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Ոճագիտության դասընթացը բակալավրատի մակարդակում նպատակ ունի ուսանողներին ծանոթացնել անգլերենի ոճի հանգուցային հարցերին: Այնպիսի կարևորագույն խնդիրների լուսաբանումը, ինչպիսիք են՝ լեզվաոճական կարգեր, խոսքի գործառույթ և գործառական ոճ, գեղարվեստական գրականության ընկալման ընդհանուր հարցեր և այլն, անխուսափելի անհրաժեշտություն է բանասիրական կրթության շրջանակներում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի անգլերենի ոճագիտության հիմունքներին,
2. ձեռք կբերի հետևյալ հմտությունները՝ կարդալ, վերլուծել և մեկնաբանել տեքստը,
3. կկարողանա կատարել անգլերեն տեքստի լեզվաոճական վերլուծություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Անգլերենի ոճագիտության հիմնահարցեր: **Թեմա 2՝** Ոճագիտության հիմնական կատեգորիաները՝ բանադարձում, այլաբերություն, որոնք ներառում են մի շարք ոճական հնարներ: **Թեմա 3՝** Անգլերենի ոճագիտության հնչյունաբանական, բառագիտական, ձևաբանական և շարահյուսական հիմնահարցեր: **Թեմա 4՝** Անգլերենի ֆունկցիոնալ ոճագիտության հիմնահարցեր:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշներ

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0304/B101. «ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»-6 (2կրեդիտ)

Շաբաթական՝ 1 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 8-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Ներկայացնել 19-րդ դարի գրական շարժումները Անգլիայում և Ամերիկայում, ցույց տալ նրանց ընդհանրությունները և տարբերությունները, գաղափարագեղարվեստական առանձնահատկությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհասկանա անգլիական ռոմանտիզմի սկզբնավորման և զարգացման օրինաչափությունները,
2. կիմանա 19-րդ դարի ամերիկյան գրականության զարգացման գլխավոր ուղիները,
3. ծանոթ կլինի 19-րդ դարի անգլո-ամերիկյան գրականության պատմահասարակական հիմքերի, ինչպես նաև նրա գեղագիտական խնդիրների ու սկզբունքների հետ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ուիլյամ Բլեյքը որպես ռոմանտիզմի նախակարապետ, նրա պոեզիայի առանձնահատկությունները: **Թեմա 2՝** Ռոմանտիզմի առաջացումը Անգլիայում. «Լճային դպրոցը» (Վորդսվորթ, Բուրիջ, Սաուրթի): **Թեմա 3՝** Ազատության խնդիրը Բայրոնի պոեզիայում («Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը», «Դոն Ժուան»): **Թեմա 4՝** Պ. Բ. Շելլիի ստեղծագործությունները: **Թեմա 5՝** Ջոն Բիթսի պոեզիան: **Թեմա 6՝** Վ.Սքոթի պատմավեպի առանձնահատկությունները: **Թեմա 7՝** Ռեալիզմի ձևավորումը Մեծ Բրիտանիայում: **Թեմա 8՝** Մարդու պրոբլեմը Չարլզ Դիքենսի «Օլիվեր Թվիստի արկածները» վեպում: **Թեմա 9՝** Ու.Թեքերեյի «Մնափառության տոնավաճառը» վեպը: **Թեմա 10՝** Ռոմանտիզմն Ամերիկայում. Էդ. Պոն՝ նովելագիր և բանաստեղծ: **Թեմա 11՝** Հ.Մելվիլի «Մոբի Դիկը» որպես այլաբանական ստեղծագործություն: **Թեմա 12՝** 19-րդ դարի ամերիկյան պոեզիան (ՈՒ. Ուիլսոն, Ռ. Էմերսոն, Է. Դիկինսոն): **Թեմա 13՝** Ամերիկայի պատկերումը Մարկ Տվենի ստեղծագործություններում: **Թեմա 14՝** Օսկար Ուայլդի էս-

թեւիզմը: Արվեստի և իրականության թեման «Դորիան Գրեյի դիմանկարը» վեպում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B55. «ԵՐԿՐՈՐԴ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ» -5/ ֆրանսերեն
(8 կրեդիտ)**

Շաբաթական՝ 5 ժամ (60 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է խորացնել և զարգացնել նախորդ կիսամյակներում ձեռք բերված գիտելիքները, ուսանողի մոտ ձևավորել ազատ հաղորդակցվելու, գեղարվեստական և մասնագիտական գրականությունից ազատորեն օգտվելու կարողություններ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. բավարար պատկերացում կունենա ֆրանսերենի բառապաշարի տարբեր շերտերի մասին,
2. կկարողանա ազատ կերպով շարադրել իր մտքերը և զրուցել հասարակական-քաղաքական և մշակութային թեմաներով,
3. կկարողանա կարդալ բնագիր տեքստեր և օգտվել մասնագիտական գրականությունից:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ֆրանսերենի բառապաշարի ընդհանուր բնութագիրը: Հիմնաշերտ և փոխառություններ: **Թեմա 2՝** Բառապաշարի հարստացման հիմնական միջոցները: Ներքին հնարավորություններ, փոխառություն և կաղապարում: **Թեմա 3՝** Հոմանիշություն և հականունություն: Հոմանիշության առանձնահատկությունները: **Թեմա 4՝** Համանունության դրսևորման առանձնահատկությունները: **Թեմա 5՝** Ֆրանսիական բառարանագրություն:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը՝ 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

0304/B59. «ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐ»

(3 կրեդիտ)

Շաբաթական՝ 1 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 8-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Ուսանողների՝ որպես անգլերենի ապագա ուսուցիչների, մոտ ստեղծել լայն տեսական մասնագիտական բազա: Ուսանողներին ծանոթացնել անգլերենի ուսուցման առավել կարևոր ժամանակակից մեթոդների և եղանակների հետ: Նրանց մոտ մշակել ուսուցման մեթոդներն ու եղանակները պրակտիկայում արդյունավետ և ստեղծագործաբար կիրառելու հմտություններ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ձեռք կրերի անգլերենի դասավանդման հմտություններ,
2. կտիրապետի լեզվի նյութի բազային, մատուցման տիրապետմանը և դասավանդման եղանակներին,
3. կկարողանա ճիշտ կառուցել անգլերեն լեզվի անհրաժեշտ նյութի շարադրանք և այն կիրառելու ուսումնառության պրոցեսում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մեթոդիկայի պատմություն: **Թեմա 2՝** Անգլերեն լեզվի ուսուցման մեթոդիկայի տեսական հիմունքներ: **Թեմա 3՝** Խոսքային գործունեության հիմնական տեսակների ուսուցում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 1, 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0304/B49. «ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ» -7 (9 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (72 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ամրապնդել ուսանողների ստեղծագործական հմտությունները և ակտիվացնել անգլերենով ազատ հաղորդակցումը ամենաբազմազան թեմաներով:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կյուրացնի գեղարվեստական տեքստերի ժանրային և սյուժետային առանձնահատկությունները.
2. կկարողանա ազատ հաղորդակցվել կենցաղային, հասարակական-քաղաքական, գիտական և մասնագիտական թեմաներով.
3. ձեռք կբերի լրագրային նյութը վերարտադրելու հմտություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Վերլուծական ընթերցանություն (գեղարվեստական բովանդակության վերլուծություն): **Թեմա 2՝** Գրավոր պրակտիկա (հասարակական-քաղաքական և մշակութային տեքստերի թարգմանություն):

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0304/B67. «ԵՐԿՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ /երկրորդ մասնագիտական օտար լեզու /Ֆրանսերեն/» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 1,5 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 9-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ամբողջական պատկերացում տալ ֆրանսիական քաղաքակրթության նվաճումների և արդի աշխարհաքաղաքական պայմաններում Ֆրանսիայի դերի և նշանակության մասին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. բավարար չափով տեղեկություններ կունենա Ֆրանսիայի պատմության, մշակույթի, հասարակական-քաղաքական կյանքի մասին,
2. կկարողանա հասկանալ Ֆրանսիայի պատմական զարգացման առանձնահատկությունները և արդի հիմնախնդիրները,
3. կկարողանա օգտվել մասնագիտական գրականությունից և գրել ֆրանսիական քաղաքակրթության այլևայլ հարցերին վերաբերող ոչ մեծ աշխատանք՝ զեկուցում, թեզիս:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ֆրանսիայի բնական և ժողովրդագրական պայմանների բնութագիրը: **Թեմա 2**՝ Երկրի (տարածաշրջանի) վարչա-տարածքային և տնտեսա-աշխարհագրական բաժանումը: **Թեմա 3**՝ Համառոտ պատմա-մշակութային ակնարկ: **Թեմա 4**՝ Ֆրանսիական դասական գրականությունը: **Թեմա 5**՝ Ֆրանսիական երաժշտությունը, թատրոնը և կինոն:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

0304/B103. «ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» -7 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (24 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 9-րդ, , եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Ներկայացնել 20-րդ դարի Անգլիայի և ԱՄՆ-ի գրականությունները, նրանց գեղագիտական-ոճական բազմազանությունը, ինքնատիպությունը, գլխավոր մոտիվներն ու գաղափարները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա գրական երկը մասնագիտորեն վերլուծելու կարողություն,
2. կզարգացնի ժամանակակից գրականությունն ըմբռնելու և վերլուծելու ունակությունները,
3. կհասկանա 20-րդ դարի ամերիկյան գրականության զարգացման էական գծերն ու առանձնահատկությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մոդեռնիզմի առաջացումը Անգլիայում (Ջ. Ջոյս, Թ. Ս. Էլիոթ, Վ.Վուլֆ): Մոդեռնիզմը որպես արվեստի ուղղություն, աշխարհայացք, մտածողության ձև և կենսակերպ: **Թեմա 2**՝ Ջ. Ջոյսի «Ուլիսի» նորարական նշանակությունը: Գիտակցականն ու անգիտակցականը «Ուլիս»-ում: **Թեմա 3**՝ Վ.Վուլֆը մոդեռնիզմի ներկայացուցիչ. գիտակցության հոսքը և ժամանակի ընկալումը:

Թեմա 4՝ Քաղաքակիրթ աշխարհը և «բնական մարդը» Դ. Հ. Լոուրենսի «Լեդի Չաթերլիի սիրեկանը» վեպում: **Թեմա 5՝** 20-րդ դարի փիլիսոփայական պոեզիան: Թ. Ս. Էլիոթի պոեմները: **Թեմա 6՝** Թեոդոր Դրայզերի ռեալիզմը: **Թեմա 7՝** Կոռույալ սերնդի գրականությունը Ամերիկայում (Հեմինգուեյ, Ֆիցջերալդ): **Թեմա 8՝** Ամերիկյան մոդեռն վեպը: Գիտակցության հոսքը և մարդկային արժեքների խնդիրը Ուիլյամ Ֆոլքների «Շառաչ և ցատում» վեպում: **Թեմա 9՝** Վիլյամ Սարոյանի և Ջ. Դ. Սելինջերի Ամերիկյան: Մանուկների «հախճապակյա աշխարհը» տեխնոկրատական Ամերիկայում: Սելինջերը էկզիստենցիալիստ: **Թեմա 10՝** Ուիլյամ Գոլդինգի էկզիստենցիալիզմը: Մարդկային էության, չարի և բարու խնդիրը նրա «Ճանճերի տիրակալը» վեպում: **Թեմա 11՝** Բիթնիկների պոեզիան:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

0304/B56. «ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՕՏԱՐ ԼԵԶՈՐ» -6 / Ֆրանսերեն (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (48 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացը նպատակ ունի խորացնել և զարգացնել նախորդ կիսամյակներում ձեռք բերված գիտելիքները՝ շեշտը դնելով մասնագիտական տեքստերի վրա:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. բավարար չափով կտիրապետի ֆրանսերենի լեզվաբանական տերմիններին,
2. կկարողանա գործածել ֆրանսերեն լեզվաբանական տերմինների հայերեն համարժեքները,
3. պատրաստ կլինի գրելու լեզվաբանական թեմայով ավարտական աշխատանք:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ֆրանսերենի լեզվաբանական տերմինաբանության ընդհանուր բնութագիրը: Միայն ֆրանսերենին բնորոշ երևույթները նշանակող տերմիններ: **Թեմա 2՝** Լեզվաբանական տերմինների թարգմանության առանձնահատկությունները: Ուղղակի համարժեքներ և նկարագրական տարբերակներ: **Թեմա 3՝** Միայն հայերենին բնորոշ երևույթները նշանակող տերմինների ֆրանսերեն թարգմանության առանձնահատկությունները: **Թեմա 4՝** Լեզվաբանական տեքստի վերլուծություն և համառոտ վերաշարադրանք: **Թեմա 5՝** Լեզվաբանական տեքստի թարգմանության առանձնահատկությունները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0304/B50. «ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ» - 8 (8 կրեդիտ)

Շաբաթական՝ 5 ժամ (60 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների մասնագիտական թեմաներով հաղորդակցվելու հմտությունները և ձեռք բերել տարբեր տիպի հետազոտական աշխատանքներ կատարելու կարողություններ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա հղկված գրավոր և բանավոր խոսք,
2. կկարողանա պատշաճ մակարդակով վարել բազմաբնույթ քննարկումներ,
3. կտիրապետի գիտահետազոտական աշխատանքներ կատարելու հմտություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գիտահետազոտական աշխատանքներ: **Թեմա 2՝** Քննարկումներ բազմազան թեմաներով:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0304/B32. «ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 10-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

0103/В07. «SULFI-FUSIN ULUSNUTU, SHQILIQIU E-V ZHGHENL»

(2 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (9 ժամ դասախոսություն, 3 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Տարիքային ֆիզիոլոգիա առարկայի նպատակն է ուսումնասիրել ֆիզիոլոգիական ֆունկցիաների զարգացման և դրսևորման առանձնահատկությունները օնտոգենեզի տարբեր փուլերում, այն է նորածնության, վաղմանկության, առաջին և երկրորդ մանկության, դեռահասության, պատանեկության, հասունության և ծերության փուլերում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մարդու օնտոգենեզի տարբեր փուլերում ընթացող ֆիզիոլոգիական-անատոմիական զարգացման առանձնահատկությունները,
2. կհասկանա ֆիզիոլոգիական ֆունկցիաների, օրգան-համակարգերի դրսևորման առանձնահատկությունները նորածնության, վաղմանկության, առաջին և երկրորդ մանկության, պատանեկության, հասունության և ծերության փուլերում,
3. կկարողանա հաջողությամբ դրսևորել իր իմացությունը իր մանկավարժական գործունեության ժամանակահատվածում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն, ֆիզիոլոգիա առարկայի խնդիրները, ուսումնասիրման մեթոդները և ճյուղերը: **Թեմա 2՝** Սիրտ-անոթային համակարգի գործունեության ֆիզիոլոգիան և նրա ընդհանուր ու տարիքային առանձնահատկությունները: **Թեմա 3՝** Արյան ընդհանուր և տարիքային ֆիզիոլոգիան, իմունիտետի տեսակները և տարիքային առանձնահատկությունները: **Թեմա 4՝** Շնչառության համակարգի ընդհանուր և տարիքային ֆիզիոլոգիան: Շնչառության ֆիզիոլոգիայի նյարդային և հումորալ կարգավորումը: **Թեմա 5՝** Մարսողության համակարգի ընդհանուր և տարիքային առանձնահատկությունները, նրա նյարդային և հումորալ կարգավորումը: **Թեմա 6՝** Նյութերի և էներգիայի փոխանակության ընդհանուր և տարիքային առանձնահատկությունները: Օրգանական նյութերի և վիտամինների տարիքային նշանակությունը: **Թեմա 7՝** Ջերմակարգավորման ֆիզիոլոգիան, քիմիական և ֆիզիկական ջերմակարգավորման ընդհանուր և տարիքային առանձնահատկությունները: **Թեմա 8՝** Արտաթորության համակարգի ընդհանուր և տարիքային ֆիզիոլոգիական առանձնահատկությունները: **Թեմա 9՝** Ներզատական գեղձերի ընդհանուր և տարիքային ֆիզիոլոգիական առանձնահատկությունները: **Թեմա 10՝** Հենաշարժական համակարգի գործունեության ընդհանուր և տարիքային առանձնահատկությունները: Առալիզատորների (տեսողական, լսողական, համի, հոտառության, մաշկային) զարգացման տարիքային առանձնահատկությունների ֆիզիոլոգիան: **Թեմա 11՝** Գլխուղեղի մեծ կիսագնդերի տարիքային ֆիզիոլոգիան: **Թեմա 12՝** Առաջին և երկրորդ ազդարային համակարգերի ընդհանուր և տարիքային ֆիզիոլոգիան: Բարձրագույն նյար-

դային գործունեության տիպերը և ձևավորման տարիքային առանձնահատկությունները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր /ստուգողական աշխատանք/:

2-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ):

0303/B08. «ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵՃԱՆԱՀՈՒՄ»

(7 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (24 ժամ դասախոսություն, 9 ժամ գործնական և 3 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հոգեբանության մեջ փորձարարական հետազոտությունների տեսություններին, մեթոդաբանության հիմքերին, կոդմուրոշել հոգեբանական հետազոտությունների մեթոդների համակարգում, ձևավորել գիտելիքներ հոգեբանական գիտափորձերի պլանավորման համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հոգեբանական գիտափորձի կազմակերպման ձևերն ու հետազոտությունների հիմնական ծրագրերը,
2. կհասկանա հոգեբանական հետազոտության կազմակերպման տրամաբանությունը,
3. կկարողանա ինքնուրույն օգտագործել գիտելիքները գիտափորձերի պլանավորման և այլ էմպիրիկ հետազոտությունների համար:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Փորձարարական հոգեբանության և հոգեճանաչման ձևավորման, զարգացման պատմությունը: Փորձարարական հոգեբանության մեթոդոլոգիայի հիմնական սկզբունքները: ***Թեմա 2՝*** Հոգեբանական մեթոդների կիրառման պահանջները և դժվարությունները: Հոգեբանության հետազոտության մեթոդիկաների դասակարգման սկզբունքները և տեսակները: ***Թեմա 3՝*** Փորձարարական հոգեբանության կազմակերպչական մեթոդները: Ոչ էքսպերիմենտալ մեթոդներ: Դիտում, զրույց, արխիվային մեթոդ: ***Թեմա 4՝*** Հոգեբանական չափում, չափման սանդղակները- անվանական, հարաբերական, կարգային, ինտերվալային: ***Թեմա 5՝*** Էքսպերիմենտալ մեթոդներ: Հոգեբանական թեսթ, տեսակները: Պրոյեկտիվ թեսթեր: ***Թեմա 6՝*** Հոգեբանական չափման ցուցանիշները- թեսթային նորմերի կառուցման չափորոշիչները, օբյեկտիվություն, ստանդարտացում, վալիդություն, հուսալիություն, ռեպրեզենտատիվություն: ***Թեմա 7՝*** Մաթեմատիկական վիճակագրության հիմնական մեթոդները հոգեճանաչողական հետազո-

տություններում՝ միձին, մոդա, մեդիանա, դիսպերսիա, կենտրոնական միտման ընտրություն: **Թեմա 8՝** Էքսպերիմենտալ տվյալների հիմնական տիպերը-L, T, Q: **Թեմա 9՝** Հոգեբանական էքսպերիմենտ, տեսակները: Էքսպերիմենտալ տվյալների ինտերպրետացիա: **Թեմա 10՝** Փոփոխականների միջև կապերի չափումը: Կորելյացիոն վերլուծություն: Տվյալների բազմաչափ վերլուծության մեթոդներ, ֆակտորային և կլաստերային վերլուծություն: **Թեմա 11՝** Դիագնոստիկ մեթոդներով աշխատող անձանց և նրանց մասնագիտական հմտություններին վերաբերող էթիկական պահանջները: Դիագնոստիկայի ենթարկվող անձանց իրավունքների պահպանման հետ կապված էթիկական պահանջները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0303/B09. «ՀՈԳԵՖԻԶԻՈԼՈԳԻԱ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, առանց եզրափակիչ գնահատման
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել հոգեկան գործընթացների ֆիզիոլոգիական օրինաչափությունների, հոգեֆիզիոլոգիական տարբեր դպրոցների կողմից ընդունված տեսությունների և հայեցակարգերի մասին լիարժեք մասնագիտական պատկերացումներ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա արդի հոգեֆիզիոլոգիական գիտության տեսական խնդրացանկը,
2. կհասկանա հոգեկան գործընթացների ուղեղային ապահովման մեխանիզմները,
3. կկարողանա բացատրել հիմնական հոգեկան գործընթացների ձևավորման և զարգացման նյարդաֆիզիոլոգիական հիմքերը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հոգեֆիզիոլոգիայի առարկան, դասակարգումը, մեթոդները: **Թեմա 2՝** Ֆունկցիոնալ վիճակների հոգեֆիզիոլոգիա: **Թեմա 3՝** Քնի հոգեֆիզիոլոգիա: Քնի տեսություններ: **Թեմա 4՝** Ստրեսի հոգեֆիզիոլոգիա: Ընդհանուր աղապատացիոն համախտանիշ: **Թեմա 5՝** Պահանջմունքների և մոտիվացիաների հոգեֆիզիոլոգիա: **Թեմա 6՝** Հույզերի հոգեֆիզիոլոգիա: **Թեմա 7՝** Ուշադրության հոգեֆիզիոլոգիա: **Թեմա 8՝** Խոսքի հոգեֆիզիոլոգիա: **Թեմա 9՝** Մտածողական գործունեության հոգեֆիզիոլոգիա: **Թեմա 10՝** Շարժողական ակտիվության հոգեֆիզիոլոգիա: **Թեմա 11՝** Գիտակցությունը որպես հոգեֆիզիոլոգիական ֆենոմեն:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր /ստուգողական աշխատանք/:

2-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ):

0303/B10. «ԻՄԱՅԱԿԱՆ ՊՈՑԵՄՆԵՐ» (7 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (24 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական և 6 ժամ սե-
մինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի հիմնական նպատակն է ուսանողներին ծանոթացնել բարձ-
րագույն իմացական գործընթացների հոգեբանական ուսումնասիրություններին,
ցույց տալ հոգեկան արտացոլման բարձրագույն ձևերի յուրակերպությունը, ներ-
կայացնել դասական և ժամանակակից տեսությունները, տալ հիմնական հարցա-
դրումների և խնդիրների գիտական բացատրությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հիշողության, մտածողության, խոսքի և երևակայության հոգեբա-
նության հիմնական տեսական մոտեցումները,
2. կհասկանա այդ գործընթացների հիմնական հոգեբանական օբյեկտները, ծա-
գումնաբանական հիմնական խնդիրները,
3. կկարողանա մեկնաբանել և վերլուծել այդ գործընթացների հոգեբանական օ-
րինաչափությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հասկացություն ուշադրության մասին: ***Թեմա 2՝*** Հասկացություն
զգայությունների մասին: ***Թեմա 3՝*** Հասկացություն ընկալման մասին: ***Թեմա 4՝***
Հասկացություն հիշողության մասին: ***Թեմա 5՝*** Հասկացություն երևակայության
մասին: ***Թեմա 6՝*** Հասկացություն խոսքի մասին: ***Թեմա 7՝*** Հասկացություն մտա-
ծողության մասին: ***Թեմա 8՝*** Գիտակցությունը որպես իմացական գործընթացնե-
րը ինտեգրող սկիզբ: ***Թեմա 9՝*** Ինտելեկտի տեսությունները: ***Թեմա 10՝*** Իմացա-
կան գործընթացները քննարկող տեսությունները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննությունները

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյու-
րը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք,
յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժե-
քով:

0303/B15. «ՏԱՐԻՔԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (24 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական և 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել մանկավարժության գիտության համակարգի տեղն ու դերը տարբեր տարիքային խմբերի երեխաների անձի ձևավորման գործընթացում: Տարիքային մանկավարժության պատմական զարգացումը, գիտական հարացույցերը, տեղն ու դերը ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացման գործում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա տարիքային մանկավարժության ժամանակակից տեսությունները, հիմնական հասկացությունները, տարիքային շրջաբաժանման մոտեցումները,
2. կհասկանա երեխայի կյանքի զարգացման հոգեֆիզիոլոգիական բնութագիրը, դրան համապատասխան կազմակերպվող ուսումնադաստիարակչական գործընթացի էությունն ու առանձնահատկությունները,
3. կկարողանա տարբեր տարիքային խմբերում երեխաների տարիքային առանձնահատկությունների հաշվառման հիման վրա բացահայտել զարգացման և ձևավորման խնդիրները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածական մաս: Պատմական ակնարկ տարիքային մանկավարժությունից: Տարիքային մանկավարժության առարկան, խնդիրները, մեթոդաբանական և հոգեբանական հիմունքերը, կապը այլ գիտությունների հետ: Անձը որպես դաստիարակության առարկա, նրա զարգացման հիմնական գործոնները: ***Թեմա 2՝*** Երեխաների զարգացման ճգնաժամային և սենզիտիվ փուլերի օրինաչափությունները, տարբեր տարիքային փուլերում զարգացման անհամաչափությունները, աքսելերացիայի մանկավարժական իմաստը: ***Թեմա 3՝*** Մանկիկային տարիքի առանձնահատկությունները: ***Թեմա 4՝*** Նախադպրոցական տարիքի առանձնահատկությունները: ***Թեմա 5՝*** Կրտսեր դպրոցականի տարիքային բնութագիրը, առանձնահատկությունները: ***Թեմա 6՝*** Միջին դպրոցական տարիքի առանձնահատկությունները: Ժամանակակից դեռահասի առանձնահատկությունները: ***Թեմա 7՝*** Ավագ դպրոցական տարիքի ընդհանուր բնութագիրը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0303/B11 «ՍՈՑԻՈԼՈԳԻԱ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (9 ժամ դասախոսություն, 3 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատման
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել սոցիոլոգիական հետազոտությունների անցկացման հմտություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա բավարար գիտելիքներ տնտեսագիտական հետազոտություններում սոցիոլոգիական մեթոդներ կիրառելու համար:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Սոցիոլոգիան որպես գիտություն: **Թեմա 2՝** Անձ: **Թեմա 3՝** Սոցիալական գործողություն և վարք: **Թեմա 4՝** Սոցիալական փոխհարաբերություններ և սոցիալական կառուցվածք: **Թեմա 5՝** Սոցիալիզացիա: **Թեմա 6՝** Սոցիալական վերահսկողություն: **Թեմա 7՝** Մշակույթ և լեզու: **Թեմա 8՝** Սոցիալական խմբեր: **Թեմա 9՝** Սոցիալական ստրատիֆիկացիա: **Թեմա 10՝** Վերնախավ: **Թեմա 11՝** Աղքատություն և անհավասարություն: **Թեմա 12՝** Սոցիալական մոբիլություն: **Թեմա 13՝** Սոցիալական կազմակերպություն և կառավարում: **Թեմա 14՝** Տնտեսական սոցիոլոգիա:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք:

0303/B12 «ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՏԵՍՈՒ-ԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (9 ժամ դասախոսություն, 3 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատման
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին զինել ինֆորմացիոն տեխնոլոգիաների համար անհրաժեշտ դիդակտիկ նյութերի պատրաստման և գործածման հմտություններով:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կիմանա ուսումնական տեխնոլոգիայի մասնագիտական առանձնահատկությունները, ժամանակակից ուսումնական տեխնիկական միջոցները և աշխատանքի սկզբունքները, հատուկ մասնագիտական ծրագրերի կիրառու-

թյունը, ինտերնետ ծառայությունները և նրանց գործածումը ուսուցման գործընթացում, ուսումնական տեխնիկական միջոցների հետ աշխատանքի անվտանգության կանոնները:

2. կհասկանա ուսումնական ինֆորմացիայի հիմնական հասկացությունները գնահատումը, ընկալումը և մշակումը:
3. կկարողանա ընտրել այն տեխնիկական միջոցը, որի օգնությամբ կարող է իրականացնել տվյալ դասընթացի ուսումնասիրությունը, ճիշտ շահագործել ուսումնական տեխնիկական միջոցները և ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաները, կիրառել բոլոր այն տեխնիկական միջոցները և նորագույն տեխնոլոգիաները, որոնք անհրաժեշտ են գիտելիքների ընկալման, կուտակման և կուտակված ինֆորմացիաների մշակման կամ վերաբաշխման համար:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Առարկայի նպատակը, հիմնախնդիրները: **Թեմա 2՝** Միջառարկայական կապեր: **Թեմա 3՝** Ուսումնական ինֆորմացիայի հիմնական հասկացությունների գնահատումը, ընկալումը և մշակումը: **Թեմա 4՝** Ժամանակակից ուսումնական տեխնիկական միջոցներ և աշխատանքի սկզբունքների իմացություն: **Թեմա 5՝** Ինֆորմացիոն տեխնոլոգիաների համար անհրաժեշտ դիդակտիկ նյութերի կիրառումն ուսուցման գործընթացում: **Թեմա 6՝** Ինտերնետ ծառայությունները և նրանց գործածումը ուսուցման գործընթացում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր /ստուգողական աշխատանք/:

2-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ):

0303/B13. «ՀՈՒԶԱԿԱՄԱՅԻՆ ՈՒՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (24 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական և 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ գիտելիքներ ձևավորել հույզերի ծագման, հույզերի մեկնաբանման տեսությունների, գործունեության և առօրյա փոխհարաբերություններում անձի կենսագործունեության վրա անդրադարձող առանձնահատուկ հոգեվիճակների վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հույզերի վերաբերյալ տեսությունները, դրանց դասակարգումը,
2. կհասկանա օրգանիզմի և ընդհանուր ակտիվության վրա հույզերի ազդեցության օրինաչափությունները,
3. կկարողանա տարբերակել հույզերի բնույթը, ճանաչել արտաքին դրսևորման ձևերը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հուզականային հոգեբանության առարկան, նպատակը, խնդիրները, դրվածքը: **Թեմա 2**՝ Հուզական երևույթների գործառնությունները: **Թեմա 3**՝ Հուզական ոլորտի հիմնական տարրերը և նրանց ուսումնասիրությունը: **Թեմա 4**՝ Հուզական երևույթների դրսևորումները և դրանց ուսումնասիրման մեթոդները: **Թեմա 5**՝ Հուզական ոլորտի զարգացումը: **Թեմա 6**՝ Սոցիալական հուզական երևույթները: **Թեմա 7**՝ Զգացմունքներ և երջանկություն: **Թեմա 8**՝ Հույզերի սեռային պայմանավորվածությունը: **Թեմա 9**՝ Հուզական ոլորտում մշակութային գործոնները: **Թեմա 10**՝ Կամքի տեսություններ: **Թեմա 11**՝ Վարքի և գործունեության կամածին ղեկավարման հոգեֆիզիոլոգիական մեխանիզմները: **Թեմա 12**՝ Կամային կարգավորում և կամային ճիգեր (ինքնամոբիլիզացում):

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0301/B16. «ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի հիմնական նպատակն է բարձրացնել ուսանողի մտածական որակները, զարգացնել վերլուծական մտածողություն:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մտքի կառուցվածքը, այն տրամաբանական կանոններն ու օրենքները, որոնք կշռադատության ընթացքում ապահովում են մեր մտքի կանոնավորությունը և հետևողականությունը, ճշմարիտ եզրակացությունների ստացումը և գիտական գիտելիքների հիմնավորվածությունը,
2. կհասկանա տրամաբանության ճանաչողական և մեթոդաբանական գործառնությունների անհրաժեշտությունը գիտատեսական և գործնական ուսումնասիրությունների ժամանակ,
3. կկարողանա տրամաբանական գիտելիքների և հմտությունների միջոցով բարձրացնել իմացական գործընթացների և հատկապես գիտական հետազոտությունների արդյունավետությունը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տրամաբանության առարկան և նշանակությունը: **Թեմա 2**՝ Լեզվի տրամաբանական վերլուծությունը: **Թեմա 3**՝ Հասկացողությունը որպես տրամաբանական ձև և հասկացության ընդհանուր բնութագրությունը: **Թեմա 4**՝ Դա-

տողություն: **Թեմա 5՝** Մտածողության ձևական տրամաբանական հիմնական օրենքները: **Թեմա 6՝** Դեդուկտիվ մտահանգում: Մտահանգման ընդհանուր բնութագիրը: **Թեմա 7՝** Ինդուկտիվ մտահանգումներ: **Թեմա 8՝** Փաստարկման տրամաբանական հիմունքներ: **Թեմա 9՝** Տրամաբանական սխալներ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում:

2-րդ ստուգում. Բանավոր կարճ հարցում:

0303/B22. «ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4.5 ժամ (12 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին զինել մասնագիտական գիտելիքներով և հմտություններով, որոնք անհրաժեշտ են ժամանակակից մանկավարժական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կիմանա սովորողների հետ ուսումնական աշխատանքների կազմակերպման ձևերը, դպրոցում ուսումնական աշխատանքների կազմակերպման սկզբունքները, օրինաչափությունները, մեթոդները, ուսուցման գործընթացների փուլերը, առանձնահատկությունները,
2. կհասկանա ուսուցման մեթոդները, հնարները, միջոցները, տեխնոլոգիաները:
3. կկարողանա պլանավորել և իրականացնել սովորողների ուսումնական աշխատանքները, կիրառել ուսուցման մեթոդները, տեխնոլոգիաները մանկավարժական գործընթացի արդյունավետության ապահովման նպատակով, գնահատել սովորողների ուսուցման գործընթացը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ուսուցման գործընթացի էությունը, շարժիչ ուժերը, հակասություններն ու տրամաբանությունը: **Թեմա 2՝** Ուսուցման օրինաչափություններն ու սկզբունքները: **Թեմա 3՝** Ժամանակակից դիդակտիկական համակարգերի վերլուծությունը: **Թեմա 4՝** Ուսուցման կրթական, դաստիարակչական և զարգացնող ֆունկցիաների միասնությունը: **Թեմա 5՝** Ուսումնա-դաստիարակչական գործընթացի ամբողջականության խնդիրները: **Թեմա 6՝** Ուսուցման երկկողմանի և անհատական բնույթը: **Թեմա 7՝** Դասավանդելու և սովորելու միասնությունը: **Թեմա 8՝** Ուսուցումը որպես ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեություն: **Թեմա 9՝** Կրթության բովանդակությունը որպես անձնավորության բազային մշակույթի հիմք: **Թեմա 10՝** Պետական կրթական չափորոշիչ: **Թեմա 11՝**

Կրթության բովանդակության բազային և լրացնող բաղադրիչները: **Թեմա 12՝** Ուսուցման մեթոդները: **Թեմա 13՝** Ուսուցման կազմակերպման ժամանակակից մոդելները: **Թեմա 14՝** Կրթական հաստատությունների բազմազանությունն ու տիպաբանությունը: **Թեմա 15՝** Հեղինակային դպրոցներ: **Թեմա 16՝** Նորարարական կրթական գործընթացները: **Թեմա 17՝** Ուսուցման միջոցների դասակարգումը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Փոքրածավալ գրավոր /ստուգողական աշխատանք/:

2-րդ ստուգում. Բանավոր կարճ հարցում:

0303/B34. «ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4.5 ժամ (13 ժամ դասախոսություն, 5 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել հոգեբանական գաղափարների ընդհանուր տեսության մշակման երկարաձիգ ճանապարհը, սկսած հոգեկանի մասին առաջին գիտական պատկերացումներից մինչև ժամանակակից հոգեբանության վերջին նվաճումները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ձեռք կրերի նոր գիտելիքներ հոգեկան իրականության վերաբերյալ,
2. կհասկանա գիտության տրամաբանությունը, որն ունի ոչ միայն տեսական, այլև գործնական իմաստ,
3. կկարողանա կատարել հոգեկանի մասին գիտական պատկերացումների համեմատական վերլուծություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հոգեբանական գիտելիքների զարգացումը հոգու մասին ուսմունքի շրջանակներում: **Թեմա 2՝** Հոգեբանության զարգացումը գիտակցության մասին փիլիսոփայական ուսմունքների շրջանակներում: **Թեմա 3՝** Հոգեբանության՝ որպես գիտակցության մասին գիտության զարգացումը մինչ փորձարարական հոգեբանության զարգացումը: **Թեմա 4՝** Բնագիտության զարգացումը և բնագիտական նախադրյալների ձևավորումը հոգեբանության՝ որպես գիտության առանձնացման համար: **Թեմա 5՝** Հոգեբանության առանձնացումը որպես առանձին գիտություն և նրա զարգացումը մինչև բաց ճգնաժամը (19-րդ դարի 60-ական թթ. և 20-րդ դարի 10-ական թթ.): **Թեմա 6՝** 20-րդ դարի 10–30-ական թթ. բաց ճգնաժամի շրջանի արտասահմանյան հոգեբանությունը: **Թեմա 7՝** Խորհրդային հոգեբանության ծագումն և զարգացումը: Ժամանակակից հոգեբանությունը Ռուսաստանում: **Թեմա 8՝** Արտասահմանյան հոգեբանության ժամանակակից դրությունը և զարգացման կարևորագույն միտումները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0303/B19. «ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏԻՊՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

(6 կրեդիտ)

Շաբաթական՝ 7.5 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական և 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ձևավորել գիտելիքներ անհատական տարբերությունների /խառնվածք, բնավորություն, ընդունակություններ/ հոգեբանության արդի հիմնախնդիրների վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա անհատական առանձնահատկությունների դասակարգման չափանիշները,
2. կհասկանա խառնվածքի, բնավորության և ընդունակությունների զարգացման մեխանիզմները և օրինաչափությունները,
3. կկարողանա վերլուծել անհատական տիպոլոգիական առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց ձևավորման նախադրյալները և պայմանները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մարդու անհատականությունը գիտական ուսումնասիրության օբյեկտ հոգեբանության մեջ: ***Թեմա 2՝*** Անհատական տարբերությունների զարգացման աղբյուրները: ***Թեմա 3՝*** Անհատական առանձնահատկությունները, կիսագնդերի ասիմետրիան և խառնվածքը: ***Թեմա 4՝*** Բնավորության հոգեբանություն: ***Թեմա 5՝*** Ընդունակությունների հոգեբանություն: ***Թեմա 6՝*** Տիպաբանական մոտեցումները անձի և բնավորության ուսումնասիրության նկատմամբ: ***Թեմա 7՝*** Անձի հատկանիշների հոգեբանություն: ***Թեմա 8՝*** Սեռի հոգեբանություն: ***Թեմա 9՝*** Մասնագիտական անհատական առանձնահատկությունները: ***Թեմա 10՝*** Հաղորդակցման անհատական տիպաբանական առանձնահատկությունները: ***Թեմա 11՝*** Գործունեության և վարքի անհատական տիպաբանական առանձնահատկությունները: ***Թեմա 12՝*** Բարոյական գիտակցության անհատական տիպաբանության առանձնահատկությունները: ***Թեմա 13՝*** Անհատականության ոճային առանձնահատկությունները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0303/B20. «ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 7.5 ժամ (24 ժամ դասախոսություն, 3 ժամ գործնական և 3 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ուսումնական գործընթացի վերլուծության ժամանակակից մոտեցումներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ծանոթ կլինի մանկավարժական ներգործության հոգեբանական մեխանիզմներին և օրինաչափություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մանկավարժական հոգեբանության առարկան և խնդիրները: ***Թեմա 2՝*** Ուսումնական գործունեության կառուցվածքը: ***Թեմա 3՝*** Մանկավարժական հոգեբանության մեթոդները: ***Թեմա 4՝*** Մանկավարժի անձնային որակների և մասնագիտական պատրաստվածության հիմնախնդիրները: ***Թեմա 5՝*** Մանկավարժական գործունեության շարժառիթները, մանկավարժական կոլեկտիվի հոգեբանություն: ***Թեմա 6՝*** Մանկավարժական կարողություններ և հմտություններ: ***Թեմա 7՝*** Մանկավարժական գործունեության կառուցվածքը: ***Թեմա 8՝*** Դաստիարակության հոգեբանություն: ***Թեմա 9՝*** Կրթության հոգեբանություն: ***Թեմա 10՝*** Ուսուցման հոգեբանություն: ***Թեմա 11՝*** Ուսուցչի անձի հոգեբանություն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0303/B29. «ՏԱՐԻՔԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 5 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ձևավորել մարդու նկատմամբ անալիտիկ մոտեցում հոգեբանական տարիքի ըմբռնման տեսանկյունից, տարիքային ճգնաժամերի ընթացքում հոգեբանական օգնության արդյունավետ ձևերի կազմակերպմանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա անձի զարգացման տարիքային առանձնահատկությունները,
2. կկարողանա լուծել պրոբլեմային իրադրությունները՝ կիրառելով տարիքային հոգեբանական վերլուծություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տարիքային հոգեբանության ընդհանուր հարցեր: ***Թեմա 2՝*** Հոգեկան զարգացման պայմաններն ու շարժիչ ուժերը: ***Թեմա 3՝*** Հոգեկան զարգացման պարբերացման հիմնախնդիրները: ***Թեմա 4՝*** Հոգեկան զարգացման առանձնահատկությունները մինչծննդյան /պրենատալ/ և մանկիկության /նոտաձնություն, բուն մանկիկություն/ շրջաններում: ***Թեմա 5՝*** Հոգեկան զարգացման առանձնահատկությունները վաղ տարիքում: Անձնային ոլորտի զարգացում: ***Թեմա 6՝*** Նախադպրոցականի հոգեկան զարգացումն ու անձնավորության ձևավորումը: ***Թեմա 7՝*** Դպրոցի նախապատրաստման հիմնախնդիրը: ***Թեմա 8՝*** Հոգեկան զարգացումն ու անձնավորության ձևավորումը կրտսեր դպրոցական տարիքում: ***Թեմա 9՝*** Անձնավորության ձևավորման ու զարգացման հոգեբանական առանձնահատկությունները դեռահասության շրջանում: ***Թեմա 10՝*** Անձնավորության ձևավորման ու զարգացման հոգեբանական առանձնահատկությունները պատանեկան շրջանում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0303/B32. «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ» (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել մարդուն՝ որպես սոցիալական միջավայրի արդյունք և մանրամասն ուսումնասիրել երեխային տարբեր սոցիալական միջավայրում, հետազոտել սոցիալականացման հասարակական և մանկավարժական նշանակությունը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

2. կիմանա սոցիալական մանկավարժության գիտահետազոտական հիմունքները,
3. մարդու սոցիալականացման առանձնահատկությունները,
4. սոցիալական շեղումների մանկավարժական վերլուծությունը,
5. սոցիալական մանկավարժի գործունեության գործնական կիրառությունը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Սոցիալական մանկավարժության գիտատեսական հիմունքներ:

Թեմա 2՝ Սոցիալական մանկավարժության հիմնական սկզբունքները: ***Թեմա 3՝*** Սոցիալ-մանկավարժական գործընթաց և նրա կատարելագործման ուղիները: ***Թեմա 4՝*** Անձի սոցիալական զարգացումը: ***Թեմա 5՝*** Երեխայի սոցիալական զարգացման մեխանիզմները և շարժիչ ուժերը: ***Թեմա 6՝*** Գործունեությունը և սոցիալ-մանկավարժական հնարավորությունները: ***Թեմա 7՝*** Մարդու աղապտացիան, դեզաղապտացիան և ռեաղապտացիան: ***Թեմա 8՝*** Սոցիալական դաստիարակություն, էությունը և բովանդակությունը: ***Թեմա 9՝*** Երեխաների զարգացման և դաստիարակության ընթացքում առաջացած սոցիալական շեղումները: ***Թեմա 10՝*** Սոցիալական շեղումներ, առաջացման պատճառները, հաղթա-հարման ուղիները: ***Թեմա 11՝*** Դժվար դաստիարակվող երեխաներ, էությունը, առաջացման պատճառները: ***Թեմա 12՝*** Միջավայրը և անձի ձևավորումը: ***Թեմա 13՝*** Փողոցը որպես դաստիարակության միջավայր: ***Թեմա 14՝*** Դժվար իրավիճակներում գտնվող երեխաների կառուցվածքը: ***Թեմա 15՝*** Պենիտենցիալ հաստատությունների աշխատանքների դաստիարակչական խնդիրները: ***Թեմա 16՝*** Սոցիալական աշխատակցի մասնագիտական գործունեությունը և անձի դեֆորմացիա: ***Թեմա 17՝*** Սոցիալական աշխատակցի մանկավարժական վարպետությունը և աշխատանքի կազմակերպման ձևերը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր /թեստ/:

2-րդ ստուգում. Բանավոր կարճ հարցում:

0303/Յ17. «ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել գիտական մանկավարժության կրթական համակարգի ոլորտում տեղի ունեցող բարեփոխումներին և դրանց կառավարման առանձնահատկությունների հետ, ցույց տալ նրա գիտական հարացույցերը, տեղն ու դերը ժամանակակից մանկավարժության գիտության համակարգում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա կրթական համակարգի կառուցվածքը, զարգացման փուլերը, հիմնական հասկացությունները, կառավարման դերը նոր հասարակական գիտությունների համակարգը, ՀՀ կրթության համակարգի արդի բարեփոխումները.
2. կհասկանա կրթության համակարգի զարգացման հիմնական ուղղությունները, դպրոցավարման ժամանակակից եղանակները, ձևերը, մեթոդները.
3. կկարողանա տիրապետել մանկավարժական կոլեկտիվի արդյունավետ կառավարման մեխանիզմներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Կրթական համակարգի կառուցվածքը, զարգացման փուլերը, էությունը, կառավարման սկզբունքները, գործառույթները, մեթոդները: **Թեմա 2՝** Կառավարման գործընթացի սոցիալ-հոգեբանական տեսանկյունները, գիտական դրույթները: **Թեմա 3՝** Նախադպրոցական կառույցի և ներդպրոցական կառավարման առանձնահատկությունները, գործառույթները, սկզբունքները և մեթոդները: **Թեմա 4՝** Դպրոցի կառավարման իրավական և տնտեսական հիմքերը: **Թեմա 5՝** Դպրոցի զարգացման կառավարում, նորամուծություններ, ինովացիաներ: **Թեմա 6՝** Բարեփոխումները բարձրագույն դպրոցում, նրա կառավարման առանձնահատկությունները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Փոքրածավալ գրավոր /թեստ/:

2-րդ ստուգում. Բանավոր կարճ հարցում:

0303/B24. «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»

(5 կրեդիտ)

Շաբաթական՝ 7 ժամ (18 ժամ դասախոսություն, 9 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել աշխատանքի և կառավարման հոգեբանության հիմնական խնդիրներին, քննարկել աշխատանքային և կառավարման գործունեության հոգեբանական առանձնահատկությունները և դրանց կապը տարբեր գործոնների հետ, վերլուծել կառավարիչի անձի հոգեբանական կերպարը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա աշխատանքային և կառավարման հոգեբանության առարկայի խնդրացանկը,

2. ծանոթ կլինի աշխատանքի ընթացքում մարդու հոգեբանական առանձնահատկություններին և դրանց ազդեցությանը աշխատանքի իրականացման վրա, ծանոթ կլինի կառավարման ոճերին և ռազմավարություններին,
3. կկարողանա կազմել պսիխոգրամներ և պրոֆեսիոգրամներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Աշխատանքի հոգեբանության առարկան, խնդիրները, տեսությունները, հետազոտության մեթոդները: **Թեմա 2՝** Մասնագիտական գործունեություն: **Թեմա 3՝** Անձի իմացական, անհատական հոգեբանական առանձնահատկությունների հաշվառումը աշխատանքային գործունեության մեջ: **Թեմա 4՝** Բացասական հոգեվիճակները և անձի ադապտացիայի ոճերը աշխատանքային գործունեության մեջ: **Թեմա 5՝** Մասնագիտության ընտրություն, մասնագիտական կողմնորոշում: **Թեմա 6՝** Սոցիալ-աշխատանքային վերականգնման հոգեբանական խնդիրները: **Թեմա 7՝** Կառավարման հոգեբանության առարկան, խնդիրները, տեսությունները, ուսումնասիրության մեթոդները: **Թեմա 8՝** Կառավարման սոցիալ-հոգեբանական մեխանիզմները: **Թեմա 9՝** Կառավարման ոճերը, իշխանության տեսակները: **Թեմա 10՝** Մարդկային փոխհարաբերությունները կառավարման համակարգում: Խոսքային և ոչ խոսքային հաղորդակցություն: **Թեմա 11՝** Կոնֆլիկտները կառավարման համակարգում, հաղթահարման ուղիները: **Թեմա 12՝** Որոշումների ընդունումը ղեկավարի կողմից և նրա հոգեբանական առանձնահատկությունները: **Թեմա 13՝** Կառավարում և ինքնակառավարում, կառավարման դժվարությունները և դրանց հաղթահարման հոգեբանական ուղիները: Կառավարման պրոֆեսիոգրամա և պսիխոգրամա:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր /ստուգողական աշխատանք/:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում:

0303/B27. «ՀՈԳԵԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 3.5 ժամ (9 ժամ դասախոսություն, 5 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին գիտելիքներ հաղորդել ժամանակակից հոգեբանական կարգավորման խնդիրների, հիմնական սկզբունքների, առաջատար ուղղությունների և հայեցակարգերի վերաբերյալ, ներկայացնել դրանց կիրառական դաշտը, ծանոթացնել պրակտիկ հոգեկարգավորման մեթոդներին և տեխնիկաներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը՝

1. կծանոթանա ժամանակակից հոգեբանական կարգավորման առաջատար ուղղություններին ու հայեցակարգերին, դրանց գործնական հնարավորություններին, ինչպես նաև կիրառման մեթոդներին և տեխնիկաներին,
2. կխորացնի՝ հոգեբանության տեսական և կիրառական ոլորտներում լուծվող հիմնահարցերի փոխադարձության վերաբերյալ իր գիտելիքները,
3. ձեռք կբերի պրակտիկ հոգեկարգավորման սկզբնական հմտություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հոգեկարգավորումը և դրա տեսակները. Հոգեկարգավորման նպատակներն ու խնդիրները, հիմնական սկզբունքները: **Թեմա 2՝** Հիմնական ուղղությունները ժամանակակից հոգեբանական կարգավորման պրակտիկայում: **Թեմա 3՝** Պրակտիկ հոգեկարգավորման մեթոդները: **Թեմա 4՝** Անհատական և խմբակային հոգեկարգավորում: **Թեմա 5՝** Հոգեկարգավորման խմբերի տեսակները: **Թեմա 7՝** Երեխա-ծնող կամ ընտանեկան փոխհարաբերությունների հոգեկարգավորում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր /ստուգողական աշխատանք/:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում:

0303/B23. «ՄՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 7.5 ժամ (24 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7–րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին ստեղծագործական գործընթացի օրինաչափությունների, ստեղծագործական մտածողության, ստեղծագործության հոգեբանական տերմինոլոգիայի, ստեղծագործ անձի որակների, ստեղծագործականության /կրեատիվության/ հետ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա և հնարավորություն ձեռք կբերի ուսումնասիրել ստեղծագործության մեխանիզմներն ու հիմքերը, մոտիվացիան,
2. ծանոթ կլինի ստեղծագործության հոգեբանական և վերլուծության ձևերին,
3. կկարողանա հասկանալ, թե ինչպես կարելի է ներդաշնակորեն զարգացնել երեխաներին, սեփական հոգևոր կայացման ուղին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ստեղծագործական հոգեբանության առարկան, խնդիրները, ուսումնասիրության մեթոդները: **Թեմա 2՝** Հոգեկան երևույթների ստեղծագործական բնույթը: **Թեմա 3՝** Ստեղծագործությունը որպես անձի գործունեություն:

Թեմա 4՝ Ստեղծագործողի անձի հոգեբանական առանձնահատկությունները:
Թեմա 5՝ Արվեստը որպես կատարսիս: **Թեմա 6՝** Անձի ստեղծագործական ընդունակությունների ձևավորման մեթոդաբանություն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0303/B30. «ԲԺՇԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (8 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (30 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել սոմատիկ և հոգեկան հիվանդի հոգեբանության օրինաչափություններին, հոգեկան առողջությունը չափորոշող գործոններին, հոգեբանորեն «գրագետ» մտածելու զգալու և գործելու ձևերին, հիվանդությունները, խանգարումները, շեշտվածությունները կանխարգելելու հնարավորություններին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հոգեկան առողջության տեսական և գործնական հիմնահարցերը,
2. ծանոթ կլինի հոգեկան որոշ խանգարումների կանխարգելման ճանապարհներին,
3. կհասկանա իր անձի և իր օգնությանը դիմող անձանց հոգեկան առողջությանը վերաբերող խնդիրները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բժշկական հոգեբանության առարկան, նպատակը, խնդիրները, ուսումնասիրության առարկան: **Թեմա 2՝** Բժշկական հոգեբանության կայացման տեսական հիմքերը: **Թեմա 3՝** Ֆրոյդիզմի դերը բժշկական հոգեբանության համար: **Թեմա 4՝** Հոգեկան գործունեության առանձնահատկությունները: **Թեմա 5՝** Հոգեկան ֆունկցիաների ախտաբանական փոփոխությունները: **Թեմա 6՝** Հոգեմարմնական և մարմնահոգեկան փոխազդեցություններ և հիվանդություն: **Թեմա 7՝** Հիվանդության արտաքին և ներքին նկարագիր, հիվանդության գիտակցում: **Թեմա 8՝** Բժշկական դեոնտոլոգիա: **Թեմա 9՝** Հոգեհիգիենա, հոգեպրոֆիլակտիկա: **Թեմա 10՝** Հոգեծին հիվանդություններ: **Թեմա 11՝** Հոգեթերապիայի հիմունքները: **Թեմա 12՝** Մարմնական հիվանդի վարքագծային ռեակցիայի տիպերը: **Թեմա 13՝** Անձի ռեակցիայի տիպերը հիվանդության նկատմամբ ըստ Լիչկո-Իվանովի: **Թեմա 14՝** Հոգեմարմնական հիվանդություններ: **Թեմա 15՝** Ներքին հի-

վանդությունների բժշկահոգեբանական ասպեկտները: **Թեմա 16**՝ Հոգեբանական գործոնների դերը վիրաբուժական պրակտիկայում: **Թեմա 17**՝ Օնկոլոգիական հիվանդի հոգեբանություն: Կանցերոֆոբիա: **Թեմա 18**՝ Հղի կնոջ հոգեբանություն: **Թեմա 19**՝ Հիվանդ երեխայի հոգեբանության առանձնահատկությունները: **Թեմա 20**՝ Հիվանդի հոգեբանության առանձնահատկություններն ինֆեկցիոն հիվանդությունների ժամանակ: ՁԻԱՀ և հոգեբանություն: **Թեմա 21**՝ Զգայաբանների արատներով մարդկանց հոգեբանություն: **Թեմա 22**՝ Անձի հոգեբանական ռեակցիաները դեմքի վնասվածքների ժամանակ: **Թեմա 23**՝ Հիվանդի հոգեբանական ռեակցիաները մաշկային ախտահարումների և մանկական ուղեղային կաթվածի ժամանակ: **Թեմա 24**՝ Օլիգոֆրենիայի բժշկահոգեբանական ասպեկտները: **Թեմա 25**՝ Հոգեկան առողջության հիմնախնդիրները: **Թեմա 26**՝ Ալ-կոհոլիզմ և բժշկական հոգեբանություն: **Թեմա 27**՝ Ծերության հոգեբանական հիմնախնդիրները: **Թեմա 28**՝ Շիզոֆրենիայի ժամանակ առաջացող հոգեբանական հիմնախնդիրները: **Թեմա 29**՝ Էպիլեպսիայի հոգեբանական հիմնախնդիրները: **Թեմա 30**՝ Հոգեբանական բաղադրիչի դերը բժշկական փորձաքննության կառուցվածքում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0303/B26. «ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 3.5 ժամ (9 ժամ դասախոսություն, 5 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ազգային և ընտանեկան հոգեբանության խնդիրների պարզաբանմանն ուղղված հիմնական մոտեցումները, ներկայացնել ընտանիքի ֆունկցիաները, պարզաբանել ընտանիքում փոխհարաբերությունների հոգեբանական հիմքերն ու օրինաչափությունները, կոնֆլիկտները, դրանց ախտորոշման ձևերը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ազգային և ընտանեկան հոգեբանության հիմնական խնդրացանկը,
2. ծանոթ կլինի էթնիկական խմբերի դիմամիկայի օրինաչափություններին,
3. կկարողանա դուրս բերել միջէթնիկական փոխհարաբերությունների ու փոխազդեցությունների առանձնահատկությունները,
4. կհասկանա ընտանիքում ընթացող հոգեբանական գործընթացների տրամաբանությունը,

5. կկարողանա ախտորոշել հակաառություններ առաջացնող իրավիճակները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ազգային հոգեբանության առարկան, խնդիրները: **Թեմա 2՝** Էթնիկական խմբերի ձևավորման նախադրյալները և հիմնական հատկանիշները: **Թեմա 3՝** Էթնոսի մշակույթը և ինքնապաշտպանության խնդիրները: **Թեմա 4՝** Էթնոպաշտպան հոգեբանական մեխանիզմները և բարդությունները: **Թեմա 5՝** Միջ-էթնիկ փոխհարաբերություններ և պաշտպանական բարդություններ: **Թեմա 6՝** Էթնիկական /ազգային/ սիմվոլներ: **Թեմա 7՝** Էթնիկական հոգեկերտվածք և մտածելակերպ: **Թեմա 8՝** Ազգային /էթնիկական/ բնավորություն: **Թեմա 9՝** Հոգևոր ճգնաժամ և էթնովարքագիծ: **Թեմա 10՝** Էթնոհոգեբանական հարմարվողականություն և ձուլում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0303/B14. «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին մատուցել գիտելիքներ ներխուժային փոխհարաբերությունների, շփման ու հաղորդակցման առանձնահատկությունների, վարքի, անձի բարոյական զարգացման, մտավոր հասունացման հետ նրա ունեցած կապերի և մի շարք այլ երևույթների մասին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա սոցիալական հոգեբանության հիմնական խնդրացանկը,
2. ծանոթ կլինի խմբային դինամիկայի օրինաչափություններին,
3. կկարողանա բացահայտել սոցիալ-հոգեբանական երևույթները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Սոցիալ-հոգեբանական գաղափարների ձևավորման պատմությունը: **Թեմա 2՝** Շփման սոցիալ-հոգեբանական բնութագիրը: **Թեմա 3՝** Միջանձնային շփում, դրա տեսակները և գործառույթները: **Թեմա 4՝** Մարդկային հաղորդակցման առանձնահատկությունները: **Թեմա 5՝** Շփման գործընթացում մարդկանց կողմից միմյանց ճանաչումը և հասկացումը: **Թեմա 6՝** Փոխներգործությունը շփման գործընթացում: **Թեմա 7՝** Խմբի սոցիալական հոգեբանություն:

Թեմա 8՝ Ընդհանուր գաղափար սոցիալական խմբի վերաբերյալ: Սոցիալական խմբերի դասակարգումը: Սոցիալական մեծ խմբերի հոգեբանության ուսումնասիրման սկզբունքները: **Թեմա 9՝** Փոքր խմբի սոցիալական հոգեբանությունը, կառուցվածքային բնութագրերը: **Թեմա 10՝** Փոքր խմբի սոցիալական հոգեբանությունը, դինամիկ բնութագրերը: **Թեմա 11՝** Անձի սոցիալական հոգեբանություն: **Թեմա 12՝** Անձի սոցիալ-հոգեբանական բնութագիրը: **Թեմա 13՝** Մարդու վարքի սոցիալ-հոգեբանական կարգավորիչները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր /ստուգողական աշխատանք/:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում:

0303/B28. «ԷԹՆՈՂՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 3.5 ժամ (9 ժամ դասախոսություն, 5 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել Էթնոհոգեբանական հետազոտությունների հիմնական տեսական ուղղություններին, ներկայացնել անձի ուսումնասիրության էթնոհոգեբանական հիմնախնդիրները և սոցիալական վարքի կարգավորման մշակույթային տարբերությունները, ինչպես նաև գիտելիքներ հաղորդել միջէթնիկական հարաբերություններում միջխմբային ընկալման մեխանիզմների և էթնիկական կոնֆլիկտների առաջացման պատճառների վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը՝

1. գիտելիքներ ձեռք կրերի էթնոհոգեբանական հետազոտությունների հիմնական տեսական ուղղությունների, անձի սոցիալականացման էթնոմշակութային տարբերությունների, միջէթնիկական հարաբերությունների և հաղորդակցության սոցիալ-հոգեբանական հիմնահարցերի վերաբերյալ,
2. խորությամբ կհասկանա սոցիալական վարքի ձևավորման և կարգավորման միջմշակութային տարբերությունները,
3. կկարողանա ճիշտ մեկնաբանել և վերլուծել էթնիկական կոնֆլիկտների առաջացման սոցիալ-հոգեբանական պատճառները և կարգավորման մեխանիզմները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Էթնոհոգեբանությունը որպես գիտելիքի միջառարկայական ոլորտ: **Թեմա 2՝** Էթնոհոգեբանության ձևավորման և զարգացման պատմությունը: **Թեմա 3՝** Էթնոհոգեբանական հետազոտությունների հիմնական տեսական ուղղությունները: **Թեմա 4՝** Սոցիալականացման էթնոմշակութային վարիատիվու-

թյունը: **Թեմա 5**՝ Անձի ուսումնասիրության էթնոհոգեբանական հիմնահարցերը: **Թեմա 6**՝ Սոցիալական վարքի կարգավորման մշակութային տարբերությունները: **Թեմա 7**՝ Հաղորդակցության ունիվերսալ և սպեցիֆիկ-մշակութային ապեկսները: **Թեմա 8**՝ Էթնիկական նույնականացման զարգացումը և փոփոխությունները: **Թեմա 9**՝ Միջէթնիկական հարաբերություններում միջխմբային ընկալման մեխանիզմները: **Թեմա 10**՝ Էթնիկական կոնֆլիկտներ. Առաջացման պատճառները և կարգավորման եղանակները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր /ստուգողական աշխատանք/:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում:

0303/B33. «ՀՈԳԵԹԵՐԱԿԱՆ» (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 9-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին գիտելիքներ հաղորդել ժամանակակից հոգեթերապիայի առաջատար ուղղությունների և հայեցակարգերի վերաբերյալ, ներկայացնել այն գործնական խնդիրները, որ հոգեթերապիան լուծում է պրակտիկայում, լուսաբանել ժամանակակից աշխարհում հոգեթերապևտիկ միջամտության անհրաժեշտության և արդյունավետության հիմնահարցերը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը՝

1. կծանոթանա ժամանակակից հոգեթերապիայի առաջատար ուղղություններին ու հայեցակարգերին, դրանց գործնական հնարավորություններին, ինչպես նաև կիրառման մեթոդներին և տեխնիկաներին,
2. կխորացնի՝ հոգեբանության կիրառական ոլորտներում լուծվող հիմնահարցերի վերաբերյալ իր գիտելիքները,
3. ձեռք կբերի հոգեթերապիայի բնագավառի գործնական սկզբնական հմտություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հոգեդինամիկական թերապիա: **Թեմա 2**՝ Հոգեդինամիկական ուսմունքը հոգեկան ախտաբանության մասին: **Թեմա 3**՝ Հոգեդինամիկական թերապիայի տեխնիկան: **Թեմա 4**՝ Վերլուծական հոգեթերապիա: **Թեմա 5**՝ Հոգեթերապիայի տեսությունը Անհատական հոգեբանության դաշտում: **Թեմա 6**՝ Կենսաէներգետիկական վերլուծություն: **Թեմա 7**՝ Առաջնային հոգեթերապիա: **Թեմա 8**՝ Հոգեդրամա: **Թեմա 9**՝ Էքզիստենցյալ հոգեթերապիա: **Թեմա 10**՝ Գեշտալտ-թերապիա: **Թեմա 11**՝ Այցելուակենտրոն հոգեթերապիա: **Թեմա 12**՝ Կոգնիտիվ հոգեթերապիա: **Թեմա 13**՝ Ինստրումենտալ մոդելները հոգեթերապիայում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0303/B18. «ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 9-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել համաշխարհային մանկավարժական մտքի զարգացման պատմությանը, հայ մանկավարժական մտքի զարգացման պատմությանը, կրթության բովանդակությանը, ուսուցման հիմնական օրենքների, օրինաչափությունների, մեթոդների, սկզբունքների զարգացման պատմությանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մանկավարժական մտքի զարգացման պատմությունը արտասահմանյան երկրներում,
2. կհասկանա հայ մանկավարժական մտքի զարգացման պատմության առանձնահատկությունները,
3. կկարողանա տարբերակել արտասահմանյան և հայ մանկավարժության պատմության տարբերություններն ու նմանությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Դաստիարակության ծագումը: ***Թեմա 2՝*** Դաստիարակությունը Հին Հռոմում: ***Թեմա 3՝*** Դպրոցը և մանկավարժական միտքը միջնադարում: ***Թեմա 4՝*** Վերածննդի դպրոցն ու մանկավարժական միտքը: ***Թեմա 5՝*** Նոր շրջանի դպրոցն ու մանկավարժական միտքը: ***Թեմա 6՝*** Նոր շրջանի ռուսական դպրոցն ու մանկավարժական միտքը: ***Թեմա 7՝*** Մանկավարժական միտքն ու դաստիարակությունը մինչմեսրոպյան հայագիր դպրոցը: ***Թեմա 8՝*** Դպրոցն ու դաստիարակությունը 5–11-րդ դարերում: ***Թեմա 9՝*** Հայկական Վերածննդի դպրոցն ու մանկավարժական միտքը (10-րդ դարավերջից մինչև 12-րդ դարասկիզբ): ***Թեմա 10՝*** Դպրոցն ու մանկավարժական միտքը 12-րդ դարից 18-րդ դարերում: ***Թեմա 11՝*** Նոր շրջանի հայ դպրոցն ու մանկավարժական միտքը (19-րդ դար): ***Թեմա 12՝*** Մանկավարժական միտքն ու դպրոցը հայ գաղթօջախներում և սփյուռքում: ***Թեմա 13՝*** Խորհրդային դպրոցի ձևավորումը և ժամանակակից հայ մանկավարժները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0303/B31. «ԺԱՄՄՆԱԿԱԿԻՑ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ» (8 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (24 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական և 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 9-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի հիմնական նպատակն է ուսանողներին ծանոթացնել հոգեբանության ժամանակակից հիմնախնդիրներին, հոգեբանության տարբեր ուղղություններում նորագույն ուսումնասիրություններին և հետազոտություններին, ներկայացնել դասական և ժամանակակից տեսությունները, տալ հիմնական հարցադրումների և խնդիրների գիտական բացատրությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հոգեբանության ժամանակակից հիմնական տեսական մոտեցումները,
2. կհասկանա ժամանակակից հոգեբանության ծագումնաբանական հիմնական խնդիրները,
3. կկարողանա ճիշտ մեկնաբանել և վերլուծել հոգեբանության ժամանակակից օրինաչափությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ժամանակակից հոգեբանության հիմնախնդիրները: ***Ներածություն:*** ***Թեմա 2՝*** Ժամանակակից հոգեբանության մեթոդաբանական հիմնախնդիրները: ***Թեմա 3՝*** Ժամանակակից հոգեբանության ճգնաժամը: ***Թեմա 4՝*** Ժամանակակից հոգեբանության հիմնախնդիրները՝ ըստ հոգեբանության հիմնական բնագավառների: ***Թեմա 5՝*** Անձի հոգեբանության ժամանակակից հիմնահարցերը: ***Թեմա 6՝*** Սոցիալական հոգեբանության ժամանակակից հիմնահարցերը: ***Թեմա 7՝*** Հոգեբանական ներգործության և կառավարման հոգեբանության, արտակարգ իրավիճակների հոգեբանության արդի հիմնահարցերը: ***Թեմա 8՝*** Ժամանակակից հոգեբանության հիմնախնդիրները՝ հոգեբանության հիմնական ուղղություններում: ***Թեմա 9՝*** Ժամանակակից հոգեբանության հիմնախնդիրները՝ հոգեբանության նորագույն ուղղություններում: ***Թեմա 10՝*** Հետխորհրդային շրջանի հոգեբանության հարցեր:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0303/B36. «ԿՈՆՖԼԻԿՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (9 ժամ դասախոսություն, 5 ժամ գործնական և 4 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 10-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել կոնֆլիկտաբանության առարկային, խնդիրներին, քննարկել կոնֆլիկտի ֆենոմենը ներանձնային, միջանձնային, միջխմբային մակարդակներում, փորձել տալ դրանց լուծման ձևեր և եղանակներ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա կոնֆլիկտի առաջացման ու ընթացքի օրինաչափությունները,
2. ծանոթ կլինի կոնֆլիկտը դիտարկող հիմնական տեսություններին,
3. կկարողանա հոգեբանորեն վերլուծել կոնֆլիկտային իրադրությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն: **Թեմա 2՝** Կոնֆլիկտ հասկացությունը և դրանց տիպաբանությունը: **Թեմա 3՝** Կոնֆլիկտի կառուցվածքը և դինամիկան: **Թեմա 4՝** Ներանձնային կոնֆլիկտ: **Թեմա 5՝** Միջանձնային կոնֆլիկտներ: **Թեմա 6՝** Կոնֆլիկտները կազմակերպություններում: **Թեմա 7՝** Միջխմբային կոնֆլիկտ: **Թեմա 8՝** Կոնֆլիկտների կանխարգելումը և հանգուցալուծումը: **Թեմա 9՝** Բանակցությունները որպես կոնֆլիկտների հանգուցալուծման եղանակ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է 9 միավոր առավելագույն արժեքով:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր (ստուգողական աշխատանք):

2-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ):

0303/B25. «ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵՏԵԽՆԻԿԱՆԵՐ»

(5 կրեդիտ)

Շաբաթական՝ 7 ժամ (14 ժամ դասախոսություն, 12 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 9-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տեղեկություններ հաղորդել հոգեբանի աշխատանքի հիմնական ուղղությունների մասին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ծանոթ կլինի հոգեբանական ծառայության հաջողակ գործունեության ժամանակակից մոդելներին,
2. կկարողանա կատարել հոգեկարգավորիչ և կանխարգելիչ աշխատանքներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հոգեբանական ծառայության նպատակը, խնդիրները, տեսակը, կառուցվածքը: Հոգեճանաչումը հոգեբանական ծառայության կառուցվածքում: Հոգեբանական ծառայության տեսակները: **Թեմա 2՝** Ընդհանուր գաղափար հոգեբանական խորհրդատվության վերաբերյալ: **Թեմա 3՝** Հոգեբանական խորհրդատվության տեխնիկան: **Թեմա 4՝** Հոգեբանական շտկում և կանխարգելում: Հոգեկարգավորում և հոգեբանական վերականգնում: **Թեմա 5՝** Հոգեբան-խորհրդատուին ներկայացվող պահանջները: **Թեմա 6՝** Հոգեբանական օգնության կազմակերպման փուլերը: **Թեմա 7՝** Հոգեբանական ծառայության կազմակերպում: Անհատական աշխատանքի ուղղվածությունը: Խմբային աշխատանքների առավելությունները: Հոգեբանական ծառայության կազմակերպման դժվարությունները: **Թեմա 8՝** Հոգեբանական ծառայության խնդիրները, կառուցվածքը և գործառնությունները կրթության համակարգում: Կրթության համակարգում հոգեբանական ծառայության ստեղծման անհրաժեշտությունը, նրա հիմնական նպատակները: Հոգեբանական ծառայության կառուցվածքը: **Թեմա 9՝** Հոգեբանական ծառայության վիճակը և զարգացման միտումները կրթության համակարգում: **Թեմա 10՝** Երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառումը հոգեբանական ծառայության կազմակերպման ընթացքում: **Թեմա 11՝** Մանկավարժների հետ իրականացվող հոգեբանական ծառայության պահանջները: **Թեմա 12՝** Հոգեբանական ծառայության կազմակերպումը հատուկ ուսումնական հաստատություններում (մանկական գաղութի, մանկատան և հատուկ կարիքներով երեխաներ):

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0303/B35. «ԺԱՄՄՆԱԿԱԿԻՑ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ»

(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (13 ժամ դասախոսություն, 5 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 10-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել մանկավարժության գիտության ժամանակակից հիմնախնդիրները, նրա զարգացումը՝ գիտա-

կան հարացույցերի հիմքի վրա և ցույց տալ մանկավարժության գիտության տեղն ու դերը ժամանակակից գիտության ասպարեզում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մանկավարժության ժամանակակից տեսությունները, արդի ուղղությունները, ուսուցման և դաստիարակության դերը անձի ձևավորման և զարգացման գործընթացում,
2. կհասկանա ուսուցման և դաստիարակության կազմակերպման նոր ձևերն ու մեթոդները, կրթության կառավարման հիմնահարցերը,
3. կկարողանա տեսական գիտելիքները կիրառել գործնականում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ժամանակակից մանկավարժության առարկայի նպատակը, խնդիրները, մեթոդաբանական հիմքերը: **Թեմա 2՝** Մանկավարժության գիտության զարգացման պատմությունը: **Թեմա 3՝** Ժամանակակից մանկավարժության գիտության կոնցեպցիաները: **Թեմա 4՝** Ժամանակակից կրթության փիլիսոփայությունը: **Թեմա 5՝** Կրթության գլոբալացում և ինտեգրացում: **Թեմա 6՝** Ժամանակակից համաշխարհային կրթական համակարգ, դաշտ, միջավայր: **Թեմա 7՝** Կրթական որակի կառավարման և բարձրացման հիմնական դրույթները: **Թեմա 8՝** Մանկավարժության գիտության մեթոդաբանական հիմքերը: **Թեմա 9՝** Դիդակտիկայի ինովացիաները կրթության պատմության ասպարեզում: **Թեմա 10՝** Դաստիարակության խնդիրները, էությունը, տեխնոլոգիաները: **Թեմա 11՝** Մանկավարժական գիտության ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը, խնդիրները: **Թեմա 12՝** Մանկավարժական կադրերին ներկայացվող արդի պահանջները: **Թեմա 13՝** Մանկավարժական հաղորդակցում, դպրոց-ընտանիք-հասարակություն համագործակցությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

4.3.1. Կամրնտրական դասընթացներ

0303/B38. «ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 3 ժամ գործնական և 3 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել քաղաքական վարքի և գիտակցության սոցիալ-հոգեբանական հիմնարար օրի-նաչափություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը՝

1. կունենա գիտելիքներ ժամանակակից քաղաքական հոգեբանության առաջատար ուղղությունների ու հայեցակարգերի, քաղաքական սոցիալականացման, ինչպես նաև քաղաքական գիտակցության կառուցվածքի ու բովանդակության վերաբերյալ,
2. կհասկանա ժամանակակից քաղաքական համակարգերի սոցիալ-հոգեբանական նկարագիրը և քաղաքական տեխնոլոգիաների հոգեբանական կողմը,
3. կկարողանա իրականացնել քաղաքական զանգվածային երևույթների սոցիալ-հոգեբանական վերլուծություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Քաղաքական հոգեբանության ուսումնասիրության առարկան: ***Թեմա 2՝*** Ժամանակակից քաղաքական հոգեբանության առաջատար դպրոցները և ուղղությունները: ***Թեմա 3՝*** Քաղաքական սոցիալականացում: ***Թեմա 4՝*** Անձը քաղաքականության մեջ: ***Թեմա 5՝*** Քաղաքական մենթալիտետ: ***Թեմա 6՝*** Ավտորիտարիզմի և դեմոկրատիայի հոգեբանություն: ***Թեմա 7՝*** Քաղաքական զանգվածային երևույթների հոգեբանական առանձնահատկությունները: ***Թեմա 8՝*** Քաղաքական-հոգեբանական տեխնոլոգիաներ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է 9 միավոր առավելագույն արժեքով:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր (ստուգողական աշխատանք):

2-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ):

0303/B39. «ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 3 ժամ գործնական և 3 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել արտակարգ իրավիճակների՝ դրանցում առաջացող հոգեֆիզիոլոգիական, սոցիալ-հոգեբանական տեղաշարժերի վերաբերյալ տեսական գիտելիքներին, ձևավորել պրակտիկ հմտություններ արտակարգ իրավիճակներում անհատական և խմբային աշխատանքների համար, մեկնաբանել հոգեկարգավորման առարկայի տեսական և գործնական հարցերը, քննարկել տարբեր դպրոցների, հեղինակների, տարբեր տեխնիկաների վերլուծության հիմնահարցերը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կլիմանա կիրառվող տեխնիկաների սկզբնաղբյուրները, գործնական պարապմունքների կազմակերպմանը ներկայացվող պահանջները,
2. ծանոթ կլիմի կանխարգելման, հոգեշտկման և վերականգնողական աշխատանքի տեխնիկաներին,
3. կկարողանա ինքնուրույն կազմել անհատական և խմբային հոգեբանական աշխատանքի ծրագրեր,
4. կլիմանա արտակարգ իրավիճակների հոգեբանական օրինաչափությունները,
5. ծանոթ կլիմի արտակարգ իրավիճակներում հոգեկանում տեղի ունեցող փոփոխություններին,
6. կկարողանա կիրառել հոգեկորեկցիոն, հոգեվերականգնողական տեխնիկաներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Արտակարգ իրավիճակների հոգեբանության առարկան: ***Թեմա 2՝*** ՀՀ-ում աղետների կանխարգելման և փրկարարական ծառայությունների կառուցվածքը, գործառնությունները: ***Թեմա 3՝*** Արտակարգ իրավիճակների բնութագրերը, դասակարգումը: ***Թեմա 4՝*** Արտակարգ իրավիճակներում կենսագործունեության պահպանման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները: ***Թեմա 5՝*** Արտակարգ իրավիճակներում անձի հոգեկան գործառնությունների դրսևվորման առանձնահատկությունները: ***Թեմա 6՝*** Արտակարգ իրավիճակներում անձի սոցիալ-հոգեբանական յուրահատուկ դրսևորումները: ***Թեմա 7՝*** Հետվնասվածքային հոգեվիճակների դրսևորման հոգեբանական առանձնահատկությունները: ***Թեմա 8՝*** Արտակարգ իրավիճակներում վերականգնողական գործընթացի գիտա-գործնական հիմնադրությունների կիրառման ռազմավարությունը: ***Թեմա 9՝*** Արտակարգ իրավիճակներում անձի հուզական ոլորտի հետագոտման մեթոդները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական առաջադրանք:

2-րդ ստուգում. Անհատական առաջադրանք:

0303/B40. «ՀՏԿՈՂԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 3 ժամ գործնական և 3 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել շտկողական մանկավարժության առարկան, խնդիրները, սկզբունքները, կատեգորիաները և հիմնական գիտական տեսությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կիմանա անձի սոցիալական ախտահարության և նրա դեհիանտ կամ շեղվող վարքի սոցիալ-հոգեբանական և հոգեբանա-քրեաբանական օրինաչափությունները, սոցախտահարման և շեղվող վարքի պատճառականությունը և դրա վաղ հոգեբանական ու մանկավարժական պրոֆիլակտիկ անհրաժեշտությունը, որոնք հատկապես իրենց վառ արտահայտությունն են գտնում դեռահասության տարիքում:
2. կհասկանա այն սոցիալական և մանկավարժական իրադրությունները և խնդիրները, որոնք այլափոխում են անձնային ոլորտը և այն գործոնները, որոնք արտացոլում են դեռահասության տարիքի հոգեբանական օրինաչափությունները և հնարավոր այլափոխումները:
3. կկարողանա տիրապետել այն սոցիալ-հոգեբանական մեթոդներին և հնարներին, որոնց կիրառումը հնարավորություն կտա նախազգուշացնել և կանխարգելել անձի սոցիալական ախտահարումը, մասնավորապես նրա բարոյալքումը դեռահասության տարիքում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Շտկողական մանկավարժության առարկան, խնդիրները, սկզբունքները, կատեգորիաները և շտկողական մանկավարժության հիմնական գիտական տեսությունները: ***Թեմա 2՝*** Մարդու ֆիզիկական, հոգեբանական, ինտելեկտուալ մոտորային զարգացման նորման և շեղումները: ***Թեմա 3՝*** Առաջնային և երկրորդային դեֆեկտ: ***Թեմա 4՝*** Կոմբինացված շեղումներ, դրանց պատճառները: ***Թեմա 5՝*** Երեխաների անձնային զարգացման թերությունների պրոֆիլակտիկա, դիագնոստիկա և շտկում: ***Թեմա 6՝*** Երեխաների դեվիանտ (շեղող) վարքագիծ: ***Թեմա 7՝*** Խորհրդատվական-ախտորոշման, շտկողական-մանկավարժական, վերականգնողական աշխատանքների համակարգը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական առաջադրանք:

2-րդ ստուգում. Անհատական առաջադրանք:

0303/BA1. «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ»

(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 3 ժամ գործնական և 3 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին զինել ժամանակակից պահանջներին համապատասխան մանկավարժական տեխնոլոգիաների մասին գիտելիքներով:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կիմանա ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների բովանդակությունը, ընտրությունը, իրականացումը:
2. կհասկանա հիմնական մանկավարժական տեխնոլոգիաները:
3. կկարողանա տիրապետել մանկավարժական տեխնոլոգիաներին՝ որպես համակարգված գործողությունների և արդյունքների դիագնոստիկա կրթական գործընթացի փոփոխվող պայմաններում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մանկավարժական տեխնոլոգիան որպես համակարգված գործողությունների և միջոցառումների ամբողջություն, որը ապահովում է կանխ-բուժում և արդյունքների դիագնոստիկա կրթական գործընթացի փոփոխվող պայմաններում: ***Թեմա 2՝*** Հիմնական մանկավարժական տեխնոլոգիաները, ադապտացիոն, զարգացնող, անձնակողմնորոշված, երկխոսության. մոդուլային, համատեքստային, տեղեկատվական, ուսուցման մակարդակային դիֆերենցիացիայի, խմբակային ազդեցության, սուգեստոլոգիական, բազմապիսի տեղեկատվական միջոցների տեխնոլոգիա, խաղային տեխնոլոգիա, մանկավարժական հաղորդակցման տեխնոլոգիա: ***Թեմա 3՝*** Կանխորոշման դիագնոստիկա, հոմոգարգացման և շտկման: ***Թեմա 4՝*** Խնդրային մոտեցումը որպես ամբողջական մանկավարժական մոտեցման տեխնոլոգիական հիմք: ***Թեմա 5՝*** Մանկավարժական իրավիճակ և մանկավարժական խնդիր: ***Թեմա 6՝*** Մանկավարժական խնդիրների տեսակները: ***Թեմա 7՝*** Մանկավարժական գործընթացի կառուցման տեխնոլոգիա: ***Թեմա 8՝*** Մանկավարժական գործընթացի դիագնոստիկա, նախագծում և պլանավորում: ***Թեմա 9՝*** Զարգացնող գործունեության (ուսումնական-ճանաչողական, արժեքային կողմնորոշման, տեխնիկական, էսպերտային-առողջապահական կազմակերպման տեխնոլոգիա: ***Թեմա 10՝*** Անձի մանկավարժական ներգործության տեխնոլոգիա: ***Թեմա 11՝*** Մանկավարժական գործընթացի արդյունքների հաշվառման և վերլուծության տեխնոլոգիա:

Ստուգումների անցկացման ձևեր և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական առաջադրանք:

2-րդ ստուգում. Անհատական առաջադրանք:

4.4. «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտություն

0101/B09. «ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՆԱԼԻԶ»-1 (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (18 ժամ դասախոսություն, 18 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 1-ին, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել համակարգված տրամաբանական մտածողություն և տալ մաթեմատիկական ընդհանուր գիտելիքներ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի մաթեմատիկական անալիզի հիմնարար սկզբունքներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Թվային հաջորդականություններ և շարքեր: **Թեմա 2՝** Անընդհատ տոկոսների բանաձևը, e-թիվը: Մասնակի հաջորդականություններ: **Թեմա 3՝** Թվային շարքի մասնակի գումար: Թվային շարքի զուգամիտությունը և տարամիտությունը: **Թեմա 4՝** Մեկ և մի քանի փոփոխականների ֆունկցիայի սահմանի Հայնեի և Կոշու սահմանների համարժեքությունը: **Թեմա 5՝** Մեկ և մի քանի փոփոխականի ֆունկցիաների անընդհատությունը կետում և բազմությունում: **Թեմա 6՝** Վայերշտրասի և Բոլցանո-Կոշու թեորեմները: **Թեմա 7՝** Շուկայի սարդոստայնային մոդելներ: **Թեմա 8՝** Երկրաչափական, տնտեսագիտական և ֆիզիկական խնդիրներ, որոնք հանգեցնում են ածանցյալի գաղափարին: **Թեմա 9՝** Տարրական ֆունկցիաների ածանցյալը, բարդ և հակադարձ ֆունկցիաների ածանցյալը: **Թեմա 10՝** Լոգարիթմական ածանցյալ: Առաձգականություն, հարկային բեռի բաշխում: **Թեմա 11՝** Շատ փոփոխականի ֆունկցիայի մասնական ածանցյալներ, ածանցյալ ըստ ուղղության, գրադիենտ: **Թեմա 12՝** Համասեռ ֆունկցիաներ, արտադրական ֆունկցիաներ, Էյլերի բանաձևը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 2-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0201/BO2. «ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ»-1 (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (18 ժամ դասախոսություն, 18 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել շուկայական տնտեսության գործառնության միկրոտնտեսական օրինաչափություններին, նրանց մոտ զարգացնելով անհրաժեշտ ունակություններ տնտեսագիտության տեսության հիմնարար սկզբունքներին տիրապետելու և միկրոտնտեսագիտական ավելի կոնկրետ դասընթացների յուրացման համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա շուկայական տնտեսության միկրոտնտեսական օրինաչափությունները,
2. ծանոթ կլիմի տնային տնտեսությունների, ձեռնարկությունների և կառավարության տնտեսական վարքագծի հիմնական սկզբունքներին, շուկաների տիպային մոդելներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տնտեսագիտության տեսության առարկան և մեթոդը; **Թեմա 2՝** Հիմնարար տնտեսագիտական հասկացությունները: **Թեմա 3՝** Շուկայական համակարգ. Պահանջարկ և առաջարկ: **Թեմա 4՝** Սպառողի վարքը շուկայական համակարգում: **Թեմա 5՝** Տնտեսական բարիքների արտադրությունը: **Թեմա 6՝** Արտադրության ծախքերի տեսություն: **Թեմա 7՝** Մրցակցային ձեռնարկությունները և մրցակցային շուկաները: **Թեմա 8՝** Մոնոպոլիան շուկայական տնտեսությունում: **Թեմա 9՝** Մոնոպոլիստական մրցակցությունը և օլիգոպոլիան; **Թեմա 10՝** Արտադրության գործոնների շուկաները: **Թեմա 11՝** Ընդհանուր հավասարակշռությունը և տնտեսական արդյունավետությունը: **Թեմա 12՝** Շուկայական համակարգի ինստիտուցիոնալ լծակները: **Թեմա 13՝** Հասարակական ընտրության տեսություն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք յուրաքանչյուրը 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0101/B10. «ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՆԱԼԻԶ»-2 (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (18 ժամ դասախոսություն, 18 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել համապատասխան մաթեմատիկական ապարատ՝ ֆակուլտետում դասավանդվող «Գործույթների հետազոտման մաթեմատիկական մեթոդները», «Հավանականություն և կիրառական վիճակագրություն», «Միկրոէկոնոմիկա», «Մակրոէկոնոմիկա» և այլ դասընթացների յուրացման համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ստացած մաթեմատիկական գիտելիքները կիրառելու կյանքի ամենատարբեր բնագավառներում, մասնավորաբար՝ տնտեսագիտության մեջ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ֆունկցիայի էքստրեմումի անհրաժեշտ և բավարար պայմաններ: **Թեմա 2՝** Ռոլի, Լագրանժի և Կոշու թեորեմները: **Թեմա 3՝** Լոպիտալի կանոնը անորոշությունների բացահայտման համար: **Թեմա 4՝** Թեյլորի բանաձևը: **Թեմա 5՝** Ֆունկցիայի ուռուցիկություն: **Թեմա 6՝** Շրջման կետեր, անհրաժեշտ և բավարար պայմաններ: **Թեմա 7՝** Մեկ փոփոխականի ֆունկցիայի գրաֆիկը: **Թեմա 8՝** Նախնական, անորոշ ինտեգրալ: **Թեմա 9՝** Մասերով ինտեգրման և փոփոխականի փոխարինման բանաձևերը անորոշ ինտեգրալում: **Թեմա 10՝** Որոշյալ (Ռիմանի ինտեգրալ), կորագիծ սեղանի մակերեսի հաշվումը, տնտեսագիտական խնդիրներ: **Թեմա 11՝** Դարբուի գումարներ: **Թեմա 12՝** Անընդհատ և մոնոտոն ֆունկցիայի, բարդ ֆունկցիայի ինտեգրելիությունը (Լիպշիցի թեորեմ): **Թեմա 13՝** Որոշյալ ինտեգրալի հատկությունները: **Թեմա 14՝** Միջին արժեքի թեորեմը: **Թեմա 15՝** Վերին սահմանի ֆունկցիայի անընդհատությունը, դիֆերենցելիությունը: **Թեմա 16՝** Մասերով ինտեգրման և փոփոխականի փոխարինման բանաձևերը Ռիմանի ինտեգրալում: **Թեմա 17՝** Ռիմանի ինտեգրալի կիրառությունները բնագիտությունում և տնտեսագիտությունում: **Թեմա 18՝** Առաջին սեռի անխսկական ինտեգրալ: **Թեմա 19՝** Սովորական դիֆերենցիալ հավասարումների տարրերը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0201/B03. «ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ»-2 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (12 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել շուկայական տրնտեսության գործառնության մակրոտնտեսական օրինաչափություններին, տալ բավարար գիտելիքներ և ունակություններ տնտեսագիտության տեսության հիմնարար սկզբունքներին տիրապետելու համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. յուրացրած կլինի մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները և հավասարակշռության մոդելները,
2. կտիրապետի պետության տնտեսական քաղաքականության ուղղություններին ու արդյունավետության չափանիշներին, արտաքին տնտեսական գործունեության հիմնարար սկզբունքներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ազգային արդյունքը և դրա չափումը: **Թեմա 2՝** Մակրոտնտեսական կայունությունը և տատանումները: **Թեմա 3՝** Հիմնական մակրոտնտեսական կախվածությունները: **Թեմա 4՝** Ամբողջական ծախսումները և արտադրության հավասարակշիռ ծավալը: **Թեմա 5՝** Ամբողջական պահանջարկը և ամբողջական առաջարկը: Հավասարակշռությունը և դրա փոփոխությունները: **Թեմա 6՝** Ֆիսկալ քաղաքականությունը: **Թեմա 7՝** Փողը և բանկային գործը: Դրամավարկային քաղաքականությունը: **Թեմա 8՝** Ընդհանուր հավասարակշռությունը և IS-LM մոդելը: **Թեմա 9՝** Տնտեսական աճը: **Թեմա 10՝** Մակրոտնտեսական քաղաքականությունը և տեսությունը: Բանավեճային հարցեր:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք յուրաքանչյուրը 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0101/B11. «ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԾԱՅԻՆ ՀԱՆՐԱՀԱՇԻՎ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (18 ժամ դասախոսություն, 18 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել վերլուծական երկրաչափության գիտելիքների անհրաժեշտ հենք՝ գծային հանրահաշվի, մաթեմատիկական անալիզի դասընթացներում և որոշ տնտեսական մոդելներում օգտագործելու համար: Ծանոթացնել գծային հանրահաշվի արդիական մեթոդներին և տնտեսության վերլուծության խնդիրներում դրանց կիրառություններին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. յուրացրած կլինի գծային հանրահաշվի և վերլուծական երկրաչափության հիմունքները,
2. կկարողանա ստացած մաթեմատիկական գիտելիքները կիրառել կյանքի ամենատարբեր բնագավառներում, մասնավորաբար՝ տնտեսագիտությունում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Վեկտորները որպես ուղղորդված հատվածներ: Վեկտորի կոորդինատները: Գործողություններ վեկտորների հետ: Վեկտորի պրոյեկցիա: Սկալյար արտադրյալ: Համագիծ, համահարթ, օրթոգոնալ վեկտորներ: **Թեմա 2՝** Ուղղի ընդհանուր, նորմալ, պարամետրական, կանոնական հավասարումները հարթության մեջ: Ուղիղների փոխդասավորվածությունը: Կետի հեռավորությունն

ուղղից: Երկու անհայտով գծային անհավասարումներ: **Թեմա 3՝** Հարթության ընդհանուր և նորմալ հավասարումները, կետի հեռավորությունը հարթությունից: Ուղիղը որպես հարթությունների հատում: Ուղղի պարամետրական կանոնական հավասարումները տարածությունում: Երեք անհայտով գծային անհավասարումներ: **Թեմա 4՝** Ճառագայթի, կիսահարթության, կիսատարածության ուռուցիկությունը: Ուռուցիկ բազմությունների հատումը: Բազմության ուռուցիկ թաղանթ: Ուռուցիկ բազմանիստ: Ֆարկաշի թեորեմը: **Թեմա 5՝** Տեղափոխություններ և տեղադրություններ, նրանց զույգությունը, քանակը: n -րդ կարգի որոշիչ, նրա հատկությունները: Միևնույն, լրացուցիչ միևնույն հանրահաշվական լրացում, Լապլասի թեորեմը: Գծային հավասարումների համակարգի լուծման Գաուսի մեթոդը, Կրամերի կանոնը: **Թեմա 6՝** Մատրիցներ: Գործողություններ մատրիցների հետ: Չվերասերված քառակուսի մատրիցի հակադարձը, միավոր մատրից: Մատրիցային հավասարումներ: Քառակուսի մատրիցների արտադրյալի որոշիչը: **Թեմա 7՝** Գծային տարածության սահմանումը, աքսիոմները և դրանց հետևանքները: Գծային տարածության վեկտորների անկախ և կախյալ համակարգեր: Վեկտորների համակարգի բազա (առավելագույն անկախ ենթահամակարգ) և ռանգ: Գծային տարածության բազիս: Մատրիցի ռանգը որպես սյուն վեկտորների համակարգի ռանգ: Մատրիցի ռանգը 0 -ից տարբեր միևնույնի միջոցով: **Թեմա 8՝** Գծային հավասարումների համակարգի համատեղելիության Կրոնեկեր-Կապելիի թեորեմը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0101/B24. «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (6 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հաղորդել ծրագրային փաթեթների միջոցով տնտեսական ինֆորմացիայի մշակման գիտելիքներ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա տնտեսական ինֆորմացիայի ծրագրային մշակման հմտություններ,
2. կկարողանա կատարել տնտեսագիտական գործոնների արժեքների հաշվարկ VBA (Ms Excel միջավայրում) լեզվով,
3. կտիրապետի տիպային ծրագրավորման փաթեթներին և կկարողանա դրանք կիրառել տնտեսագիտական վերլուծություններում ու նախագծերի ավտոմատացման խնդիրներում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տնտեսական ինֆորմացիայի համակարգչային մշակման ծրագրային ապահովումը: **Թեմա 2՝** VBA ծրագրավորման լեզուն և նրա հիմնական տարրերը: **Թեմա 3՝** VBA լեզվի օպերատորները: **Թեմա 4՝** VBA պրոցեդուրաներ և ֆունկցիաներ: **Թեմա 5՝** VBA ֆինանսական, վիճակագրական, մաթեմատիկական ֆունկցիաների կիրառությունը տնտեսագիտական հետազոտություններում: **Թեմա 6՝** VBA-ն որպես օբյեկտային կոդմտրոշմամբ ծրագրավորման լեզու: **Թեմա 7՝** Նախագծերի ավտոմատացումը ղեկավարման էլեմենտների միջոցով:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

0201/B04. «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (12 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել տարբեր պատմական ժամանակահատվածներում արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների զարգացման, ինչպես նաև տնտեսության կարևորագույն ոլորտների, տնտեսական կացութաձևերի, տարբեր երկրների տնտեսությունների կազմակերպման ձևերի զարգացման գործընթացներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մարդկային քաղաքակրթությունների տնտեսական զարգացման հիմնական օրինաչափությունները,
2. յուրացրած կլինի տնտեսական բարեփոխումների պատմական փորձը,
3. կիմանա առաջատար երկրների տնտեսական քաղաքականության առանձնահատկությունները, տնտեսական առաջընթացի ապահովման կարևոր ուղղությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տնտեսական պատմության դասընթացի ընդհանուր նկարագիրը: **Թեմա 2՝** Նախնադարյան – համայնական տնտեսակարգը: **Թեմա 3՝** Ստրկատիքական տնտեսակարգը: Արևելյան և Արևմտյան ստրկությունը: **Թեմա 4՝** Ֆեոդալիզմի տնտեսակարգը: Արևմտյան Եվրոպայի, Ռուսաստանի և Ճապոնիայի տնտեսությունը միջնադարում: **Թեմա 5՝** Աշխարհագրական մեծ հայտնագործությունները և կապիտալիստական տնտեսակարգի ձևավորումը Արևմտյան Եվրոպայում: **Թեմա 6՝** Արևմտյան Եվրոպայի, ԱՄՆ –ի, Ճապոնիայի և Ռուսաստանի տնտեսական զարգացումը 18-19 դդ.: **Թեմա 7՝** Մոնոպոլիստական կապիտալիզ-

մի ձևավորումը տնտեսապես զարգացած երկրներում: **Թեմա 8՝** Աշխարհի առաջատար երկրների տնտեսությունը մինչպատերազմյան ժամանակաշրջանում: **Թեմա 9՝** Խորհրդային ամբողջատիրական տնտեսակարգի ձևավորումը: **Թեմա 10՝** Երկրորդ Համաշխարհային պատերազմի ազդեցությունը առաջատար տնտեսական զարգացման գործընթացում: **Թեմա 11՝** Համաշխարհային տնտեսական զարգացման միտումներն ու առանձնահատկությունները 20 –րդ դարի վերջին 21 –րդ դարի սկզբին:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0303/B39. «ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 4,5 ժամ (12 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3–րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել տնտեսությունու տեղի ունեցող սոցիալական գործընթացներին, երևույթներին և հարաբերություններին տնտեսագիտության և սոցիոլոգիայի միջառարկայական հատմամբ ձևավորված հարաբերականորեն նոր ուղղությամբ, սոցիումի զարգացման և տնտեսագիտական համակարգի վրա դրանց ազդեցության վերլուծություններին, սոցիոլոգիական հետազոտությունների անցկացման հմտություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

կունենա Բավարար գիտելիքներ սոցիալ-տնտեսական գործընթացների սոցիոլոգիական վերլուծության, ինչպես նաև սոցիոլոգիական տեղեկատվության տնտեսագիտական կիրառությունների վերաբերյալ:

կկարողանա տնտեսագիտական հետազոտություններում կիրառել սոցիոլոգիական մեթոդներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տնտեսագիտական սոցիոլոգիայի առարկան և մեթոդը: **Թեմա 2՝** Սոցիալական պետությունը և արդարության սկզբունքները: **Թեմա 3՝** Սոցիալական անհավասարությունը և հասարակական դասերի ստրատիֆիկացիոն հիմնական տեսությունները: **Թեմա 4՝** Սոցիալական շերտավորման հիմնախնդիրները տնտեսությունում: **Թեմա 5՝** Եկամուտների անհավասարությունը նայն պայմանավորող գործոնները: **Թեմա 6՝** Կենսամակարդակի և կյանքի որակի—ցուցանիշները: **Թեմա 7՝** Աղքատության պատկերը. դրսևորման ձևերը և չափման եղանակները: **Թեմա 8՝** Գործազրկության և զբաղվածության սոցիալ-տնտե-

սական ասպեկտները: **Թեմա 9՝** Աշխատանքի սոցիալական կազմակերպման հիմքերը: **Թեմա 10՝** Սոցիալական քաղաքականության էությունը, առանձնահատկությունները ՀՀ-ում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0101/B25. «ԳՈՐԾՈՒՅԹՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴ-ՆԵՐ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (18 ժամ դասախոսություն, 18 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին ամփոփ և մատչելի ձևով ծանոթացնել գործույթների հետազոտման ժամանակակից մաթեմատիկական մոդելներին և դրանց լուծման եղանակներին, ինչպես նաև ուսումնասիրել որոշումների կայացման տիպային մոդելներ և լուծման եղանակներ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա որոշել հետազոտվող խնդրի (համակարգի) նպատակը, նկարագրել այլընտրանքային լուծումները, սահմանել վերջիններիս արդյունավետությունը,
2. կկարողանա կառուցել խնդրի մաթեմատիկական մոդելը և գտնել լավագույն լուծումը համաձայն ընդունված նպատակի:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գծային ծրագրավորում: **Թեմա 2՝** Գների հավասարակշռության թեորեմ: **Թեմա 3՝** Տրանսպորտի խնդիրը: **Թեմա 4՝** Կարճագույն ճանապարհի խնդիրներ: **Թեմա 5՝** Հոսքեր ցանցերում: **Թեմա 6՝** Գործույթների հետազոտման խնդիրների լուծման դինամիկ ծրագրավորման մեթոդը: **Թեմա 7՝** Խաղերի տեսություն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք յուրաքանչյուրը 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0101/B26. «ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ»
(5 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (12 ժամ դասախոսություն, 12 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, եզրափակիչ գնահատմամբ
Նպատակը.

Դասընթացի նպատակն է, ուսանողներին հաղորդել որոշակի գիտելիքներ պատահական մեծությունների և պատահական պրոցեսների, ինչպես նաև բաշխման ֆունկցիաների ու սահմանային թեորեմների, անհայտ պարամետրերի գնահատման ու վարկածների ստուգման տեսությունների վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա անհրաժեշտ գիտելիքներ հավանականային տարածությունների, պատահական մեծությունների դասերի, բաշխման ֆունկցիաների, թվային բնութագրիչների, պատահական պրոցեսների, սահմանային թեորեմների վերաբերյալ,
2. կկարողանա կատարել անհայտ պարամետրերի գնահատում, վարկածների ստուգում, դիսպերսիոն, ռեգրեսիոն և կորելյացիոն անալիզ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հավանականային տարածություն: **Թեմա 2՝** Պատահական մեծություն և բաշխման ֆունկցիա: **Թեմա 3՝** Պատահական մեծությունների թվային բնութագրիչները: **Թեմա 4՝** Սահմանային թեորեմներ: **Թեմա 5՝** Պատահական պրոցեսներ: **Թեմա 6՝** Մաթեմատիկական վիճակագրության տարրերը: **Թեմա 7՝** Անհայտ պարամետրերի գնահատումը: **Թեմա 8՝** Վիճակագրական հիպոթեզների ստուգում: **Թեմա 9՝** Դիսպերսիոն անալիզ: **Թեմա 10՝** Կորելյացիոն անալիզ: **Թեմա 11՝** Էքսպերտային գնահատականների վիճակագրական անալիզ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0201/B07. «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (12 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, եզրափակիչ գնահատմամբ
Նպատակը.

Դասընթացի հիմնական նպատակն է ուսանողներին ներկայացնել աշխարհի տնտեսությունների համապարփակ նկարագիրը, տալ տեղեկություններ տարբեր երկրների տնտեսությունների մասին, ինչը հիմք կհանդիսանա Հայաս-

տանի արտաքին տնտեսական կապերի ասպարեզում ճիշտ կողմնորոշվելու համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա տեղեկություններ տարբեր երկրների տնտեսությունների մասին,
2. պրակտիկ աշխատանքի ընթացքում կկարողանա ճիշտ կողմնորոշվել տարբեր նպատակներով համագործակցության համար երկրների, ինչպես նաև ոլորտների և բնագավառների ընտրության հարցում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Համաշխարհային տնտեսությունը և դրա զարգացման փուլերը:

Թեմա 2՝ Աշխատանքի միջազգային բաժանումը և կոռպորացումը: ***Թեմա 3՝*** Արդիականության գոբալ հիմնախնդիրները: ***Թեմա 4՝*** Համաշխարհային տնտեսական աճի տեմպերն ու համամասնությունները: ***Թեմա 5՝*** Միջազգային առևտուր: ***Թեմա 6՝*** Միջազգային ֆինանսավորում: ***Թեմա 7՝*** Աշխատուժի միջազգային միգրացիա: ***Թեմա 8՝*** Միջազգային գիտատեխնիկական գործակցություն: ***Թեմա 9՝*** Միջազգային ֆիրմաներ: ***Թեմա 10՝*** Ազատ տնտեսական գոտիներ: ***Թեմա 11՝*** Միջազգային տնտեսական ինտեգրացիան: ***Թեմա 12՝*** Զարգացած երկրները համաշխարհային տնտեսության մեջ: ***Թեմա 13՝*** Զարգացող երկրները համաշխարհային տնտեսության մեջ: ***Թեմա 14՝*** Հայաստանի տնտեսության ինտեգրվածությունը համաշխարհային տնտեսության մեջ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0201/B11. «ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (12 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել շուկայական հարաբերություններին անցման ժամանակաշրջանում իրականացվող տնտեսական և սոցիալական վերափոխումներին, ինչպես նաև ՀՀ տնտեսության կառուցվածքին, առանձնահատկություններին և ներկա մարտահրավերներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. պատկերացում կունենա երկրի տնտեսությունում գոյություն ունեցող իրավիճակի մասին,

2. կիմանա ՀՀ տնտեսության առանձնահատկությունները և ներկա մարտահրավերները,
3. պատկերացում կունենա թերի, անբավարար մշակված և բանավեճային հիմնախնդիրների մասին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ազգային տնտեսության էությունը և զարգացման հիմնախնդիրները: **Թեմա 2՝** Ազգային տնտեսության տեսակները: **Թեմա 3՝** Երկրի տնտեսական ներուժը: **Թեմա 4՝** Երկրի գիտատեխնիկական ներուժը: **Թեմա 5՝** ՀՀ արդյունաբերությունը, ճյուղային կառուցվածքը: **Թեմա 6՝** ՀՀ գյուղատնտեսությունը: **Թեմա 7՝** Արտադրական ենթակառուցվածքները ազգային տնտեսական համակարգում: **Թեմա 8՝** Ներդրումային քաղաքականությունը: **Թեմա 9՝** Զբաղվածության ապահովման համակարգը: **Թեմա 10՝** Ազգային տնտեսության մրցունակությունը: **Թեմա 11՝** Փոքր և միջին ձեռնարկատիրությունը (ՓՄՁ) ՀՀ-ում: **Թեմա 12՝** Ազգային տնտեսության կարգավորումը: **Թեմա 13՝** Ազգային տնտեսության սոցիալական հիմքերը: **Թեմա 14՝** ՀՀ տնտեսությունը համաշխարհային տնտեսական համակարգում: **Թեմա 15՝** Երկրի տնտեսական անվտանգությունը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0201/B09. «ՄԻԿՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (18 ժամ դասախոսություն, 18 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացն իրենից ներկայացնում է տնտեսագիտության տեսության միկրոտնտեսագիտություն բաժնի երկրորդ (խորացված) մակարդակը: Դասընթացի նըպատակն է ուսանողներին սովորեցնել մաթեմատիկական մոդելների և մեթոդների կիրառմամբ վերլուծել տնտեսական սուբյեկտների վարքը, միկրոտնտեսական օրինաչափությունները, միկրոտնտեսական ցուցանիշների կապերը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա մաթեմատիկական մեթոդներ կիրառել միկրոտնտեսական վերլուծություններում,
2. կունենա գիտելիքներ շուկայական տնտեսության միկրոտնտեսական հիմնահարցերի ուսումնասիրման համար:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Օգտակարության մաքսիմալացման և ծախսերի մինիմալացման խրնդիրները, դրանց կապը: **Թեմա 2՝** Անուղղակի օգտակարության ֆունկցիան և ծախսերի ֆունկցիան: **Թեմա 3՝** Վալրասի հավասարակշռությունը, բարեկեցության թեորեմները: **Թեմա 4՝** Փոխարինման և եկամտի էֆեկտները, Սլուցկու հավասարումը: **Թեմա 5՝** Փոխհատուցված և համարժեք վարիացիա, սպա-ռողի ավելցուկը: **Թեմա 6՝** Ծախսերի մինիմալացման խնդիրը, ռեսուրսների պայմանական պահանջարկի ֆունկցիաները, ծախսերի երկրաչափությունը: **Թեմա 7՝** Շահույթի մաքսիմալացման խնդիրը, թողարկման առաջարկը և ռեսուրսների պահանջարկը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0201/B14. «ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԷԿՈՆՈՄԻԿԱ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (6 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է յուրացնել ծառայությունների ոլորտի ճյուղերում շուկայական տնտեսության անցման տնտեսավարման, ձեռներեցության, տնտեսական միջոցառումների իրականացման նոր պայմանների ներդրման պրակտիկան:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա տեսական և գործնական գիտելիքներ շուկայական տնտեսությանն անցման պայմաններում ծառայությունների ոլորտում տնտեսական գործունեության վերաբերյալ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ծառայությունների ոլորտը: Զարգացման գործոնները, ռեսուրսային պոտենցիալը: **Թեմա 2՝** Շուկան և ձեռնարկատիրական գործունեությունը ծառայությունների ոլորտում: **Թեմա 3՝** Սեփականության ձևերը և սեփականաշնորհումը ծառայությունների ոլորտում: **Թեմա 4՝** Ծառայությունների ոլորտի զարգացման պետական կարգավորումը: **Թեմա 5՝** Մարքեթինգը ծառայությունների ոլորտում: **Թեմա 6՝** Կրթությունը և հմտությունը շուկայի պայմաններում: **Թեմա 7՝** Մշակույթի և տուրիզմի ծառայությունների շուկան:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0201/B13. «ՎԻՃԱԿԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ» (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (12 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին տալ վիճակագրական մեթոդների օգտագործման հմտություններ, ծանոթացնել օգտագործվող տնտեսական վիճակագրության ցուցանիշների համակարգին, կատեգորիաներին, հաշվարկման եղանակներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ինքնուրույն հավաքել, ամփոփել և վերլուծել տնտեսության տարբեր ոլորտներին վերաբերող վիճակագրական տվյալները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Վիճակագրության առարկան, մեթոդը, խնդիրները և կազմակերպումը: **Թեմա 2՝** Վիճակագրական դիտարկումներ: **Թեմա 3՝** Վիճակագրական ամփոփում, աղյուսակներ, խնբավորումներ: Գրաֆիկական մեթոդը վիճակագրության մեջ: **Թեմա 4՝** Ընդհանրացնող վիճակագրական ցուցանիշներ: **Թեմա 5՝** Միջին մեծություններ: **Թեմա 6՝** Վարիացիայի ցուցանիշները: **Թեմա 7՝** Ընտրանքային դիտարկում: **Թեմա 8՝** Դինամիկայի շարքեր, դրանց վերլուծությունը: **Թեմա 9՝** Ինդեքսներ, ինդեքսային մեթոդ: **Թեմա 10՝** Փոխկապվածությունների վիճակագրական ուսումնասիրությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0101/B27. «ՀՄՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿՈՒՄ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 4.5 ժամ (18 ժամ գործնական պարապմունքներ),

Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել ընդհանուր պատկերացում տնտեսական գործընթացների և մենեջմենթի խնդիրների համակարգչային մոդելավորման վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Պրակտիկայի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա ծրագրային փաթեթների միջոցով տնտեսական գործընթացների մոդելավորման և վերլուծության հմտություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ MS Excel կիրառական փաթեթի ընդլայնված հնարավորությունները: **Թեմա 2՝** Մենեջմենթի և մարքեթինգի խնդիրների լուծումը MS Excel-ում: **Թեմա 3՝** Տնտեսական իրավիճակների մոդելավորումը MS Excel-ում: **Թեմա 4՝** Տվյալների բազաների վերլուծությունը MS Excel-ում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը՝ 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

0201/B08. «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (12 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ բազային տեսական և էվոլյուցիոն գիտելիքներ համաշխարհային տնտեսության զարգացման մասին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. պատկերացում կունենա միջազգային առևտրի ձևավորման և միջազգային արժույթային համակարգի մասին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն: **Թեմա 2՝** Առևտրատնտեսական տեսությունների և հայացքների առաջացումը: **Թեմա 3՝** Համաշխարհային տնտեսության վերաբերյալ տեսությունների ձևավորումը: **Թեմա 4՝** Համաշխարհային տնտեսության աճը և ռեսուրսների շուկա: **Թեմա 5՝** Աշխատանքային ռեսուրսների միգրացիա: **Թեմա 6՝** Կապիտալի շարժը համաշխարհային տնտեսությունում: **Թեմա 7՝** Վճարային հաշվեկշռի էությունը և կառուցվածքը: **Թեմա 8՝** Հովանավորչական քաղաքականություն: **Թեմա 9՝** Ոչ մաքսային քաղաքականություն: **Թեմա 10՝** Միջազգային արժույթային համակարգի ձևավորումը: **Թեմա 11՝** Միջազգային դրամավարկային կազմակերպություններ: **Թեմա 12՝** Տնտեսական քաղաքականությունը բաց տնտեսության պայմաններում: **Թեմա 13՝** Գլոբալիզացիան և համաշխարհային տնտեսությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0201/B12. «ԷԿՈՆՈՄԵՏՐԻԿԱ»-1 (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (6 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ տնտեսագիտական հետազոտություններում քանակական և որակական էկոնոմետրիկ մեթոդների կիրառման համար անհրաժեշտ գիտելիքներ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի տնտեսագիտական հետազոտություններ կատարելու էկոնոմետրիկ մեթոդներին,

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Էկոնոմետրիկական որպես առարկա: **Թեմա 2՝** Պարզագույն ռեգրեսիա: **Թեմա 3՝** Բազմակի ռեգրեսիա:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0201/B05. «ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (18 ժամ դասախոսություն, 18 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է օժանդակել ուսանողներին առավել համակողմանի ըմբռնել և յուրացնել ժամանակակից տնտեսագիտության ձևակերպումները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ծանոթ կլինի տնտեսագիտական մտքի ծագման, զարգացման և տնտեսագիտական տեսությունների ձևավորման ողջ պատմությանը՝ Հին աշխարհից մինչև 19-րդ դարի վերջը:

2. ծանոթ կլինի տնտեսագիտական մտքի ծագման, զարգացման և տնտեսագիտական տեսությունների ձևավորման ողջ պատմությանը՝ Հին աշխարհից մինչև մեր օրերը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տնտեսագիտական պատկերացումները ավանդական հասարակություններում: **Թեմա 2՝** Դասական քաղաքատնտեսության սկիզբը: **Թեմա 3՝** Ա. Սմիթը և նրա «Ազգերի հարստության բնույթի և պատճառների ուսումնասիրություն» աշխատությունը: **Թեմա 4՝** Մեյի շուկաների հայեցակարգը և իրացման տեսությունը: **Թեմա 5՝** Ռիկարդոյի քաղաքատնտեսական համակարգը: **Թեմա 6՝** Ջոն Ստյուարտ Միլը և նրա աշխատությունը: **Թեմա 7՝** Կ. Մարքսի «Կապիտալը»: **Թեմա 8՝** Պատմական ուղղությունը քաղաքատնտեսության մեջ: **Թեմա 9՝** Մարժինալիստական հեղափոխությունը: **Թեմա 10՝** Մարշալյան տնտեսագիտական տեսությունը: **Թեմա 11՝** Ինստիտուցիոնալիզմ: **Թեմա 12՝** Քեյնսի տեսությունը: **Թեմա 13՝** Նոր պահպանողական տեսությունները: **Թեմա 14՝** Անցման ժամանակաշրջանի հիմնահարցերը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք յուրաքանչյուրը 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0201/B30. «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՍՈՂԵԼԱՎՈՐՈՒՄ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (12 ժամ դասախոսություն, 12 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Ուսանողների մոտ ձևավորել ընդհանուր պատկերացում տնտեսագիտամաթեմատիկական մոդելավորման գործընթացի, սկզբունքների և մեթոդների վերաբերյալ, տալ գիտելիքներ տնտեսության տարբեր ոլորտներում ու մակարդակներում մոդելավորման հնարավորությունների վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի տնտեսա-մաթեմատիկական մոդելավորման գործընթացի հիմնարար սկզբունքներին և մեթոդներին,
2. կունենա կոնկրետ տնտեսական իրավիճակներում որոշումների ընդունման ու հիմնավորման գիտելիքներ և հմտություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Պատմական ակնարկ: Դասընթացի ուսումնասիրության օբյեկտը և առարկան, տնտեսա-մաթեմատիկական մոդելի հասկացությունը, մոդելների

դասակարգումն ու հիմնական տիպերը, մոդելավորման փուլերը: **Թեմա 2՝** Տըն-տեսական աճի մոդելները: **Թեմա 3՝** Արտադրության գծային մոդելներ: **Թեմա 4՝** Ցանցային մոդելներ: **Թեմա 5՝** Պաշարների կառավարման խնդիրները: **Թեմա 6՝** Օպտիմալ կառավարման խնդիրը: **Թեմա 7՝** Խաղային մոդելներ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0201/B10. «ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (18 ժամ դասախոսություն, 18 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացն իրենից ներկայացնում է տնտեսագիտության տեսության միկրոտնտեսագիտություն բաժնի երկրորդ (խորացված) մակարդակը: Դասընթացի նպատակն է ուսանողներին սովորեցնել մաթեմատիկական մոդելների և մեթոդների կիրառմամբ վերլուծել մակրոտնտեսական ցուցանիշների միջև առկա կապերը, մակրոտնտեսական զարգացման օրինաչափությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա մաթեմատիկական մեթոդները կիրառել մակրոտնտեսական վերլուծություններում,
2. կունենա անհրաժեշտ գիտելիքներ շուկայական տնտեսության մակրոտնտեսական հիմնահարցերի ուսումնասիրման համար:

Բովանդակությունը.

9. կկարողանա վերարտադրել մասնագիտական տեքստը, նաև ներկայացնել նրա բովանդակությունը սեղմ և ընդարձակ,
10. կկարողանա թարգմանել մասնագիտական տեքստը հայերենից ռուսերեն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բառակազմություն. բառարմատի, բառածանցների ընդհանուր պատկերացում, հիմնական բառակազմական միավորները: **Թեմա 2՝** Ձևաբանություն. գոյականի, բայի, ածականի և մակբայի քերականական կարգերը, գոյականի սեռը, հոլովներ և հոլովում, բայի սեռը, ժամանակը, խոնարհումը: **Թեմա 3՝** Շարահյուսություն. միակազմ նախադասությունների դասակարգումը ըստ տեսակների, բարդ նախադասության ընդհանուր բնութագիրը և տեսակները: **Թեմա 4՝** Բարդ համադասական նախադասություն: **Թեմա 5՝** Մասնագիտական տեքստի կառուցվածքը. մասնագիտական տեքստի վերլուծություն, տերմինների մեկնաբանում, բնորոշ շարահյուսական կառույցների առանձնացում, տեքստի թարգմանություն:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է նախօրոք տրվող ստուգարքային թելադրության դրական գնահատականի և եզրափակիչ բանավոր պատասխանի հիման վրա:

0304/B04. «ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ» -1(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 1-ին, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում (ունկնդրել, կարդալ, խոսել, գրել):

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

4. կունենա հարուստ ակտիվ և ներգոր բառապաշար,

5. կիմանա անգլերենի քերականության հատուկ բարդություն ունեցող երեկույթները,
6. կունենա անգլերեն բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Արտասանություն, ուղղախոսություն. անգլերենի հնչյունական համակարգի ընդհանուր բնութագիրը, հնչյունների և հնչույթների արտասանական առանձնահատկությունները, նախադասության հնչերանգը: **Թեմա 2՝** Բառապաշար, բառակազմություն. հիմնական բառակազմական միջոցներ (ածանցում, բառաբարդում, փոխակարգում): **Թեմա 3՝** Քերականություն. խոսքի մասերի քերականական կարգերը, նախադասության շարադասությունը (ուղիղ և շրջուն): **Թեմա 4՝** Առաջարկվող թեմաներ. «Ընտանիք», «Ընտանեկան հարաբերություններ և ավանդույթներ», «Իմ հետաքրքրությունները», «Ճանապարհորդություն», «Երազանքներ», «Իմ ապագա մասնագիտությունը», «Շրջակա միջավայրը և նրա պահպանումը», «Հանրամշակութային երևույթներ» և այլն:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

0304/B01. «ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵՁՈՒ» -1(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 1-ին, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է թարմացնել դպրոցում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականական և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա: Այս փուլում ստացած գիտելիքները հիմք են հանդիսանում հետագա՝ առավել խորացված ուսումնասիրության համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

4. կկարողանա ճիշտ արտասանել ֆրանսերեն հնչյունները և դրանց տառադարձման նշանները,
5. կկարողանա ճիշտ հնչերանգով ձևակերպել հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները՝ դադար, շեշտ, հիմնական հնչերանգ, մեղեդային եզրափակում, տեմպ,
6. կկարողանա ձևաբանորեն և շարահյուսորեն ճիշտ վերլուծել բառը և նախադասությունը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ռիթմիկ խմբեր: Շեշտ: Enchainement. Liaison. **Թեմա 2՝** Հատուկ և հասարակ գոյական: Գոյականի սեռը, թիվը: Սեռի արտահայտությունը հոդերի և ածանցների միջոցով: **Թեմա 3՝** Որոշյալ և անորոշ հոդ: Մասնական հոդը որպես անորոշ քանակ արտահայտելու միջոց: Միաձուլված հոդ: Հոդը չօգտագործելու դեպքերը: **Թեմա 4՝** Ցուցական, ստացական, հարցական և բացականչական, անորոշ ածականներ: Ածականի համաձայնությունը գոյականի հետ: **Թեմա 5՝** Քանակական և դասական թվական: Քանակական թվականի գործածությունը: **Թեմա 6՝** Անձնական անշեշտ դերանուններ, դրանց գործածությունը որպես ենթակա, ուղիղ և անուղղակի խնդիր: Անձնական շեշտված դերանուններ:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

0304/B05. «ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵՁՈՒ» -2(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ընդհանուր մասնագիտական բառապաշարին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա համակարգել նախորդ փուլում յուրացրած քերականական նյութը՝ հիմնվելով հաղորդակցական սկզբունքի վրա,
2. կունենա անգլերեն բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններ,
3. կկարողանա ընկալել ունկնդրված /կարդացած նյութի հիմնական բովանդակությունը, տարանջատել հիմնական տեղեկատվությունը երկրորդականից/,
4. կտիրապետի տվյալ մասնագիտության տերմինաբանական համակարգին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ուղղախոսություն, ուղղագրություն. անգլերենի արտասանական առանձնահատկությունները, տարբեր տիպի նախադասությունների հնչերանգն ու խոսքի առոգանությունը, ուղղագրական հիմնական կանոնները: **Թեմա 2՝**

Բառապաշար, բառակազմություն. վերարտադրողական և ընկալողական բառապաշարի ընդլայնում: **Թեմա 3**՝ Քերականություն. նախորդ փուլում յուրացրած քերականական նյութի (անվանական և բայական կարգերի) համակարգում հաղորդակցական սկզբունքի հիման վրա: **Թեմա 4**՝ Հանրամշակութային գիտելիքներ անգլախոս երկրների մշակույթի և լեզվակիր ժողովուրդների հասարակական կյանքի մասին: **Թեմա 5**՝ Մասնագիտական լեզվի տերմինաբանական համակարգ:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

0304/B02. «ՖՐԱՆՍԵՆԸ ԼԵԶՈՒ» -2(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է խորացնել և զարգացնել նախորդ փուլում ձեռք բերված գիտելիքները, ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ճիշտ արտասանել ֆրանսերենի հնչյունները, ճիշտ արտասանությամբ ձևակերպել նախադասությունը,
2. կկարողանա լսելով հասկանալ և վերաշարադրել տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և քերականական նյութը (թույլատրվում է 2-3% անձանոթ բառ),
3. կկարողանա զրույց վարել անցած թեմաներով:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գոյական անուն, միայն հոգնակի թվով գործածվող գոյականներ.

Les funeraillles, les entrailles: Բաղադրյալ գոյականների հոգնակի թվի կազմությունը (des cour- fleurs, des casse-croute և այլն): **Թեմա 2**՝ Ածականի իմաստի փոփոխությունը կախված նրա դիրքից՝ un homme grand - un grand homme: Անորոշ դերանվանական ածականներ: **Թեմա 3**՝ Հարաբերական դերանուններ, դրանց ձևերը և գործածությունը նախադասության մեջ՝ qui, que, dont, ou, le quel և այլն (դասակարգում): **Թեմա 4**՝ Պայմանական եղանակ, կազմությունը և գործածու-

թյունը համադաս և ստորադասական նախադասություններում: Ըղձական եղանակ: Սահմանական եղանակը ուրիշի ուղղակի խոսքում:

Ստուգաբքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգաբքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

0304/B09. «ՌՈՒՄԱՅ ԼԵՁՈՒ»-3(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, հանրագումարային քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է՝ զարգացնելով ուսանողի լեզվային հմտությունները, ապահովել նրա տիրապետումը մասնագիտական լեզվին և ազատ օգտվելը մասնագիտական գրականությունից:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ազատ կտիրապետի մասնագիտական լեզվի տերմինաբանական համակարգին,
2. կկարողանա մեկնաբանել և վերարտադրել մասնագիտական տեքստեր,
3. կկարողանա ինքնուրույն կազմել կապակցված տեքստ մասնագիտական թեմայով,
4. կկարողանա կազմել զեկույցներ և ռեֆերատներ մասնագիտական թեմաներով,
5. կկարողանա թարգմանել տարբեր բարդության մասնագիտական տեքստեր:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Դարձվածաբանություն. դարձվածքների ընդհանուր դասակարգում, մասնագիտական թեմաների շուրջ կազմված դարձվածքներ: **Թեմա 2՝** Ոճաբանություն. գիտական ոճի ձևավորումը և նրան բնորոշ շարահյուսական կառույցները, կապակցված գիտական տեքստի կառուցման միջոցները: **Թեմա 3՝** Տերմինաբանություն. գիտական տերմինների ծագումը և կառուցվածքը, միջազգային տերմիններ և դրանց համարժեքները: **Թեմա 4՝** Թարգմանություն. գիտական տեքստի թարգմանության առանձնահատկությունները, տերմինների թարգմանության խնդիրը: **Թեմա 5՝** Շարահյուսություն. բարդ ստորադասական նախադասության տեսակները: **Թեմա 6՝** Գիտական զեկույցների և ռեֆերատների կազմման ընդհանուր սկզբունքները և առանձնահատկությունները:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց. 1-ին և 2-րդ հարցերը՝ 6-ական միավոր, 3-րդ հարցը /մասնագիտական տեքստի թարգմանություն հայերենից ռուսերեն/՝ 8 միավոր:

0304/B06. «ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵՁՈՒ» -3(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, հանրագումարային քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է նոր, առավել հագեցած բառապաշարի և գիտելիքների ներմուծումը, մասնագիտական բառապաշարի խորացված ուսումնասիրությունը և մասնագիտական գրականությունից օգտվելու հմտությունների զարգացումը՝ զուգահեռաբար խորացնելով ուսանողների լեզվական հմտությունները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

5. կկարողանա հասկանալ և ամբողջապես ըմբռնել լսված նյութի հիմնական բովանդակությունը,
6. կտիրապետի անգլերեն բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններին,
7. կկարողանա թարգմանել մասնագիտական տեքստը հայերենից անգլերեն և հակառակը,
8. կկարողանա ինքնուրույն կազմել կապակցված տեքստ մասնագիտական թեմայով:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բառապաշար (ռեցեպտիվ և պրոդուկտիվ)՝ հոմանիշներ, հականիշներ, նոր բառակապակցություններ: **Թեմա 2՝** Քերականություն. բայի անդեմ ձևեր, մոդալ բայերի երանգավորված իմաստները և դրանց կիրառումը բանավոր և գրավոր խոսքում, բայի կրավորական սեռը: **Թեմա 3՝** Գործարար նամակագրություն՝ համառոտագրություն, ինքնակենսագրություն (CV), դիմում: **Թեմա 4՝** Առաջարկվող թեմաներ՝ «Սերունդների հակասություն», «Հոգևոր և մշակութային արժեքներ», «21-րդ դար՝ նոր մարտահրավերներ», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և նրանց դերը մեր կյանքում», «Հայրենիք և հայրենասիրություն» և այլն:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ համապատասխանաբար 7, 6 և 7 միավոր:

0304/B03. «ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵՉՈՒ» -3(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, հանրագումարային քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է հանրագումարի բերել նախորդ մակարդակներում ստացված գիտելիքները՝ դրանք ուղղորդելով դեպի համապատասխան մասնագիտական ոլորտները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

4. կիմանա իր մասնագիտական հիմնական տերմինների նշանակությունը, ներառյալ երկրորդ կիսամյակում սովորած 300 միավոր տերմինալոգիան,
5. կկարողանա առանց բառարանի կարդալ միջին բարդության մասնագիտական տեքստեր,
6. կկարողանա առանց բառարանի կարդալ և վերաշարադրել միջին բարդության հասարակական-քաղաքական տեքստեր:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գոյականների իգական սեռի կազմության տարբեր միջոցների դասակարգում, քերականորեն (հոդի և այլ մասնիկների օգնությամբ), ձևաբանորեն (բառի ձևի փոփոխություն, ածանցներ), բառային (բառի տարբեր ձևեր): Երկու սեռ ունեցող գոյականներ: **Թեմա2՝** Եղանակավորման քերականական արտահայտությունը, ֆրանսերեն լեզվի խոնարհման բնութագիրը՝ indicatif (սահմանական եղանակ), conditionnel (պայմանական եղանակ), subjonctif (ըղձական եղանակ), imperatif (հրամայական եղանակ): **Թեմա 3՝** Նախդիրների համակարգային դասակարգում, տարբեր հարաբերություններ արտահայտող նախդիրներ:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց: Առաջին առաջադրանքն է՝ կարդալ, թարգմանել անծանոթ տեքստը մասնագիտական թեմայով, երկրորդը՝ մեկնաբանել ծանոթ մասնագիտական տեքստը, երրորդը՝ խոսել մասնագիտական ոլորտի վերաբերյալ:

0301/B01. «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ» -1(2 կրեդիտ)

Շաբաթական` 2 ժամ (24 դասախոսություն, 8 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը` 1-ին, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել Հայոց պատմությունը հնագույն ժամանակներից մինչև Կիլիկիայի հայկական թագավորության անկումն ընկած ժամանակահատվածը, ծանոթացնել հայոց հնագույն, հին ու միջին դարերի պատմության առանցքային հիմնախնդիրներին, հայոց պետականության ժամանակավիտերին և հայ մշակույթի հիմնահարցերին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը,

1. կիմանա Հայոց պատմության առանցքային հիմնախնդիրների մասին, հայոց պետականության ժամանակավիտերի առանձնահատկությունների մասին, ազատագրական պայքարի հերոսական էջերի մասին,
2. կկարողանա գնահատել Հայոց պատմության դերը համաշխարհային պատմության հոլովությունում, ինքնություն մտածել և անհրաժեշտ դատողություններ անել Հայոց պատմության տարբեր հարցերի վերաբերյալ, անաչառ գնահատական տալ Հայոց պատմության տարբեր հիմնահարցերին և ազգային-պետական գործիչների գործունեությանը,
3. կկարողանա ստեղծագործաբար կիրառել և զարգացնել ունեցած գիտելիքները, վերլուծել փաստերը և հետևություններ անել, զեկուցումներ պատրաստել ու ու գիտական բանավեճեր վարել:

Բովանդակությունը.

Թեմա 1`** Հայոց պատմության նշված ժամանակահատվածի սկզբնաղբյուրները և ուսումնասիրությունները: **Թեմա 2` Հայկական լեռնաշխարհը` հայերի բնօրրան: Հայ ժողովրդի ծագման հիմնահարցը: **Թեմա 3`** Վանի թագավորությունը: **Թեմա 4`** Երվանդունիների թագավորությունը Ք.ա. 6-3 դդ.: Արտաշեսյանների Հայաստանը Ք.ա. 2-1 դդ.: **Թեմա 5`** Մեծ Հայքի Արշակունիների թագավորությունը 1-5-րդ դարի սկիզբ: **Թեմա 6`** Քրիստոնեության ընդունումը: Հայաստանը 5-7 դդ.: **Թեմա 7`** Արաբական

նվաճումները և Հայաստանը: Բազրատունյաց Հայաստանը 9-11-րդ դդ.: **Թեմա 8՝** Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը օտար նվաճողների դեմ 11-12-րդ դարերում: **Թեմա 9՝** Զաքարյանների իշխանությունը: **Թեմա 10՝** Կիլիկիան Հայաստանը 11-14-րդ դդ.: Հայկական մշակույթը հին և միջին դարերում:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

0301/B02. «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ» -2(2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (24 դասախոսություն, 8 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, հանրագումարային քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել Հայոց նոր և նորագույն շրջանի պատմության առանցքային հիմնահարցերը, պարզաբանել հայ նոր և նորագույն շրջանի ազգային ազատագրական պայքարի, Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության, հայոց նորագույն պետականության, Սփյուռքի, նոր և նորագույն շրջանի հայ մշակույթի հիմնախնդիրները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա Հայոց նոր և նորագույն շրջանի ազատագրական պայքարի կարևորագույն դրվագների վերաբերյալ, Հայկական հարցի, հայոց ցեղասպանության և Սփյուռքի առանցքային հիմնախնդիրների վերաբերյալ, 20-րդ դարում Հայոց նորագույն պետականության ձևավորման գործընթացների վերաբերյալ, նոր և նորագույն շրջանի հայ մշակույթի զարգացման օրինաչափությունների և առանձնահատկությունների մասին,
2. կկարողանա ավելի իրատեսորեն գնահատել նոր և նորագույն շրջանի պատմության առանցքային իրադարձությունները, ճիշտ գնահատել տարբեր ազգային-քաղաքական, հասարակական ուժերի և պատմական նշանավոր գործիչների իրական դերակատարությունը Հայոց նոր և նորագույն շրջանի պատմության մեջ, ընկալել նոր և նորագույն շրջանի մշակույթի անխզելի կապը հայոց պատմության նույն շրջանի առանցքային իրադարձությունների հետ,

3. կկարողանա ստեղծագործաբար կիրառել ու զարգացնել ունեցած գիտելիքները, վերլուծել փաստերը և հետևություններ անել, զեկուցումներ պատրաստել ու գիտական բանավեճեր վարել:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայկական հարցի ծագումը, բովանդակությունը, փուլերը: **Թեմա 2՝** Հայ ազատագրական շարժումները XV դարի կեսից մինչև XIX դարի սկիզբը: **Թեմա 3՝** Ռուսական տիրապետության հաստատումը Արևելյան Հայաստանում: **Թեմա 4՝** Հայկական հարցի միջազգայնացումը: **Թեմա 5՝** Հայ ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները XIX դ. 60-80-ական թվականներին: **Թեմա 6՝** Հայ ազգային կուսակցությունների հիմնադրումը: **Թեմա 7՝** Հայ ազգային-ազատագրական պայքարը XIX դարի վերջերին – XX դարի սկզբներին: **Թեմա 8՝** Հայ ժողովուրդը առաջին աշխարհամարտի տարիներին. Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը: **Թեմա 9՝** 1917 թ. Փետրվարյան և հոկտեմբերյան հեղափոխությունները և Հայաստանը: **Թեմա 10՝** Հայաստանի Առաջին Հանրապետությունը: **Թեմա 11՝** Հայաստանի Խորհրդային հանրապետությունը (1920-1991 թթ.): **Թեմա 12՝** Արցախյան շարժումը: Հայաստանի երրորդ Հանրապետությունը (1991-2012 թթ.): **Թեմա 13՝** Հայկական մշակույթը նոր և նորագույն շրջանում: Հայկական Մփյուռքը:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ 7, 7, 6 միավոր արժեքով:

0301/B05. «ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (48 ժամ դասախոսություն, 16 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, հանրագումարային քննություն
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին ներկայացնել փիլիսոփայության հիմնարար հարցադրումները, նրանց տեսական և գործնական նշանակությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհիմանա փիլիսոփայության գիտական - մեթոդաբանական,

աշխարհայացքային և արժեքաբանական գործառույթների, Ճշմարտության և մոլորության, գիտելիքի և հավատի, ռացիոնալի և իռացիոնալի սահմանազատման սկզբունքների, քաղաքակրթական զարգացումների օրինաչափությունների ու միտումների մասին,

2. կկարողանա պարզաբանել բնական և հասարակական գիտությունների գործառույթները, տարբերակել քաղաքակրթական հայեցակարգերն ու դրանց հարացույցերը, գնահատել փակ և բաց համակարգերի զարգացման առանձնահատկությունները, վերլուծել հասարակության բնութենական և սոցիոմշակութային հիմունքները,
3. կկարողանա կատարել սոցիալ-փիլիսոփայական ընդհանրացումներ և կիրառել համապատասխան մեթոդներ իմաստավորել աշխարհի գիտական պատկերը և մարդու կոչումն ու կյանքի իմաստը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Փիլիսոփայությունը մարդու և աշխարհի միջև մշակութային միջնորդ: Փիլիսոփայական մշակույթի առանձնահատկությունները: **Թեմա 2՝** Պատմափիլիսոփայական ակնարկ: **Թեմա 3՝** Կեցության փիլիսոփայական ըմբռնումը: Մարդկային կեցության առանձնահատկությունները: **Թեմա 4՝** Հոգեկանի ծագման վարկածները: **Թեմա 5՝** Իմացության էությունը և կառուցվածքը: Ճշմարտություն, մոլորություն, հավատ: **Թեմա 6՝** Գիտական ճանաչողության մեթոդները: Գիտություն և բարոյականություն: **Թեմա 7՝** Մարդու և հասարակության ծագման վարկածները: **Թեմա 8՝** Հասարակությունը որպես ինքնապարտադրող համակարգ: **Թեմա 9՝** Պատմության փիլիսոփայական ըմբռնումը : **Թեմա 10՝** Մշակույթ և քաղաքակրթություն: **Թեմա 11՝** Հասարակական կյանքի ոլորտները: **Թեմա 12՝** Սոցիալական առաջադիմությունը և մարդկության ապագան:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 4 հարց:

0201/B01. «ԷԹԵԿԱ ԵՎ ՎԱՐԿԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՍՈՒՆՔՆԵՐ»

(0 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (32 ժամ դասախոսություն)

Կիսամյակները՝ 2-րդ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին համակարգված գիտելիքներ հաղորդել էթիկայի տեսության վերաբերյալ, առնչել բարոյագիտական ուսմունքների հակիրճ պատմությանն ու ներկա խնդիրներին, հաղորդակից դարձնել բարեկրթության նորմերին, հաղորդակցության ու հյուրասիրության կանոններին, խոսքի մշակույթի հիմունքներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա համապատասխան գիտելիքներ հայոց դիմելաձևերի և միջհաղորդակցության նորմերի վերաբերյալ,
2. ունակ կլինի հասու դարձնել հյուրընկալության և հասարակական վայրերում պահվածքի էթիկետին,
3. կկարողանա գործնական խորհուրդներով օգնել վարքի կանոնների հաստատմանը,
4. կկարողանա նպաստել նորաձևության այբուբենի յուրացմանն ու պատշաճ հագնելաձևին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Էթիկայի առարկան եւ խնդիրները: **Թեմա 2՝** Հին Արեւելքի եւ անտիկ աշխարհի բարոյագիտական ուսմունքների համառոտ պատմություն: **Թեմա 3՝** Միջնադարի եւ նոր ժամանակների բարոյագիտական ուսմունքների համառոտ պատմություն: **Թեմա 4՝** Բարոյագիտության կատեգորիաներն ու հիմնական հասկացությունները: **Թեմա 5՝** Վարվեցողության կուլտուրան և մարդու անհատականությունը: **Թեմա 6՝** Հայոց գաղափարաբանության բարոյական հիմքերը: **Թեմա 7՝** Հաղորդակցման կանոններ: Խոսքի կուլտուրա: **Թեմա 8՝** Դիվանագիտական էթիկետ: **Թեմա 9՝** Վարքի կանոններ: **Թեմա 10՝** Հյուրասիրության եւ հյուրընկալության կանոններ: **Թեմա 11՝** Մոդան որպես երևույթ. դրա էությունն ու զարգացման միտումները:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

5.2. Կամրնտրական դասընթացներ

0201/B01. «ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (32 ժամ դասախոսություն)

Կիսամյակները՝ 4-րդ, ստուգարք

Նպատակը.

Ուսանողների մոտ ձևավորել տնտեսագիտության մեթոդաբանության, շուկայական տնտեսության բովանդակության, սեփականատիրական հարաբերությունների, միկրոտնտեսական և մակրոտնտեսական զարգացման օրինաչափությունների, պետական բյուջեի ու պետության տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացման մասին պատկերացումներ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կյուրացնի տնտեսագիտության հիմունքները,
2. պատկերացում կունենա շուկայական տնտեսության բնույթի, կատեգորիաների, զարգացման հիմնական օրինաչափությունների մասին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Պահանջարկի և առաջարկի առաձգականությունը: **Թեմա 2՝** Սպառողի վարքի տեսության հիմունքները: **Թեմա 3՝** Գործարար ձեռնարկությունները և արտադրողի վարքը: **Թեմա 4՝** Արտադրության ծախքերի տեսություն: **Թեմա 5՝** Մրցակցային և ոչ մրցակցային շուկաները: **Թեմա 6՝** Մակրոտնտեսական ցուցանիշները: **Թեմա 7՝** Ազգային հաշիվների համակարգը: **Թեմա 8՝** Մակրոտնտեսական անկայունություն, տնտեսական ցիկլեր, գործազրկություն և ինֆլյացիա: Տնտեսական աճ: **Թեմա 9՝** Ամբողջական պահանջարկ և ամբողջական առաջարկ: **Թեմա 10՝** Վճարային հաշվեկշիռ և արժույթային կուրսեր:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

0301/B03. «ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (32 ժամ դասախոսություն)

Կիսամյակները՝ 4-րդ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքներին, հիմնական կատեգորիաների ու քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթին, ձևավորել ուսանողների մոտ քաղաքական իրականության վերլուծության պրակտիկ հմտություններ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա համապատասխան գիտելիքներ քաղաքագիտության տեսական և կիրառական նշանակության հիմնահարցերի մասին,
2. պատկերացում կունենա քաղաքագիտության առարկայական տիրույթի ու մեթոդաբանության մասին,
3. կունենա քաղաքագիտական վերլուծություններ կատարելու բավարարունակություններ,
4. կկարողանա կողմնորոշվել գործնական քաղաքականության հիմնահարցերի մեկնաբանման հարցերում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Քաղաքագիտության ձևավորումը որպես գիտություն: **Թեմա 2՝** Քաղաքագիտության օբյեկտը և առարկան: **Թեմա 3՝** Քաղաքականության ծագումը և էությունը: **Թեմա 4՝** Քաղաքական իշխանության էությունը, կառուցվածքը և լեգիտիմությունը: **Թեմա 5՝** Հասարակության քաղաքական համակարգը: **Թեմա 6՝** Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: **Թեմա 7՝** Քաղաքական կուսակցությունները և կուսակցական համակարգեր: **Թեմա 8՝** Քաղաքական գործընթացներ: **Թեմա 9՝** Ընտրություններ և ընտրական համակարգեր: **Թեմա 10՝** Քաղաքական գաղափարախոսություններ: **Թեմա 11՝** Քաղաքական էլիտա և լիդերություն:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

0301/B04. «ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (32 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 4-րդ, ստուգարք

Նպատակը.

Սովորեցնել հասարակական կյանքի տարբեր ոլորտների օրենսդրական կարգավորման հիմունքները: Նպատակներից է նաև ստացած իրավական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների մշակումը, ինչպես նաև իրավական աշխարհայացքի ու մշակույթի ձևավորումը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա պետության և իրավունքի մասին հիմնական սկզբունքները, հայեցակարգերը,
2. կիմանա օրենսդրության առանձին ճյուղերի իրավական կարգավորման հիմունքները,
3. կիմանա կարևոր իրավական հասկացությունները, եզրույթները,
4. կունենա գիտելիքները գործնականում կիրառելու ունակություններ և հմտություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հասարակություն և պետություն: **Թեմա 2՝** Իրավունք: Իրավական կարգավորման կառուցակարգը և իրավունքի կենսագործումը: **Թեմա 3՝** Իրավունքի ձևերը: Իրավունքի համակարգը: **Թեմա 4՝** Օրինականություն, իրավաչափ վարքագիծ, իրավախախտում: **Թեմա 5՝** Կոռուպցիայի դեմ պայքարի իրավական հիմնահարցերը: **Թեմա 6՝** Սահմանադրական իրավունք: **Թեմա 7՝** Դատական իշխանություն և դատական համակարգ: **Թեմա 8՝** Քաղաքացիական իրավունք: **Թեմա 10՝** Աշխատանքային իրավունք: **Թեմա 11՝** Ընտանեկան իրավունք: **Թեմա 12՝** Էկոլոգիական իրավունք: **Թեմա 13՝** Քրեական իրավունք: **Թեմա 14՝** Դատավարական իրավունք: Միջազգային իրավունք:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց (նախապես տրամարդված հարցաշարից), որոնցից առնվազն երկուսին դրական պատասխանող ուսանողը ստանում է «ստուգված»:

0202/B01. «ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (32 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 4-րդ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ կայուն գիտելիքներ ձևավորել մշակութաբանության առարկայի և «մշակույթ» հասկացության վերաբերյալ, արմատավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների և մեխանիզմների մասին: Հատուկ ուշադրություն դարձնել համաշխարհային և հայ մշակույթների ընդհանուր բնութագրերի և ներկա գործընթացների վրա:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. համապարփակ գիտելիքներ կունենա գիտության մեջ «մշակույթ» հասկացության ամենատարածված սահմանումների և տեսությունների մասին,
2. ծանոթ կլինի մշակույթի կառուցվածքին, բաղադրիչներին, տիպաբանությանը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափություններին,
3. ընդհանուր գիտելիքներ կունենա համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումների օրինաչափությունների վերաբերյալ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Դասընթացի ուսումնասիրման օբյեկտը, առարկան և խնդիրները: «Մշակույթ» հասկացության սահմանումներն ու մշակույթի էության, ծագման և զարգացման վերաբերյալ տեսությունները: **Թեմա 2՝** Մշակույթի կառուցվածքը, բաղադրիչները, գործառույթները և մեխանիզմները: **Թեմա 3՝** Մշակութային գործընթացներ: Մշակույթը «անհատ», «բնություն», «հասարակություն», «էթնոս», «քաղաքակրթություն» կատեգորիաների համատեքստում: **Թեմա 4՝** Համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումները. մոտեցումներ, հարցադրումներ, օրինաչափություններ: **Թեմա 5՝** Ժամանակակից մշակութային գործընթացները և գլոբալացման խնդիրը:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

0301/B06. «ԿՐՈՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (32 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 4-րդ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների, դրանց դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկությունների, Հայ Առաքելական եկեղեցու պատմության հիմնահարցերի, արդի կրոնական ներփակ հոսանքների ու դենոմինացիաների վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա՝ ինչ է կրոնը, ինչպիսի կրոններ կան աշխարհում, ինչ դավանաբանական, պաշտամունքային, տոնաձիսական առանձնահատկություններ ունեն դրանք, ինչպես նաև Հայ Առաքելական եկեղեցու պատմությունը, դավանաբանական առանձնահատկությունները և տոնաձիսական համակարգը,
2. կհասկանա ժամանակակից կրոնների և կրոնական հոսանքների ու ուղղությունների զարգացման տրամաբանությունը, առանձնահատկություններն ու միտումները,
3. կկարողանա կատարել տարբեր կրոնների ու կրոնական ուղղությունների տարբերակում և քննական արժևորում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ «Կրոնների պատմություն» առարկան, «Կրոն» հասկացությունը:

Թեմա 2՝ Կրոնի պատմական ձևերը, ազգային և համաշխարհային կրոններ:

Թեմա 3՝ Ժամանակակից համաշխարհային կրոններ. բուդդայականության ծագումը, դավանաբանական և պաշտամունքային առանձնահատկությունները:

Թեմա 4՝ Քրիստոնեության առաջացումը, դավանաբանության և պաշտամունքի ձևավորումը:

Թեմա 5՝ Քրիստոնեության հիմնական ուղղությունները, ժամանակակից քրիստոնեությունը:

Թեմա 6՝ Իսլամ. ծագումը, զարգացումը, դավանաբանական և պաշտամունքային առանձնահատկությունները, հիմնական ուղղությունները:

Թեմա 7՝ Ժամանակակից կրոնական դենոմինացիաները և ներփակ հոսանքները:

Թեմա 8՝ Քրիստոնեությունը Հայաստանում:

Թեմա 9՝ Հայ Առաքելական եկեղեցու պատմության հիմնախնդիրները:

Թեմա 10՝ Հայոց եկեղեցու դավանաբանական և ծիսապաշտամունքային առանձնահատկությունները:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 3 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

6. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ
6.1. Պարտադիր դասընթացներ

0001/B05. «**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել արտակարգ իրավիճակներում (երկրաշարժ, ջրհեղեղ, հրդեհներ, արտադրական և տրանսպորտային վթարներ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահանում և այլն) և պատերազմական պայմաններում պաշտպանվելու ձևերին և մեթոդներին, նաև փրկարարական աշխատանքների ծավալներին, բովանդակությանը և կատարմանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ստեղծված արտակարգ իրավիճակներում և պատերազմական պայմաններում ժամանակին և ճիշտ պաշտպանվելու ձևերն ու մեթոդները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ ԱԻ-ի նախարարության կառուցվածքը և խնդիրները: **Թեմա 2՝** ԱԻ-ները, նրանց բնութագրերը և կանխարգելման միջոցառումները: **Թեմա 3՝** Բնակչության գործողությունները ահաբեկությունների և նրանց սպառնալիքի ժամանակ: **Թեմա 4՝** Հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցների բնութագրերը, նրանց վարակման օջախները և գնահատման մեթոդները: **Թեմա 5՝** Բնակչության պաշտպանության կազմակերպումը ԱԻ-ների և պատերազմի ժամանակ: **Թեմա 6՝** ԱԻ-ի և պատերազմի ժամանակ բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնական ուղղությունները: **Թեմա 7՝** Փրկարարական աշխատանքների կազմակերպումը ԱԻ-ի և պատերազմի ժամանակ, տեղեկատվության կազմակերպումը:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքը ընթանում է բանավոր՝ հարցատոմսերով: Հարցատոմսը ներառում է երեք հարց. երկուսը՝ տեսական, մեկը՝ գործնական:

0001/B06. «ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (6 ժամ դասախոսություն, 18 ժամ գործնական պարապ-մունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացների նպատակն է ուսանողներին սովորեցնել էքստրեմալ պայմաններում (երկրաշարժ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահարում, ոսկորների կոտրվածքներ, արյունահոսություն, շոկային իրադրություն, վնասվածքներ) մինչբժշկական օգնության ցուցաբերում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա էքստրեմալ պայմաններում (երկրաշարժ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահանում, ոսկորների կոտրվածքներ, արյունահոսություն, շոկային իրադրություն, վնասվածքներ) ցուցաբերել առաջին և մինչբժշկական օգնություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Առաջին բուժօգնությունն ու մինչբժշկական օգնությունն արտակարգ իրավիճակներում: **Թեմա 2՝** Ախտահարվածների ու հիվանդների բժշկական տեսակավորումը արտակարգ իրավիճակների պայմաններում: **Թեմա 3՝** Սուր հիվանդություններ և թունավորումներ: **Թեմա 4՝** Հակահամաճարակային միջոցառումներն արտակարգ իրավիճակներում: **Թեմա 5՝** Վնասվածքներ և սուր վիրաբուժական հիվանդություններ:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքը ընթանում է բանավոր՝ հարցատոմսերով: Հարցատոմսը ներառում է երեք հարց. երկուսը՝ տեսական, մեկը՝ գործնական:

0103/B01. «ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

(2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (32 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 2-րդ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել պատկերացում էկոլոգիա գիտության տեսական հիմնահարցերի, բնապահպանության առկա

խնդիրների և հիմնահարցերի լուծման առաջարկվող եղանակների և կիրառվող մեթոդների ու մոդելների մասին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա էկոլոգիա գիտության հիմնական տեսական մոտեցումները, օրենքները, հարցերը.
2. կկարողանա օգտագործել այդ գիտելիքները բնապահպանական հարցերի լուծման ոլորտում.
3. կկարողանա կատարել անհրաժեշտ վերլուծություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Էկոլոգիան և նրա կայացման պատմությունը: **Թեմա 2՝** Օրգանիզմի և միջավայրի միջև փոխազդեցությունները: **Թեմա 3՝** Պոպուլյացիաների էկոլոգիա: **Թեմա 4՝** Համակեցություններ: **Թեմա 5՝** Նյութերի երկրաբանական և կենսաբանական շրջապտույտը: **Թեմա 6՝** Կենսոլորտ: Կենսոլորտի էվոլյուցիայի հիմնական ուղղությունները: **Թեմա 7՝** Անթրոպոգեն էկոհամակարգեր: Անթրոպոգեն ազդեցությունները մթնոլորտի, կլիմայի, ջրոլորտի և քարոլորտի վրա: **Թեմա 8՝** Բնության պահպանության և ռացիոնալ բնօգտագործման հիմնական սկզբունքները: **Թեմա 9՝** Էկոլոգիա և մարդու առողջությունը: **Թեմա 10՝** Էկոլոգիական իրավունքի հիմունքները: **Թեմա 11՝** Միջազգային համագործակցությունը էկոլոգիայի շրջանակներում: **Թեմա 12՝** Բնության պահպանություն և գլոբալիզացիա:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքին տրվում է առավելագույնը 4 հարց, նախապես տրված հարցաշարից:

0101/B29. «ՀԱՄԱԿԱՐԳՉԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (8 ժամ դասախոսություն, 24 ժամ լաբորատոր պարապմունքներ)

Կիսամյակը՝ 1-ին, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ համակարգչների, դրանց տեխնիկական, ծրագրային և ինֆորմացիոն ապահովման մասին, ինչպես նաև ստեղծել անհրաժեշտ հիմքեր համակարգչի օգնու-

թյամբ մասնագիտության մեջ գործնական հետազոտություններ ու վերլուծություններ կատարելու համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհասկանա համակարգչի կառուցվածքի և աշխատանքի հիմնական սկզբունքները.
2. կիմանա, թե ինչ է օպերացիոն համակարգը, բազմախնդրայնությունը, որոնք են տեքստային և գրաֆիկական խմբագիրների աշխատանքների սկզբունքների տարբերությունը, Windows օպերացիոն համակարգի և Word, Excel, PowerPoint ծրագրերի հետ աշխատելու հիմնական սկզբունքները.
3. կկարողանա ինքնուրույն կատարել իր թղթավարությունը (կուրսային, ավարտական աշխատանքներ, հաշվարկների կատարում, զեկուցումների համար սլայդների պատրաստում և այլն):

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները: Օպերացիոն համակարգի հասկացություն և բազմախնդրայնության գաղափար: Windows օպերացիոն համակարգի գրաֆիկական ինտերֆեյսի հետ աշխատելու հիմնական սկզբունքները: ***Թեմա 2՝*** Microsoft Word փաստաթղթի ստեղծում և ձևավորում: ***Թեմա 3՝*** Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակներ: ***Թեմա 4՝*** Microsoft PowerPoint ներկայացման ստեղծում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Դասընթացն ավարտվում է ստուգարքով: Ուսանողին տրվում են հանձնարարություններ, որոնք հիմնված են դասընթացի ընթացքում անցած թեմաների վրա:

7. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

7.1. «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտություն

0101/B01. «ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՆԱԼԻԶ»-1 (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (18 ժամ դասախոսություն, 18 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 1-ին, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել սահմանների տեսությանը, մեկ փոփոխականի ֆունկցիայի անընդհատության և ածանցյալի գաղափարներին ու դրանց կիրառություններին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մեկ փոփոխականի ֆունկցիաների հաշվի հիմնական թեորեմները,
2. կհասկանա այդ թեորեմների կապը, ֆունկցիայի անընդհատության և ածանցյալի գաղափարների էությունները,
3. կկարողանա ստացած գիտելիքները կիրառել կոնկրետ բնույթ կրող հարցերի վերլուծության, խնդիրների լուծման համար:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Իրական թվեր, թվային բազմությունների ճշգրիտ եզրեր: ***Թեմա 2՝*** Թվային հաջորդականություններ, սահմաններ: ***Թեմա 3՝*** Ֆունկցիայի սահման, թվաբանական գործողություններ սահման ունեցող ֆունկցիաների հետ: ***Թեմա 4՝*** Անընդհատություն, անընդհատ ֆունկցիաների հատկությունները: ***Թեմա 5՝*** Ֆունկցիայի ածանցյալ, դիֆերենցելի ֆունկցիաների հատկությունները: ***Թեմա 6՝*** Ֆունկցիաների հետազոտում և գրաֆիկների կառուցում: Թեյլորի բանաձևը, կիրառություններ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց յուրաքանչյուրը՝ 2,5 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0101/B02. «ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՆԱԼԻԶ-2» (5կրեդիտ)

Շաբաթական՝ 7,5 ժամ (18 ժամ դասախոսություն, 12 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ հենքային մաթեմատիկական առարկայի երկրորդ բաժնեմասից, որը ներառում է անորոշ և որոշյալ ինտեգրալները, երկրաչափական կիրառությունները, թվային և ֆունկցիոնալ շարքերը

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա անորոշ և որոշյալ ինտեգրալների հատկությունները,
2. կկարողանա հետազոտել և հաշվել անորոշ և որոշյալ ինտեգրալները, հետազոտել ֆունկցիոնալ շարքերը և հաշվել դրանց գումարները,
3. կկարողանա հաշվել կորի երկարությունը, հարթ պատկերի մակերեսը և տարածական մարմնի ծավալը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Անորոշ ինտեգրալ, հաշվման հիմնական բանաձևերը և եղանակները: **Թեմա 2՝** Որոշյալ ինտեգրալ, հաշվման հիմնական եղանակները, ինտեգրելի ֆունկցիաների դասեր: **Թեմա 3՝** Անիսկական ինտեգրալ, առաջին և երկրորդ սեռի ինտեգրալներ: **Թեմա 4՝** Կորի երկարություն, պատկերի մակերես, մարմնի ծավալ: **Թեմա 5՝** Թվային շարքեր, զուգամիտության հայտանիշներ: **Թեմա 6՝** Ֆունկցիոնալ շարքեր և դրանց հատկությունները, հավասարաչափ զուգամիտություն: **Թեմա 7՝** Աստիճանային և Ֆուրիեի շարքեր:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց յուրաքանչյուրը՝ 2,5 միավոր:

Միավորների քայլը 0.5 է:

0101/B03. «ԴԻՄԿԴԵՏ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ»-1 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (12 ժամ դասախոսություն, 12 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել բազմությունների տեսության և բինար հարաբերությունների հիմնական գաղափարներին և հատկություններին, ինչպես նաև կոմբինատորիկայի հաշվման հիմնական մեթոդներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա արտածել բազմությունների և բինար հարաբերությունների հատկությունները,
2. կտիրապետի կոմբինատոր խնդիրների լուծման մեթոդներին,
3. կկարողանա կիրառել անդրադարձ առնչությունները, Նյուտոնի երկանդամը,

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բինար հարաբերություններ և գործողություններ նրանց հետ:

Թեմա 2՝ Հարաբերությունների որոշ դասեր՝ էքվիվալենտության և կարգի հարաբերություններ: ***Թեմա 3՝*** Տարրական բանաձևեր: ***Թեմա 4՝*** Նյուտոնի երկանդամ և անդրադարձ առնչություններ: ***Թեմա 5՝*** Կցման և արտաքսման սկզբունքը:

Ստուգումների անցկացման ձևեր և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք՝ գրավոր: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Տրվում է առավելագույնը 4 հարց: Միավորների քայլը 0.5 է:

0101/B04. «ԴԻՄԿՐԵՏ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ»-2 (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (18 ժամ դասախոսություն, 18 ժամ գործնական պարապ-մունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ոչ-չափանի միավոր խորանարդի հիմնական հատկություններին, ուսումնասիրել բուլյան ֆունկցիաների հատկությունները և փակ դասերը, տալ լրիվության անհրաժեշտ և բավարար պայմանը, ծանոթացնել ֆունկցիոնալ տարրերիսխեմաներին, բուլյան ֆունկցիաների

բարդությանը և Շենոնի ֆունկցիային, կոդավորման տեսության հիմնական խնդիրներին և մեթոդներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա բուլյան ֆունկցիաների հատկությունները,
2. կիմանա կոդավորման տեսության հիմնական խնդիրները և մեթոդները,
3. կկարողանա ստուգել բուլյան ֆունկցիաների համակարգի լրիվությունը,
4. կկարողանա բուլյան ֆունկցիայի համար կառուցել լավագույնին մոտ ֆունկցիոնալ տարրերի սխեմա,
5. կկարողանա կառուցել միարժեք զատվող կոդավորման սխեմաներ, օպտիմալ կամ դրանց մոտ կոդեր և 1-սխալ ուղղող կոդեր,

Բովանդակությունը.

Թեմա 1`** Գրաֆների տեսություն: Գրաֆի սահմանումը: **Թեմա 2` Ծառ: Էյլերյան և Համիլտոնյան գրաֆ: Հարթ գրաֆ: Գրաֆի ներկման խնդիրներ: **Թեմա 3`** ո-չափանի միավոր խորանարդ: Բուլյան ֆունկցիա, բանաձև: **Թեմա 4`** Բուլյան ֆունկցիաների որոշ ներկայացումներ: **Թեմա 5`** Հիմնական փակ դասեր, լրիվության թեորեմը: ֆունկցիոնալ տարրերից սխեմաներ, Շենոնի թեորեմը: **Թեմա 6`** Կոդավորման տեսություն, այբբենական կոդավորում: **Թեմա 7`** Մակմիլանի անհավասարությունը: Հոֆմանի կոդ, Հեմմինգի կոդ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը` 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է` 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց յուրաքանչյուրը` 2,5 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0101/B05. «ԷՀՄ ԵՎ ԾՐԱԳՐԱՎՈՐՈՒՄ-1» (3կրեդիտ)

Շաբաթական` 4,5 ժամ (6 ժամ դասախոսություն, 12 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսուցանել ծրագրավորման հիմունքները ծրագրավորման C++ լեզվի հիման վրա:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիսմանա տարրական ալգորիթմները, ծրագրավորման հիմունքները
2. կկարողանա կիրառել կառուցվածքային մոտեցումը խնդիրներ լուծելիս՝ օգտագործելով ֆունկցիաներ,
3. կկարողանա կազմել ծրագրեր C++ լեզվով՝ ըստ մշակված ալգորիթմի,
4. կկարողանա վերլուծել առկա խնդիրները և առաջարկել դրանց լուծման եղանակները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Թվերի ներկայացում (կողավորում) ԷՀՄ-ի օպերատիվ հիշողությունում, ալգորիթմ: **Թեմա 2՝** Լեզվի այբուբեն, շարահյուսական կանոններ և իմաստաբանական մեկնաբանումը: **Թեմա 3՝** Լեզվի լեքսեմներ, տիպ, փոփոխական, արտահայտություն: **Թեմա 4՝** Լեզվի օպերատորներ, ֆունկցիա, զանգված:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց յուրաքանչյուրը՝ 2,5 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0101/B06. «ԷՀՄ ԵՎ ԾՐԱԳՐԱՎՈՐՈՒՄ-2» (6կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (6 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսուցանել օբյեկտային կողմնորոշմամբ ծրագրավորման հիմունքները C++ ծրագրավորման լեզվի հիման վրա:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա օբյեկտային կոդմնորոշմամբ ծրագրավորման հիմնական հասկացությունները ու սկզբունքները,
2. կկարողանա նկարագրել և օգտագործել դասը,
3. կկարողանա ստեղծել նոր դաս՝ գոյություն ունեցող դասերից,
4. կկարողանա C++ լեզվով կազմել ծրագրեր՝ օգտվելով օբյեկտային կոդմնորոշմամբ ծրագրավորման տեխնոլոգիայից,

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ցուցիչ, հղում, նրանց կապը զանգվածի հետ, տող: **Թեմա 2՝**Թարգմանիչ, կառուցվածքային տիպ: **Թեմա 3՝**Օբյեկտային կոդմնորոշմամբ ծրագրավորման լեզու և նրա հիմնական հատկությունները, դաս, օբյեկտ: **Թեմա 4՝**Կոնստրուկտոր, դեստրուկտոր, պատճենի կոնստրուկտոր, this-ցուցիչ: **Թեմա 5՝**Գործողությունների վերաբեռնում, friend – ֆունկցիա, static անդամներ: **Թեմա 6՝**Ժառանգում, բազմաձևություն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց յուրաքանչյուրը՝ 2,5 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0101/Յ07. «ՀԱՆՐԱՀԱՇԻՎ ԵՎ ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ» (4կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (12ժամ դասախոսություն, 12ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 1-ին կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսումնասիրել վերլուծական երկրաչափության հիմնական գաղափարները, բազմանդամները, տեղադրությունները, թվային մատրիցների և որոշիչների հիմնական հատկությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա վեկտորների և կոորդինատական համակարգերի մասին,
2. կհասկանա ուղիղների, հարթությունների, ուղղի և հարթության փոխդասավորությունը,
3. կիմանա տեղադրության, թվային մատրիցի գաղափարը,
4. կիմանա որոշիչը, մատրիցի ռանգը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Կոորդինատական համակարգեր: Վեկտորի գաղափարը: Գործողություններ վեկտորների հետ: **Թեմա 2՝** Հանրահաշվական կորեր մակերևույթներ, երկրորդ կարգի կորեր և մակերևույթներ: **Թեմա 3՝** Բազմմանադամներ: Թվային մատրիցներ: Գործողություններ մատրիցների հետ: **Թեմա 4՝** Որոշիչ: Մատրիցի ռանգ: Հակադարձ մատրից:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք՝ գրավոր: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Տրվում է առավելագույնը 4 հարց: Միավորների քայլը 0.5 է:

0101/B08. «ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՆԱԼԻԶ-3» (5կրեդիտ)

Շաբաթական՝ 7,5 ժամ (18 ժամ դասախոսություն, 12 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, եզրափակիչ գնահատման

նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ հենքային մաթեմատիկական առարկայի երրորդ բաժնեմասից, որը ներառում է մի քանի փոփոխականի ֆունկցիաների դիֆերենցիալ հաշիվը, կորագիծ, մակերևույթային, կրկնակի և եռակի ինտեգրալները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մի քանի փոփոխականի ֆունկցիաների սահմանների, անընդհատությանը, դիֆերենցելիության գաղափարները,
2. կկարողանա հետազոտել և հաշվել մի քանի փոփոխականի ֆունկցիաների սահմանները և ածանցյալները,

3. կկարողանա հաշվել կորագիծ, մակերևութային, կրկնակի և եռակի ինտեգրալները,

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մի քանի փոփոխականի ֆունկցիաների սահման, անընդհատություն, դիֆերենցելիություն: **Թեմա 2՝** Մի քանի փոփոխականի ֆունկցիաների էքստրեմումները: **Թեմա 3՝** Անբացահայտ ֆունկցիաներ, դրանց գոյությունը և դիֆերենցելիությունը: **Թեմա 4՝** Կորագիծ և կրկնակի ինտեգրալներ, դրանց հաշվման եղանակները: **Թեմա 5՝** Մակերևութային և եռակի ինտեգրալներ, դրանց հաշվման եղանակները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց յուրաքանչյուրը՝ 2,5 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0101/B09. «ՀԱՆՐԱՀԱՇԻՎ» (5կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է վերջավոր չափանի գծային տարածությունների տեսության և դրանցում գործող գծային օպերատորների ուսումնասիրումը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գծային տարածության բազիսի, ենթատարածության, Էվլրիդեսյան և ունիտար տարածությունների գաղափարներ,
2. կիմանա գծային հավասարումների համակարգերի մի քանի փոփոխականի ընդհանուր լուծման գտնման մեթոդները
3. կկարողանա կիրառել գծային օպերատորների տեսության հիմնական դրույթները, դրանց մատրիցների կանոնական և Ժորդանյան նորմալ տեսքերի կառուցման եղանակները,

4. կկարողանա կիրառել քառակուսային ձևերի կանոնական (նորմալ) տեսքի կառուցման մեթոդները:

1. Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գծային տարածություններ: Գծային օպերատորներ: Թեմա 2՝
Գծային հավասարումների համակարգեր: Թեմա 3՝ Գծային օպերատորի սեփա-
կան արժեքները, գծային օպերատորի մատրիցի նորմալ տեսքը, մատրիցի
Ժորդանյան նորմալ տեսքը, մատրիցի Ժորդանյան նորմալ տեսքն իրական
թվերի դաշտի դեպքում: Թեմա 4՝ Ունիտար և Էվրիդեյան տարածություններ,
օրթոնորմալ բազիսներ, գծային հավասարումների համակարգերի լուծման
Լանցոշի ալգորիթմը, ունիտար (օրթոգոնալ) մատրիցներ, օրթոգոնալ լրացում,
նորմալ օպերատորները Էվրիդեյան տարածություններում, ունիտար
(օրթոգոնալ) օպերատորներ, հերմիտյան (սիմետրիկ) օպերատորներ: Թեմա 5՝
Քառակուսային ձևեր:

